

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
2016-2020 ԹԹ.**

ԶԵԿՈՒՅՑ

2016-2017 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԻՋԵՎԱՆ - 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	4
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	6
I. ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ.....	6
Ինդիք 1.1.....	6
Ինդիք 1.2.....	12
Ինդիք 1.3.....	22
Ինդիք 1.4.....	28
II. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.....	31
Ինդիք 2.1.....	31
Ինդիք 2.2.....	32
Ինդիք 2.3.....	33
III. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	36
Ինդիք 3.1.....	36
Ինդիք 3.2.....	41
IV. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԱԿՅԱԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ.....	42
Ինդիք 4.1.....	42
Ինդիք 4.2.....	46
Ինդիք 4.3.....	47
V. ՈՐԱԿՅԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ.....	48
Ինդիք 5.1.....	48
Ինդիք 5.2.....	51
VI. ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	53
Ինդիք 6.1. Զարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները՝ իրթանող կրթական միջավայր ապահովելու նպատակով:.....	53
Ինդիք 6.2.....	60
VII. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ.....	61
Ինդիք 7.1.....	61
Ինդիք 7.2.....	64
Ինդիք 7.3.....	66
VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ.....	67

Խնդիր 8.1.....	67
Խնդիր 8.2.....	68
Խնդիր 8.3.....	69
Խնդիր 8.4.....	73
ԻՎ. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՅՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	75
Խնդիր 9.1.....	75
Խնդիր 9.2.....	76

ՆԱԽԱԲԱՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը կրթական և գիտամշակութային գործունեություն իրականացնող հաստատություն է: Նրա առաքելությունն է նպաստել հանրապետության հյուսիսարևելյան սահմանամերձ գոտում գտնվող տարածաշրջանի տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի զարգացմանը:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը 2016-2017 ուստարում իր գործունեությունը կազմակերպել և իրականացրել է **ԵՊՀ ԻՄ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով** նախատեսված խնդիրներին ու նպատակներին համապատասխան: Համաձայն ՌԾ-ի մասնաճյուղը պլանավորում է իր գործունեությունը, որի գերակա նպատակն է ապահովել բարձրորակ կրթություն, իր գիտական հետազոտություններով, նորարարական ուսուցմամբ ժողովրդական հին ու նոր արհեստները արվեստին մոտեցնելու և կիրառելի դարձնելու հետևողականությամբ նպաստել տարածաշրջանում հայազիտության, հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և բնական գիտությունների ու մշակույթի զարգացմանն ու նորովի մատուցմանը: Մասնաճյուղը կարևորում է իր դերը տարածաշրջանում, իր արտաքին և ներքին շահակիցների ցանկությունները, գնահատում իր հնարավորությունները, կադրային ներուժը և կազմակերպում արդարացված և նպատակային ուսումնառություն:

ՌԾ-ով սահմանված ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված խնդիրների կատարումն ուղղված է մասնաճյուղում որակյալ կրթության ապահովմանը, արդիական բարձրակարգ հետազոտությունների և նորարարությունների իրականացմանը, հանրային ներգրավման և ծառայությունների զարգացմանը, որակյալ մարդկային ռեսուրսների կատարելագործմանը, որակյալ ենթակառուցվածքների ստեղծմանն ու բարելավմանը, որակյալ ծառայությունների տրամադրմանը, ընդունելության բազմազանեցման ընդլայնմանը և համապատասխանության բարձրացմանը, ֆինանսական կայունությանն ու կառավարման արդյունավետության բարձրացմանը, ռազմավարական գործակցության ամրապնդմանն ու գործունեության միջազգայնացման խթանմանը:

ՌԾ իրականացման ժամանակացույց-պլանով սահմանված են այդ խնդիրների համապատասխան գործողությունների կատարման ժամկետները և պատասխանատուները, պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսները և ակնկալվող արդյունքները:

Մասնաճյուղն իր ռազմավարությամբ ուսանողներին առաջարկում է համակողմանի գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ապահովող կրթական ծրագրեր, ձգտում է աշխատողներին և ուսանողներին տրամադրել բարձրորակ կրթություն և հետազոտություններ իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակակից ենթակառուցվածքներ և բարենպաստ միջավայր, իր գործունեության բոլոր բնագավառներում ապահովել որակի շարունակական բարելավում և այլն: Եվ Մայր բուհի անմիջական աջակցությամբ և հովանավորությամբ մասնաճյուղը տարածաշրջանում պատվով ծավալում է իր գործունեությունը:

ԵՊՀ ԻՄ-ի զարգացման **2016-20թթ. ռազմավարական ծրագրի 9** նպատակների իրականացման համար նախատեսված են 25 խնդիրներ 141 գործողություններով, որոնք ըստ

իրականացման պլան-ժամանակացույցի ներառված են մասնաճյուղի համապատասխան ստորաբաժանումների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլաններում:

ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական գործունեության 2016-17 ուստարվա ժամանակաշրջանն ամփոփելով՝ կարելի է նշել, որ մասնաճյուղը հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորված խնդիրները հիմնականում իրականացրել է, կան խնդիրներ որոնք իրականացվել են մասնակի՝ ներքին և արտաքին մի շարք գործոնների պատճառով:

Մասնաճյուղի ռազմավարական ծրագրի իրականացումը մասնաճյուղի ղեկավարության ուշադրության կենտրոնում է, գործընթացներն իրականացվում են ըստ պլան-ժամանակացույցի և ընթացքի մեջ են:

Ստորև ներկայացվում է 2016-2017 ուստարում այդ խնդիրների իրականացման առաջընթացը՝ համապատասխան գործողությունների և միջոցառումների կատարողականով:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

I. ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր՝ միտված շրջանավարտների աշխատանքային գործունակության բարելավմանը, բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից:

Խնդիր 1.1. Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ:

Գործողություն 1. Վերանայել բակալավրի կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող նորմատիվ փաստաթղթերը (առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար) (01-07.2016)

Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրեր մշակելու և իրագործելու կարևորությունը ԵՊՀ ԻՄ-ում պայմանավորված է առաջին հերթին փոփոխվող հասարակական պահանջունքներով: Ավելի են կարևորվում աշխատաշուկա մուտք գործող շրջանավարտների տեսական գիտելիքները և հատկապես գործնական հմտություններն ու կարողությունները:

Որպես սահմանամերձ ու մշտապես ռազմական իրավիճակում գտնվող մարզում բարձրագույն կրթություն իրականացնող ուսումնական հաստատություն մասնաճյուղը կարևորում է իր դերը տարածաշրջանում և իրականացնում խիստ հասցեային նպատակ հետապնդող ուսումնառություն: Անվիճելի իրողություն է, որ կրթությունը ներկա պայմաններում պետք է անմիջականորեն արձագանքի աշխատաշուկայի պահանջներին:

Այս գործողությամբ նախատեսված է վերանայել բակալավրի կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող նորմատիվ փաստաթղթերը (առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար): Այս խնդրի իրականացման գործընացը հետաձգվել էր՝ կապված «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ նոր օրենքում բակալավրի ծրագրի բովանդակության անհրաժեշտ նվազագույնի պահանջների փոփոխության հետ կապված: Այդ փաստաթղթերը վերանայվել են, որոնց համար հիմք են ծառայել ԵՊՀ-ի կադմից լրամշակված և ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ. մայիսի 4-ի նիստում հաստատված համապատասխան նորմատիվ փաստաթղթերը: Այդ փաստաթղթերից «ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» ղեկավար ձեռնարկը միասնական փաստաթուղթ է առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար, որով սահմանվում են բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը, ընդհանուր բովանդակությունը, ուսանողի բեռնվածությունն ըստ կիսամյակների, կառուցամասերի և կրթամասերի, ուսումնական աշխատանքի ձևերի, ծրագրի դասընթացների և կրթական այլ մոդուլների կազմն ու

աշխատածավալները՝ արտահայտված ECTS կրեդիտներով: Մասնաճյուղի **2017թ.-ի հունիսի 10-ի գիտական խորհրդի նիստում** հաստատվել են «**ԵՊՀ ԻՄ-ի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը**» և «**ԵՊՀ ԻՄ-ի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը**» փաստաթղթերը: Ըստ այդ փաստաթղթերի փոխվել է ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը, մասնավորապես, առկա ուսուցման ուսումնական կիսամյակի համար սահմանված 20 շաբաթից եթե նախկինում 16-ը հատկացվում էր տեսական ուսուցմանը, իսկ 4-ը՝ քննաշրջանին, ապա ներկա փաստաթղթի համաձայն՝ 15 շաբաթ հատկացվում է լսարանային պարապմունքներին, 2-ը՝ ընթացիկ քննություններին և ստուգարքներին, իսկ 3-ը՝ եզրափակիչ քննություններին:

Հեռակա ուսուցման ուսումնական կիսամյակի համար սահմանված 16-շաբաթյա տևողությունը հիմնականում բաշխվում է նախկինի պես՝ 4 շաբաթ հատկացվում է լսարանային պարապմունքներին, 8-ը՝ ինքնուրույն աշխատանքին, խորհրդատվություններին և ընթացիկ քննություններին, իսկ 4-ը՝ եզրափակիչ քննություններին: Ուսումնական վերջին (առկա ուսուցման՝ 8-րդ, հեռակա ուսուցման՝ 10-րդ) կիսամյակում լսարանային դասընթացներ նախատեսված չեն:

Աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր ունենանելու նպատակով էական փոփոխություններ է կատարվել կրթական ծրագրի կառուցվածքում: Նախկին 4 կառուցամասով ծրագրի փոխարեն ներկայացվել է 2 կառուցամասով ծրագիր: Այդ կառուցամասերը՝ ընդհանուր կրթական և մասնագիտական, համապատասխանաբար բաղկացած են պարտադիր և կամընտրական դասընթացներից: Ընդ որում, ընդհանուր կրթական կառուցամասում պարտադիր դասընթացները հիմնականում իրականացվում են 1-ին կուրսում և նպատակաուղղված են ուսանողների ընդհանրական (փոխանցելի) գիտելիքների և կարողությունների ձևավորմանը և զարգացմանը: Կամընտրական դասընթացների ընդհանուր աշխատածավալը 6 կրեդիտ է և ներառում է 2 կրեդիտանոց 3 դասընթաց, որոնք իրականացվում են 2-րդ կուրսում: Մասնագիտական կառուցամասը ներառում է պարտադիր մասնագիտական, կամընտրական կամ հատուկ մասնագիտական դասընթացներ և կրթական այլ մոդուլներ: Այս կառուցամասի կամընտրական դասընթացներն առկա ուսուցման համակարգում իրականացվում են 5-7-րդ, հեռակա ուսուցման համակարգում՝ 7-9-րդ կիսամյակներում: Կառուցամասային փոփոխություններով պայմանավորված և **շրջանավարտների աշխատանքային գործունակության բարելավման նպատակով** կատարվել է նաև դասընթաց-մոդուլների փոփոխություն: Այսպես, «Հայոց լեզու և գրականություն» դասընթացը փոխարինվել է «Հայոց լեզու և խոսքի մշակույթ»-ով, «Համակարգչից օգտվելու հմտություններ»-ը՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ»-ով և այլն: Ներմուծվել են «Կիրառական վիճակագրություն և տվյալների հետ աշխատանք», «Գործարարության հիմունքներ», «Սոցիոլոգիայի հիմունքներ» և այլ դասընթացներ:

Առանձնակի ուշադրություն է դարձվել բակալավրի ավարտական աշխատանքին, որի աշխատածավալը 12 կրեդիտից հասցվել է **20 կրեդիտի**: Բակալավրի ավարտական աշխատանքի կատարումը և հրապարակային պաշտպանությունը բակալավրի կրթական

ծրագրի ավարտական պահանջներից են, այն արտացոլում է տվյալ մասնագիտության շրջանակներում ուսանողի ձեռք բերած գիտելիքները կիրառելու և մասնագիտական ոլորտին առնչվող խնդիրներ բարձրացնելու ու լուծումներ առաջադրելու հմտությունները և հանդիսանում է ծրագրի անհատական և ամփոփիչ բաղադրիչը: Հետևաբար ավարտական աշխատանքի կատարմանը և գնահատմանը առանձնահատուկ ուշադրություն է դարձվում: Մասնաճյուղում մշակվել է **«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգը»**, որը քննարկվել է ամբիոններում, այնուհետև ստացված առաջարկությունների հիման վրա արված համապատասխան փոփոխություններով ներկայացվել է ԵՊՀ ԻՄ ԳԽ-ի հաստատմանը (հաստատվել է ԳԽ-ի 2017 թ. հոկտեմբերի 28-ի նիստում):

Գործողություն 2. *Ստեղծել բակալավրի կրթական ծրագրի ղեկավարի «ինստիտուտ»՝ ծրագրի պատշաճ մշակման և իրականացման նպատակով (01-07.2016):*

Մասնաճյուղում ներդրվել և արդյունավետ գործում է մասնագիտական կրթության կառավարման յուրահատուկ մոդելը՝ բակալավրի կրթական ծրագրի ղեկավարի «ինստիտուտ»-ը, որը մասնաճյուղում ստեղծել է ինքնազարգացող մանկավարժական միջավայր: Կրթական ծրագրի ղեկավարի ինստիտուտի ներդրման գործընթացները սկսվել են 2016թ.-ի փետրվարից: Մասնաճյուղի Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից քննարկման է ներկայացվել կրթական ծրագրի պատասխանատուների գործառույթների նախագիծ: Իսկ մասնաճյուղի **տնօրենի 01.09.2016թ. թիվ 128/132 հրամանով** նշանակվել են մասնաճյուղում գործող 10 կրթական ծրագրերի («Հայոց լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Պատմություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Տնտեսագիտություն», «Սերվիս», «Կիրառական արվեստ») պատասխանատուներ, իսկ տնօրենի 21.11.2016թ.-ի թիվ 203/1 հրամանով ստեղծվել են կրթական ծրագրեր մշակող աշխատանքային խումբ և 4 ենթախմբեր 2017-18 ուստարվա համար պլանավորված «Սոցիալական աշխատանք», «Զբոսաշրջություն», «Ֆինանսներ», «Իրգայն» նոր կրթական ծրագրերի համար, որոնց աշխատանքներն իրականացվել են համաձայն **«ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգ»**-ի (հաստատված՝ ԵՊՀ գիտխորհրդի 2014թ. հունվարի 30-ի որոշմամբ) ժամանակացույցի:

«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»-ում ներդրվել է «կրթական ծրագրի ղեկավար» բաժինը (բաժին 11), որում սահմանվել են կրթական ծրագրի պատասխանատուի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները: Իսկ բակալավրի կրթական ծրագրի պատասխանատուի «ինստիտուտի» ստեղծման շրջանակներում **ԵՊՀ ԻՄ առկա և հեռակա ուսուցման ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերով** (ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 08.04.2017թ. թիվ 23 նիստի որոշմամբ) կրթական ծրագրի պատասխանատուի համար նախատեսված է 30 ժամ ուսումնական բեռնվածություն

(ուստարվա համար, համաձայն ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի վերամշակված նորմերի՝ հաստատված ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ. մարտի 30-ի 6/2 որոշմամբ):

Կրթական ծրագրի ղեկավարի ինստիտուտի ներմուծումը նպատակ ունի ապահովել ծրագրի պատշաճ մշակման, իրականացման, մշտադիտարկման և վերանայման գործընթացը, մասնավորապես կրթական ծրագրի ղեկավարը.

- կազմում է նոր կրթական ծրագրի մշակման հայտ, որով հիմնավորում է ծրագրի ներդրման և հետագա իրականացման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը,
- ծրագիրը մշակող աշխատանքային խմբի հետ ձևակերպում է ծրագրի նպատակներն ու վերջնարդյունքները՝ որակավորումների ազգային շրջանակի և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան,
- կազմակերպում է ծրագրի փաստաթղթային փաթեթի մշակման գործընթացը, որին մասնակից է դարձնում նաև գործատուներին և արտաքին այլ շահակիցների,
- ապահովում է ծրագրի հրապարակայնությունն ու մասնագիտական կողմնորոշման աշխատանքները,
- ֆակուլտետի ղեկավարության հետ միասին կրթական ծրագիրը նախապատրաստում է հավատարմագրման:

Գործողություն 3. *Վերամշակել բակալավրի կրթական ծրագրերը՝ որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան (09.2016-04.2017):*

Այս գործողությամբ նախատեսված գործընթացները նշանակված կրթական ծրագրերի պատասխանատուների և կրթական ծրագրեր մշակող համապատասխան աշխատանքային խմբերի կողմից իրականացվել են պլանավորված ժամկետներում: Մասնաճյուղի Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը խորհրդատվություններով աջակցել է ստորաբաժանումներին՝ բակալավրի կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջանակին («**ՀՀ որակավորումների ազգային շրջանակ**» հաստատված՝ ՀՀ կառավարության 2016թ. հուլիսի 7-ի №714-Ն որոշմամբ) և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան վերանայման գործընթացում, բաժինը **կազմակերպել է** հանդիպում-դասընթացներ կրթական ծրագրերի ղեկավարների, ֆակուլտետների ղեկանների հետ հետևյալ թեմաներով «Կրթական ծրագրի պատասխանատուի գործառույթները», «ՀՀ Որակավորումների ազգային շրջանակ», «Բենչմարքինգ, ինչպես կատարել համեմատական վերլուծություն», «Ինչպես ձևակերպել կրթական ծրագրի վերջնարդյունքները»: Նրանց հետ քննարկվել են նաև կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխմանը վերաբերող հարցեր, նրանց մշտապես տրամադրվել են համապատասխան մեթոդական նյութեր:

Կրթական ծրագրերի պատասխանատուները և աշխատանքային խմբերը վերանայել են համապատասխան կրթական ծրագրերի վերջնարդյունքները, դրանք քննարկվել են

դասախոսների և բարձր կուրսերի ուսանողների հետ: Մշակված կրթական ծրագրերը տեղադրվել են մասնաճյուղի պաշտոնական կայքում՝ ըստ ֆակուլտետների (օրինակ, հումանիտար գիտությունների ֆակուլտետի բոլոր կրթական ծրագրերը տեղադրված են հետևյալ էլեկտրոնային հասցեում. <http://ijevan.yసు.am/education/faculties/humanities-sciences-faculty/bachelor-s-degree-program-directory/>) և 2017-18 ուստարվա ուսումնական գործընթացն սկսվել է վերանայված կրթական ծրագրերով:

Այս գործողության իրականացման ուղղությամբ հիմնական աշխատանքները մեկնարկել են 2017-18 ընթացիկ ուսումնական տարվա հոկտեմբերից և ընթանում են համաձայն «ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրերի վերամշակման վերաբերյալ» **ԵՊՀ ռեկտորի 2017թ. հոկտեմբերի 4-ի թիվ 172Ֆ13 հրամանի՝** սահմանված հստակ ժամանակացույցի: Նշված հրամանը, ժամանակացույցը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի փաթեթը ԵՊՀ Որակի կենտրոնի կողմից տրամադրվել է նաև մասնաճյուղին, որոնք տեղայնացվել են և մասնաճյուղում սկսված է 2018-19 ուստարվա կրթական ծրագրերի վերանայման և լրամշակման գործընթացը:

Փաստաթղթերի փաթեթը ներառել է «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգը», «ԵՊՀ մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը», «Կրթական ծրագրի մասնագրի և դասընթացի նկարագրիչների լրացման ուղեցույցը», առկա և հեռակա ուսուցման (առանձին-առանձին) մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի ուսումնական պլանի օրինակելի ձևաթերթերը, ԵՊՀ մագիստրոսի կրթական ծրագրի ստեղծման առաջարկի հայտի ձևաթերթը, ՀՀ կառավարության կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակը», ՀՀ ԿԳ նախարարի հրամանով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոս) մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկը:

Մասնաճյուղի տնօրենի 13.10.2017թ.-ի թիվ 240/3 հրամանով ի կատարումն ԵՊՀ ռեկտորի 2017թ.-ի հոկտեմբերի 4-ի թիվ 172/12 հրամանի ստեղծվել է ԵՊՀ ԻՄ բակալավրի 2018-19 ուսումնական տարվա կրթական ծրագրերի վերամշակումն արտոնող հանձնաժողով, հաստատվել է գործող կրթական ծրագրերի վերամշակման և հաստատման գործընթացների իրականացման ժամանակացույցը: Տնօրենի 31.10.2017թ.-ի թիվ 264/8,9,10,11,12,13,14,15,16,17 հրամանով հաստատվել են համապատասխանաբար «Դիզայն», «Ֆինանսներ», «Զբոսաշրջություն», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Պատմություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Հայոց լեզու և գրականություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Անզլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրերը վերամշակող աշխատանքային խմբեր: Այդ խմբերն ըստ հաստատված ժամանակացույցի արդեն մասնաճյուղի ՄԿՈԱ բաժին են ներկայացրել կրթական ծրագրերի առաջարկերի հայտերը: Գործընթացը շարունակվում է:

Գործողություն 4. *Վերանայել կրեդիտային համակարգով առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերը (09-10.2016):*

Մասնաճյուղի Ուսումնամեթոդական վարչությունում հիմք ընդունելով «ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»-ը (հաստատված ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ. մայիսի 4-ի թիվ 7 նիստում) վերանայել և լրամշակել են առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերը, դրանց հիմքի վրա կազմել է «ԵՊՀ ԻՄ բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»-ը փաստաթուղթը: Փաստաթղթի նախագիծը նախ քննարկվել է մասնաճյուղի բոլոր ֆակուլտետներում, այնուհետև, ըստ ստացված առաջարկությունների և կարծիքների կատարվել են փոփոխություններ, ապա փաստաթուղթը ներկայացվել է ԵՊՀ ԻՄ գիտական խորհուրդ հաստատման: **«ԵՊՀ ԻՄ բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը»** հաստատվել է ԵՊՀ ԻՄ ԳԽ 2017 թ. մայիսի 4-ի թիվ 7 նիստում: Այն գործողության մեջ է մտել 2017 թ. սեպտեմբերի 1-ից: Կարգը սահմանում է մասնաճյուղում առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնները, ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը և այլն:

Տարբեր ուսումնասիրությունների արդյունքում հավաքագրված առաջարկությունների և փորձի հիման վրա նոր կարգում փոփոխության են ենթարկվել ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատածավալը, սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը: Փոխություններ են կատարվել նաև քննությունների վերահանձնման և դասընթացի կրկնման գործընթացներում:

Ուսումնական աշխատանքների բարելավման նպատակով նոր կարգում տեղ են գտել պահանջներ ուսանողի անձնական գործի և ուսումնական քարտի, առցանց դասընթացի, պրակտիկայի կազմակերպման, կուրսային աշխատանքի պատրաստման և գնահատման վերաբերյալ և այլն: Կարգի առանձին կետեր վերաբերում են կամընտրական դասընթացների ընտրության ընթացակարգին, կրթական ծրագրի ղեկավարի գործառույթներին:

Գործողություն 5. *Մշակել և իրականացնել պրակտիկաների բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագիր՝ հատկացնելով անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսներ (09.2016-09.2017):*

Կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման գրավականներից է պրակտիկաների ճիշտ և նպատակային կազմակերպումը: 2016-17 ուստարվա սեպտեմբեր ամսին կրթական ծրագրերի պատասխանատուները համապատասխան ամբիոնների վարիչների և Ուսումնամեթոդական վարչության աշխատակիցների հետ համատեղ վերանայվել կամ կազմվել են ուսանողների գործնական հմտությունների, ինքնուրույն, ստեղծագործական և հետազոտական կարողությունների զարգացմանը միտված և կրթական ծրագրի նախանշված վերջնարդյունքներն ապահովող նպատակային պրակտիկաների ծրագրեր, որոնք ապահովում են նաև կապը կուրսային և ավարտական աշխատանքների

թեմաների հետ: Մշակված, հստակ կանոնակարգված ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաների ծրագրերը ներկայացվել են ՈԻՄՎ: Համաձայն այդ ծրագրերի և ըստ ուսումնական պլանների ՈԻՄՎ-ի կողմից մշակվել է 2016-17 ուստարվա բոլոր տեսակի պրակտիկաների իրականացման պլան ժամանակացույց, տարբեր կազմակերպությունների և հիմնական գործատուների հետ իրականացվել են փոխշահավետ համագործակցային հանդիպումներ, համալրվել են արտադրական պրակտիկաների անկացման վայրերը: Արտադրական պրակտիկայի վայրերն ընտրելիս հաշվի են առնվել աշխատաշուկայի պահանջները, ուսանողների նախասիրությունները, նաև ուսանողների առաջարկները, որոնք հավաքագրվել են տարբեր ուսումնասիրությունների միջոցով:

Հաշվետու ուստարում արտադրական և մանկավարժական պրակտիկա են անցել առկա ուսուցման 184 և հեռակա ուսուցման 207 ուսանողներ: Հատուկ ուշադրություն է դարձվել ուսումնական (դաշտային) պրակտիկայի կազմակերպմանը, իսկ որոշ ֆակուլտետների մի շարք պրակտիկաներ կազմակերպվել են մեկօրյա կամ 2-4 օր սևտոյությամբ ավտոբուսային երթուղիների ձևով ՀՀ տարածքում, ինչպես նաև քաղաքամերձ հետիոտն երթուղիներով: Ուսումնական պրակտիկա են անցել առկա ուսուցման 129 և հեռակա ուսուցման 105 ուսանողներ:

Նշենք, որ պրակտիկաների ծրագրերի վերանայման գործընթացը շարունակական է, դրանք պարբերաբար վերանայվում և լրամշակվում են պրակտիկաներից հետո, և մասնաձյուղում տարբեր ուսումնասիրությունների (հարցումների, ֆոկուս-խմբերի) միջոցով հավաքագրված խնդիրների և ուսանողների, դասախոսների և արտաքին շահակիցների առաջարկների հիման վրա: Հետևաբար այդ ուղղությամբ աշխատանքներն ընթացքի մեջ են:

Խնդիր 1.2. Բարելավել դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները:

Գործողություն 1. *Ակտիվացնել Երիտասարդ դասախոսների աջակցման և առաջավոր փորձի փոխանցման կենտրոնի աշխատանքները՝ դասախոսական կազմի մանկավարժական կարողությունները և հմտություններն արդիականացնելու ու զարգացնելու նպատակով (01.2016-12.2020):*

Մասնաձյուղի «Երիտասարդ դասախոսների աջակցման և առաջավոր փորձի փոխանցման կենտրոնի» աշխատանքները համակարգողը մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի հետ համատեղ **2016-17 ուստարվա կազմել են երիտասարդ դասախոսների և մասնագիտությունների կրթական ծրագրերի պատասխանատուների հետ** հանդիպումների և դասընթացների անցկացման գրաֆիկ՝ համապատասխան թեմաներով, յուրաքանչյուր դասընթացի համար նախապատրաստվել են անհրաժեշտ մեթոդական նյութեր և տրամադրվել են մասնակիցներին: Կենտրոնի աշխատանքների արդյունքում իրականացվել են 11 դաս-քննարկումներ, որոնք նպատակ ունեին զարգացնել, արդիականացնել և տեխնոլոգիապես ուժեղացնել դասախոսական կազմի մանկավարժական կարողությունները և հմտությունները, զարգացնել նրանց դասավանդման և ուսումնառության նորարարական հմտություններն ու կոմպետենցիաները և հետազոտության վրա հիմնված դասավանդման ունակությունները, երիտասարդներին փոխանցել փորձառու դասախոսների մանկավարժական փորձը, օժանդակել դասավանդման

և ուսումնառության նորարարական և տեխնոլոգիապես ուժեղացված տեսակների և մեթոդների մասին նրանց իրազեկվածության բարձրացմանը: Մասնավորապես, երիտասարդ դասախոսները կիսվել են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով դասավանդման իրենց ձեռքբերումներով: Դասընթացներն մշտապես անցել են բուռն քննարկումներով, ներկաների ակտիվ մասնակցությամբ:

1) «Դասախոսի փորձն ու մեթոդները դասախոսությունների և սեմինարների կազմակերպման ու անցկացման վերաբերյալ» դասընթացի (2016թ. դեկտեմբերի 9) շրջանակներում ներկայացվել է երեք բաղադրիչների (դասախոսություն, սեմինար և զեկուցում) հիման վրա դասը կազմակերպելու առավելությունները, հիմնավորեց դրանցից յուրաքանչյուրի կարևորությունը արդյունավետ դասավանդման և ուսումնառության գործընթացում, և որ դրանք առաջին հերթին պետք է ուղղորդվեն դեպի պրակտիկ գործունեություն, ընդգրկեն գործնական այնպիսի պարապմունքներ, քննարկումներ ու սեմինարներ, որոնք կնպաստեն ուսանողների գործնական հմտությունների ու կարողությունների զարգացմանը:

2) «Կրթական վերջնարդյունքների գնահատումը» դասընթացի (2016թ. դեկտեմբերի 12) շրջանակներում անդրադարձ է կատարվել կրթական ծրագրի վերջնարդյունքների գնահատման հետ առնչվող մի շարք առանցքային հարցերի. դասընթացի ակնկալվող արդյունքները, տերմինաբանությունը, գնահատումը և նրա մեջ ներառվող դրույթները, դրա շուրջ դասախոսի և ուսանողի տեսակետները, գնահատման փուլերը, մեթոդները, գնահատման շրջափուլը, գնահատման ծրագիրը: Դաս-քննարկման նպատակն էր երիտասարդ դասախոսներին աջակցել դասընթացների մոդուլների նկարագրիչների կազմման գործընթացում, մասնավորապես ինչպես գրել դասընթացի նկարագրությունը, ձևակերպել դասընթացի նպատակը, ձևակերպել կրթական վերջնարդյունքները, մշակել գնահատման պլան, որը նախանշում է կոնկրետ մեթոդները, որոնք պետք է օգտագործվեն ակնկալվող վերջնարդյունքները գնահատելիս: Դասընթացի ընթացքում մատնանշվել են գնահատման համար անհրաժեշտ հատկանիշները՝ օբյեկտիվությունը, հավաստիությունը և վստահելիությունը: Առանձնակի կարևորվել է հետադարձ կապի դերը ուսումնառության և մասնավորապես գնահատման գործընթացում:

Ներկայացվել և մեկնաբանվել են գնահատման մեթոդները՝ հայտորոշիչ (մինչև ուսուցումը), ձևավորող (ուսուցման ընթացքում), ամփոփիչ (ուսուցման ավարտին), միասնական, չափանիշային, վարկանիշային: Ցուցադրվել է գնահատման շրջափուլը:

Մանրամասն ներկայացվել և քննարկվել է, թե ինչպիսին պետք է լինի գնահատումը. այն պետք է ուղղված լինի ուսուցման բարձր չափորոշիչների ապահովմանը, ապահովի հավասարակշռությունը ամփոփիչ և ձևավորող գնահատումների միջև, ձևավորող գնահատումը ուսանողներին պետք է հնարավորություն տա պատրաստվել և պրակտիկա ձեռք բերել մինչև ամփոփիչ գնահատումը, տեղեկատվություն տա, թե որ չափով է ուսանողը կարողանում անել այն, ինչը նախատեսված էր ծրագրի ակնկալվող կրթական վերջնարդյունքներում:

3) «Մոդուլի (դասընթացի) վերջնարդյունքների մշակում» դասընթացի (2016թ. դեկտեմբերի 24) շրջանակներում անդրադարձ է կատարվել դասընթացի կառուցվածքին և

կրթական վերջնարդյունքների ձևակերպմանը: Մասնավորապես կարևորվել է, որ ՄԿԾ-ն կազմված է դասընթացներից, որոնցից յուրաքանչյուրն ապահովում է ՄԿԾ-ի մեկ կամ մի քանի վերջնարդյունք: Դասընթացի «կռից է» կախված դրա կրեդիտների քանակը՝ լսարանային և ինքնուրույն ժամաքանակի այն ծավալը, որն անհրաժեշտ է տվյալ դասընթացի վերջարդյունքները յուրացնելու համար:

Տրվել է դասընթացի կառուցվածքը, բացատրվել է դասընթացի նպատակի ճիշտ ձևակերպման անհրաժեշտությունը, որովհետև այն օգնում է ճիշտ ձևակերպել ակնկալվող ելքային արդյունքները:

Տրվել է կրթական վերջնարդյունքների (ակնկալվող ելքային արդյունքների՝ ԱԵԱ) ձևակերպումը և շեշտվել է, որ դասընթացի նպատակները պետք է համապատասխանեն ՄԿԾ-ի նպատակներին, դրանք ձևակերպելիս անհրաժեշտ է, որ դասախոսը կենտրոնանա ոչ թե այն բանի վրա, թե ինչ է փորձում իրականացնել, այլ արդյունքում ինչ կստանան ուսանողները: ներկայացվել են դասընթացի կրթական վերջնարդյունքների (ԿՎԱ) բնութագրերը:

Դասընթացը հնարավորություն է տվել երիտասարդ դասախոսներին տեղում գործնականորեն ցուցադրել դասընթացի ընթացքում ձեռք բերած գիտելիքները: Ըստ նախանշած քայլերի՝ դասախոսները տեղում ձևակերպել են դասընթացի կրթական վերջնարդյունքներ, քննարկման նպատակով բերվել են դրանց հաջող և անհաջող օրինակներ, բերվել են ակնկալվող ելքային արդյունքների գնահատման օրինակներ:

4) «Մասնագիտության կրթական ծրագրի մշակում» դասընթացի (2017թ. հունվարի 21) շրջանակներում ներկայացվել է, թե ինչպես ճիշտ ձևակերպել դասընթացի ռազմավարությունն ու մարտավարությունը, անդրադարձ է կատարվել վերջինիս հիմքում ընկած մեթոդների ընտրության խնդրին: Բացատրվել է, թե ինչպես ճիշտ կազմել կրթական վերջնարդյունքները (գիտելիք, կարողություն, հմտություն) և ակնկալվող ելքային արդյունքները, ինչպիսի բայեր է նպատակահարմար կիրառել: Մանրամասն ներկայացվել է գնահատման ընդհանուր ռազմավարությունը և ձևերը: Գնահատման մեթոդների կոնկրետ օրինակներով տրվել է ակնկալվող ելքային արդյունքների գնահատման ծրագիրը:

5) «Հասարակական կարծիքի դերը դասախոսական կոլեկտիվի բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորման մեջ» թեմայով դաս-քննարկման (2017թ. հունվարի 20) ընթացքում նախ մեկնաբանվել է թեմայի արդիականությունը և հրատապությունը լիարժեք դասախոսական գործունեության համար, ինչը համահունչ է կրթական բարեփոխումների բովանդակությանը, մասնավորապես՝ բուհում նոր ներդրված «Կրթական ծրագրի ղեկավար»-ի ինստիտուտի ակնկալվող գործունեությանը: Առանձնակի կարևորվել է մատուցվող նյութի հետ դասախոսի անձնական նկարագրի ներդաշնակելիության, դասախոսական կոլեկտիվում ոչ պաշտոնական հարաբերությունների ներուժը մասնագիտական կրթության արդյունավետ կազմակերպմանը ծառայեցնելու խնդիրները: Ընդգծվել է, որ նման խնդիրների լուծման հարցում կարևոր դեր ունի ամբիոնում և ֆակուլտետում ձևավորվող համարժեք ու խրախուսող հասարակական կարծիքը: Հակիրճ ներկայացվել է սոցիալական տարբեր մակարդակներում հասարակական կարծիքի ձևավորման և գործառնական յուրահատկությունները, հասարակական կյանքի տարբեր բնագավառներում (քաղաքական,

արտադրական, կրթական) նրա կիրառման պատմությունը: Պարզաբանվել են հասարակական կարծիքի հետազոտման մասնագիտական նրբությունները (մասնավորապես՝ հետազոտման արդյունքների ներկայացուցչության, հավաստելիության խնդիրները), սոցիոլոգ-հոգեբանի, լրագրության, բարոյականության կապը ստացված տվյալների, դրանց հրապարակման ու օգտագործման հետ: Հատուկ ուշադրություն է դարձվել հավաստի հասարակական կարծիքի ձևավորման մեջ դասախոսների աշխարհայացքի, տարածաշրջանային, հանրապետական ու ազգային յուրահատկությունների նշանակությանը:

Երիտասարդ դասախոսներին մասնավորապես հետաքրքրում էր, թե ինչպես է հնարավոր հավաստի հասարակական կարծիքը տարբերել կեղծ լուրերից, որքանով են արդարացված հասարակական կարծիքի ուսումնասիրությունները հանրապետությունում, ինչպես են լուծվում դրանց ֆինանսավորման խնդիրները, ինչպես է հնարավոր շահարկել հասարակական կարծիքի ուսումնասիրություններն ու դրանց արդյունքների օգտագործումը:

6) «Դասախոսի իմիջը» թեմայով դաս-քննարկման (2017թ. հունվարի 26) ընթացքում մեկնաբանվել է իմիջի գաղափարը, մասնավորապես այն ներկայացվել է որպես մարդու կերպար, որ ձևավորվում է ուրիշի աչքերով, դա մարդու այցեքարտն է, պատկերացումը, որ ընկալվում է շրջապատի կողմից և նշանակալիորեն տարբերվում է նրա իրական անձնային որակից: Ներկայացվել են ժամանակակից գիտության մեջ տարբերակվող իմիջի տեսակները, նրանց **ձևավորման հիմքերը**: Կարևորվել են դեմքի արտահայտությունը, ժպիտը, բարյացկամությունը, **լեզվախոսքային իմիջը**, որի մեջ մտնում են ձայնը, տոնայնությունը, ելևէջումները, բառապաշարը, խոսքի արտահայտչականությունն ու պատկերավորությունը, հումորի զգացումը և այլն, **դասախոսին բնութագրող հետևյալ հատկանիշները՝** դասավանդվող առարկայի գերազանց իմացությունը, գիտական պատրաստվածությունը, կրթվածությունը, առարկայի մեթոդաբանությունը, դասավանդման արվեստը, անձնական մանկավարժական տաղանդը, ստեղծագործ միտքը, մանկավարժական տակտն ու վարվելակերպի էթիկան, հատուկ ընդգծվել են **դասախոսի «բարոյական» հատկությունները՝** անկողմնակալությունը, արդարամտությունը, ուսանողների հանդեպ իսկական սերը, նրբազգացությունը, ինքնակատարելագործման շարունակական մղումը և այլն:

7) «Բուհական մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրները» թեմայով դաս-քննարկման (2017թ. փետրվարի 20) շրջանակներում բացատրվել է դիդակտիկայի (հունարեն՝ διδακτικός-ուսուցանող. մանկավարժության բաժին, որը մշակում է ուսուցման և կրթության տեսությունը) տարբերությունը դպրոցում և բարձրագույն ուսումնական հաստատությունում: Ներկայացվել է, որ դիդակտիկան սահմանում է կրթության բովանդակությունը նրա տարբեր աստիճաններում (տարրական, միջնակարգ, բարձրագույն), հիմնավորում ուսուցման սկզբունքները, մեթոդները, կազմակերպական ձևերը, բացահայտում արդյունավետ ուսուցման ու կրթության օբյեկտիվ օրինաչափությունները: Հիմնավորվել է, որ ուսուցման մեթոդի արդյունավետությունը կախված է նրանից, թե որքանով է ուսուցման նպատակը (կրթողական, դաստիարակող, զարգացնող) համապատասխանում վերջնարդյունքին: Քննարկվել են ուսուցման սկզբունքները (գիտակցականության, զննականության, մատչելիության, հաջորդականության և այլն),

հիշատակվել դիդակտիկայի «ուսկե կանոններ»-ը (ուսուցանելիս հեշտից դժվարին անցնելը, կոնկրետից՝ վերացականի, ծանոթից՝ անծանոթին և այլն):

Նաև անդրադարձ է կատարվել կրթական և առարկայական ծրագրերի առանձնահատկություններին, դասընթացների միջառարկայական, ներառարկայական կապերին, գնահատման համակարգի հետ կապված մի շարք խնդիրների:

8) «Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաները» թեմայով դաս-քննարկման (2017թ. մարտի 23) ընթացքում ներկայացվել են մանկավարժական արդի տեխնոլոգիաների տեսական հիմունքները, դասակարգվել տեխնոլոգիաները, նշվել են մասնավորապես հումանիտար տեխնոլոգիաների առանձնահատկությունները, ապա մեկնաբանվել ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների բովանդակության, ընտրության և դրանց կիրառման վերաբերյալ հարցեր:

9) «Դասախոսի մասնագիտական հաղորդակցման հոգեբանական հիմունքները» թեմայով դաս-քննարկման (2017թ. ապրիլի 14) շրջանակներում ներկայացվել է հաղորդակցման 3D մոդելը (կոմունիկացիա, ինտերակցիա, պերցեպցիա), այն է պետք է ճիշտ կառուցել հարաբերությունները ուսանողի հետ և հատկապես գիտակցել նրա սոցիալական դերը, չպետք է անձնական խնդիրները դրսևորել ուսանողի մոտ: Դասախոսը պետք է լսարան մտնի՝ ձերբազատված բոլոր տեսակի հոգսերից, լինի անկանխակալ, պահպանի բարձր տրամադրությունը և ակտիվությունը, չպետք է սեփական կարծիքը, պատկերացումները, համոզմունքները թելադրի և ստիպի ուսանողին ընդունել դա: Անհրաժեշտ է ուսանողներին մղել ինքնուրույնության և նախաձեռնողականության, չմիջամտել նրանց անձնական կյանքին:

10) «Օտար լեզվի ուսումնառության ընթացքում կիրառվող ստուգման ինովացիոն տեխնոլոգիաները» թեմայով դաս-քննարկման (2017թ. մայիսի 11) ընթացքում ներկայացվել է վերջին ժամանակաշրջանում կրթության ոլորտում կատարվող արմատական փոփոխությունները՝ ընդգծելով, որ կրթության որակի ստուգման տեխնոլոգիաների վերանայման հարցն առաջադրում է նոր բարեփոխումներ, որոնց գերակա նպատակը կրթական դաշտի ձևավորումն է: Ստուգման ինովացիոն արդյունավետ մեթոդներից ներկայացվեց **քեյս սթադի** մեթոդը, որն առաջին անգամ կիրառվել է Հարվարդի համալսարանում 1924թ., և մինչև օրս Հարվարդը համարվում է քեյս-արտադրության առաջատարն ամբողջ աշխարհում: Այս մեթոդի առանձնահատկությունն է իրական կյանքից վերցրած փաստերի հիման վրա խնդրահարույց իրավիճակի ստեղծումը: Ստեղծվելով իբրև տնտեսական առարկաների ուսումնասիրության մեթոդ՝ այն ներկայումս լայն կիրառություն ունի բժշկության, իրավագիտության, օտար լեզուների և այլ գիտությունների ուսումնասիրման գործընթացում: Այս մեթոդի շնորհիվ ուսանողները հնարավորություն ունեն դրսևորել և կատարելագործել իրենց վերլուծական և գնահատող հմտությունները, սովորել կատարել թիմային աշխատանք և գտնել առաջադրված խնդիրների՝ հնարավորինս ռացիոնալ լուծումներ: Քեյսերն օգտագործվում են ոչ միայն ուսուցման հաջորդական փուլերի ընթացքում, այլև ուսուցման արդյունքների գնահատման դեպքում:

11) «Բուհում ուսուցման հոգեբանական միջոցները՝ խոսքի մշակույթ, խոսքի ընկալում, խոսքը որպես համոզիչ միջոց» թեմայով դաս-քննարկման (2017թ. մայիսի 23) շրջանակներում

ներկայացվել են ուսուցման հոգեբանական միջոցները՝ կարևորելով հատկապես խոսքային հաղորդակցումը: Քանի որ դասախոս-ուսանող փոխգործակցությունը լսարանում հաղորդակցական (կոմունիկացիոն) գործընթաց է, ապա դրա ճիշտ կազմակերպումը կարող է խթանիչ դեր ունենալ անձի վարքի կարգավորման համար: Իսկ ճարտասանական խոսքը մենախոսության տեսակ է՝ ուղղված բազմամարդ լսարանին, որն ունի որևէ բան հաղորդելու, որևէ բանում համոզելու, նաև հաճույք պատճառելու նպատակ, հետևաբար յուրաքանչյուր դասավանդող պարտավոր է իր կարողությունների չափով տիրապետել ճարտասանության հինգ բաժիններին (պրոբլեմ, հարցադրում), դասավորություն, ճոխաբանություն, հիշողություն, արտասանություն:

Գործողություն 2. *Ջարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը (01.2016-12.2020):*

Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղում պրոֆեսորադասախոսական, վարչատնտեսական և ուսումնասօժանակ անձնակազմի խրախուսումն իրականացվել է մի քանի ընթացակարգերի միջոցով՝ «ԵՊՀ ԻՄ-ում երիտասարդ դասախոսների խրախուսման կզմակերպման» կանոնակարգի (ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 12.10.2010թ. նիստ), «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի աշխատակիցներին խրախուսելու կարգ սահմանելու մասին» կանոնակարգի (ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 25.12.2014թ. նիստ), ինչպես նաև իրենց նորարարական, ստեղծագործական և գիտամանկավարժական ակտիվ գործունեության համար տնօրենի հրամանով դասախոսների պարգևատրման միջոցով:

2010թ. հոկտեմբերից մասնաճյուղում գործում է **«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում երիտասարդ դասախոսների խրախուսման կազմակերպման կանոնակարգը»**, որը սահմանում է մասնաճյուղի երիտասարդ դասախոսների խրախուսման ողջ գործընթացը, նրա կարգավորման ենթակա խնդիրները: Երիտասարդ դասախոսները խրախուսվում են հետևյալ չափանիշներով.

- դասախոսը մասնակցել է որակավորման բարձրացման կրթական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, մասնաճյուղում կազմակերպվող գիտագործնական և հետազոտական աշխատանքներին,
- ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքով ստացել է բարձր գնահատական,
- հասարակության, արտաքին շահառուների, ինչպես նաև աշխատանքային կոլեկտիվի անդամների կողմից բնութագրվում է դրական կողմերով:

Դասավանդման որակի շարունակական բարելավման նպատակով աշխատակիցների գործունեության գնահատման համար մասնաճյուղում 2014թ. դեկտեմբերից ներդրված է **«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի աշխատակիցներին խրախուսելու կարգ սահմանելու մասին»** կանոնակարգը (ԳԽ 25.12.2014թ.): Այդ կանոնակարգում առանձին տեղ է հատկացվել պրոֆեսորադասախոսական կազմի խրախուսման չափանիշներին: Նյութական խրախուսման համար աշխատակիցների գործունեության գնահատումն իրականացվում է 20

միավորանոց համակարգով, ըստ սահմանված չափանիշների: Ըստ այդ կանոնակարգի, դասախոսը միավոր է ձեռք բերում ուսումնամեթոդական հետևյալ աշխատանքների խրախուսման դեպքում.

- Դասագրքի, ուսումնական կամ ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակման համար /ամբողջ ուսումնական տարվա ընթացքում/,
- «Դասընթացի փաթեթի» (պորտֆոլիոյի) մշակման, նոր դասընթացի իրականացման համար /կիսամյակի ընթացքում/,
- Ուսումնառության ժամանակակից ակտիվ, իներակտիվ նաև տեղեկատվական մեթոդների կիրառման համար (համապատասխան մեթոդական ուղեցույցի առկայությամբ)
- Բուհական ուսանողական կոնֆերանսների, սեմինարների, տարբեր օլիմպիադաների, մրցույթների կազմակերպման համար,
- Ֆակուլտետի խորհրդի կողմից լավագույն համարված բաց դասի համար,
- Դասալսումների արդյունքում ամբիոնի վարիչի տված բարձր գնահատականի և մասնագետ գործընկերների հատուկ կարծիքների համար,
- Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումից ստացած լավ գնահատականի համար:
- նրա գիտական գործունեությունը բնութագրող բարձր պարամետրերի համար,
- հասարակական ակտիվ գործունեության համար և այլն:

Բացի այդ համաձայն դեկանների կամ ամբիոնների վարիչների զեկուցագրերի տնօրենի հրամանով պարգևատրվում են այն դասախոսները, որոնք իրենց դասընթացների իրականացման ժամանակ կիրառում են նոր, առաջադեմ, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ դասավանդման և ուսումնառության մեթոդներ, ու դրանք ներկայացնում են իրենց կոլեգաներին բաց դասերի միջոցով:

Խրախուսման կիրառվող մեխանիզմները նպաստում են ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների արդյունավետ ներդրմանը, իսկ առանձնահատուկ խրախուսվում են դասավանդման նորարարական մեթոդները հաջողությամբ կիրառող դասախոսները:

ԵՊՀ ԻՄ-ի դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոնը նախատեսում է մշակել առաջավոր մանկավարժական փորձի խրախուսման և տարածման նոր մեխանիզմներ, սահմանել ամենամյա մրցանակներ՝ դասավանդման նորարարական մեթոդները հաջողությամբ կիրառող դասախոսների խրախուսման համար:

Այս գործընթացը շարունակական է, մասնաճյուղում մշակվում է ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը նպաստելու համար դասախոսների մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման նոր մեխանիզմների նախագիծ: Մասնավորապես մշակվել է «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգ»-ի նախագիծը: Համաձայն նախագծի՝ մասնաճյուղի աշխատողներին լրավճար է տրվելու դասախոսների գիտահետազոտական

գործունեության որոշ տեսակների (հողվածի, մենագրության տպագրման, դոկտորականատենախոսության, հայցորդի կամ ասպիրանտի ատենախոսության ղեկավարման, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչման) համար, ուսումնամեթոդական գործունեության որոշ տեսակների (ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդով երաշխավորված դասախոսությունների կամ ուսումնական (ուսումնամեթոդական) ձեռնարկի՝ ԵՊՀ ԻՄ համացանցային պորտալում տեղադրման, ՀՀ ԿԳՆ կողմից երաշխավորված բուհական դասագրքի հրատարակման, ԵՊՀ ԻՄ-ում օտարալեզու կրթական մոդուլի ներդրման, տարբեր օլիմպիադաների կազմակերպման և ուսանողների նախապատրաստման) համար, նաև ուսանողական հարցման արդյունքներով անցկացվող մրցույթի արդյունքներով: Նախագիծը մասնաճյուղի համապատասխան օղակներում քննարկվելուց և վերանայվելուց հետո 2018թ.-մարտից կներկայացվի ԵՊՀ ԻՄ գիտական խորհուրդ հաստատման համար:

Գործողություն 3. *Կրթափորձի կարգով ներդնել արդյունահեն և ձևավորող (ֆորմատիվ) գնահատման նոր ձևեր՝ հիմնված ակնկալվող կրթական վերջնարդյունքների գնահատման վրա: Ստեղծել համապատասխան մեթոդական հենք և ձեռնարկներ (09.2019-12.2020):*

Գործողություն 4. *Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման (փոխկապակցման) ժամանակակից փորձը՝ բակալավրի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով (01.2016-12.2020):*

Մասնաճյուղի Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի մասնագետների անմիջական աջակցությամբ կրթական ծրագրերի պատասխանատուները վերանայել են գործող ծրագրերի կրթական վերջնարդյունքները ՈԱՇ-ի պահանջներին և միջազգային առարկայական հենանիշերին համապատասխան, դասախոսների և 4-րդ կուրսի ուսանողների հետ կազմակերպել են դրանց քննարկումներ: Այնուհետև համապատասխանեցվել են ծրագրի և նրա բաղկացուցիչ մասը կազմող դասընթացների կրթական վերջնարդյունքները, կազմակերպվել են դասավանդման, ուսումնառության և հետազոտության փոխկապակցման ժամանակակից փորձի և բակալավրի կրթական ծրագրերում դրանց կիրառման հնարավորության ուսումնասիրություններ և քննարկումներ, մասնավորապես քննարկումներ են կատարվել բենչմարքինգի իրականացման վերաբերյալ, ապա վերանայվել են կրթական վերջնարդյունքների ձևավորման համար ընտրված դասավանդման և ուսումնառության մեթոդները:

Հաշվետու ուստարում ՄԿՈԱ բաժնի կողմից տարբեր մեթոդներով ուսումնասիրվել է, թե մասնաճյուղի դասախոսական կազմն ինչպես է իրականացնում ուսումնառության և հետազոտության ինտեգրումը, կատարվել է արդյունքների վերլուծություն, նշվել են խնդիրները, արդյունքներն ուղարկվել են համապատասխան ստորաբաժանումներին: Դասախոսները ուսումնառության և հետազոտության ինտեգրումն իրականացնում են իրենց գիտահետազոտական գործունեության արդյունքները ներառելով դասախոսություններում, տպագրված կամ էլեկտրոնային նյութերը տեղադրելով ամբիոնում և մասնաճյուղի գրադարանում, տարածում են էլեկտրոնային համապատասխան կայք էջերի միջոցով՝ յադ

մասին տեղեկացնելով ուսանողությանը, իսկ ամենակարևորը՝ պրակտիկաների ընթացքում և ուսանողների հետ արտալսարանային շփումների միջոցով:

Պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում առցանց հարցման միջոցով կատարված ուսումնասիրությունների արդյունքների համաձայն՝ դասախոսների 78 %-ն իր գիտական գործունեության արդյունքները ներառում է դասախոսություններում, դասընթացները կազմակերպվում են բավարար մակարդակի հետազոտական տարրի ընդգրկմամբ՝ դրա միջոցով ուսումնառության ընթացքում ուսանողի մեջ ձևավորելով վերլուծական և քննադատական հմտություններ:

Գործողություն 5. *Իրականացնել դասընթացների փաթեթների (պորտֆոլիոների) կիրառումը բոլոր դասընթացների համար՝ ավելացնելով դասախոսի կողմից կիրառվող որակի ապահովման մեխանիզմները (01.2016-12.2018):*

2014թ. սեպտեմբերից մասնաճյուղում կիրառվում են դասընթացների փաթեթները (պորտֆոլիոները): Մասնաճյուղի Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից մշակվել և 2014թ.-ի մայիսից պրոֆեսորադասախոսական կազմին է տրվել դասընթացի փաթեթ (պորտֆոլիո) կազմելու մեթոդական ուղեցույցը:

Գասընթացների փաթեթների ներմուծումը նպատակ ունի համակարգել դասախոսի գործունեությունը յուրաքանչյուր դասընթացի շրջանակներում, պլանավորել դասընթացի ուսուցման արդյունավետ ու տրամաբանական կազմակերպումը, իրականացնել դասընթացից դասավանդողի ու ուսումնառողի ձեռքբերումների գնահատումը, կազմակերպել անհրաժեշտ փաստաթղթերի նպատակային հավաքագրում, որը ծառայում է դասախոսին որպես սեփական գործունեության անդրադարձի (ռեֆլեքսիայի) միջոց և նրա արդյունքների ներկայացումը՝ որպես կոմպետենտության ընթացիկ գնահատման կամ շուկա դուրս գալու մրցունակության ցուցադրման միջոց: Այն կիսամյակի ավարտին արտացոլում է դասախոսի և ուսանողների գործունեությունը, ներկայացնում ամրագրված մեխանիզմները, առանձնացնում դրանցից արդյունավետները, կամ նշում նրանք, որոնք իրենց չեն արդարացրել:

Փաթեթում իր կարևոր տեղն ունի դասընթացի ավարտին ակնկալվող **վերջնարդյունքների ձևակերպումը** կոմպետենցիաների տերմիններով. այսինքն, ուսանողի կողմից ձեռք բերվող գիտելիքները, որոնք ընդգրկում են տվյալ դասընթացի հիմնական գաղափարների, խնդիրների, նպատակների, սկզբունքների իմացությունը, ձևավորվող մասնագիտական հմտությունները, որոնք ապահովում են գիտության ժամանակակից տեսությունների և հետազոտական տարբեր տեխնոլոգիաների իմացության հաշվին հավաքագրել, համադրել և վերլուծել մասնագիտական տարաբնույթ տվյալներ և իրավիճակներ, ձևավորվող ընդհանրական կարողությունները, որոնց համախումբը ուսանողին աջակցում է իրականացնել անհատական և խմբային աշխատանքներ, քննարկումներ, կատարել քանակական և որակական վերլուծություններ, հանդես գալ զեկուցումներով և այլն:

Փաթեթում կրթական վերջնարդյունքների ձևավորման գործընթացն ավարտուն ներկայացվում է կրթական վերջնարդյունքների ձևավորման քարտեզում (թեմաների կրթական վերջնարդյունքների միջոցով դասընթացի կրթական վերջնարդյունքների ապահովման աղյուսակում): Այն կարևորագույն փաստաթուղթ է, որն ակնառու կերպով ցույց է տալիս, թե ինչպես է թեմաների միջոցով իրականացվում դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը և ինչպես են վերջիններս շաղկապված դասընթացի բաղկացուցիչ մաս հանդիսացող թեմաների հետ:

Բացի դասընթացի և դասընթացի յուրաքանչյուր թեմայի բարեհաջող ավարտին ուսանողի կողմից ձեռք բերվող կրթական վերջնարդյունքներից փաթեթը պարունակում է նաև դասընթացի վարման ռազմավարությունը (ստրատեգիան) և մարտավարությունը (տակտիկան), դրանցով պլանավորվում է դասընթացի ուսուցման արդյունավետ ու տրամաբանական կազմակերպումը, իրականացվում է դասընթացից դասավանդողի ու ուսումնառողի ձեռքբերումների գնահատումը և միտված է ոչ միայն ուսանողի գնահատմանը, այլև նրա անհատական մասնագիտական աճի ապահովմանը: Փաթեթներում առանձնահատուկ տեղ է հատկացված ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպմանը և գնահատմանը:

Ըստ իրենց բովանդակության և ժամանակագրության՝ պորտֆոլիոյի փաստաթղթերը դասակարգվում են երեք բաժիններում.

Բաժին 1. Փաստաթղթեր, որոնք ներառվում են դասընթացը սկսվելուց առաջ,

Բաժին 2. Փաստաթղթեր, որոնք ներառվում են դասընթացի իրականացման ընթացքում,

Բաժին 3. Փաստաթղթեր, որոնք ներառվում են դասընթացի ավարտից հետո:

Առայժմ գործառության մեջ է դասընթացների փաթեթների առաջին բաժինը, որի ներդրումն ամբողջությամբ կավարտվի 2018թ. փետրվարին: ՄԿՈԱ բաժնի կողմից ընթացքի մեջ է դասընթացների փաթեթների ուղեցույցի 2-րդ և 3-րդ բաժինների մշակումը: Պլանավորվել է ուղեցույցը ներկայացնել 2018թ.-ի մայիսին, այն գործողության մեջ կդրվի 2018թ.-ի սեպտեմբերից՝ 2018-19 ուստարվա համար:

Գործողություն 6. *Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ (այդ թվում՝ ավարտական աշխատանքների) գրագողությունը կանխելու նպատակով (01.2016-12.2020):*

Այս գործողությունը ՌԾ-ի մեկնարկային գործընթացներից է, որի իրականացման ուղղությամբ որոշակի աշխատանք է ձեռնարկվել: Դեռևս 2015թ.-ի դեկտեմբերից մասնաձյուղում ներդրվել է մասնաձյուղի ակադեմիական ազնվության սկզբունքները, չափանիշները, ակադեմիական ազնվության դրսևորումները և դրանց կանխարգելման կարգը (**«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաձյուղի ակադեմիական ազնվության»** կանոնակարգ, ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2015թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստ): Ակադեմիական ազնվությունը սահմանվում է որպես հինգ հիմնարար արժեքների՝ ազնվության, վստահության, անկեղծության, հարգանքի և պատասխանատվության պահպանման պարտավորություն՝ անկախ իրավիճակից: Այն

անհրաժեշտ է մասնաճյուղի առաքելության և հիմնական նպատակների արդյունավետ իրականացման, ազնիվ և փոխադարձ վստահության մթնոլորտի ապահովման, դասական համալսարանական միջավայրի ձևավորման և որակյալ կրթական ծառայությունների տրամադրման համար: Ակադեմիական ազնվություն նշանակում է կատարել ակադեմիական բոլոր աշխատանքներն առանց գրագողության, խաբեության, ստելու, խարդախության, գողության, առանց ստանալու այլ անձանցից արգելված օգնություն կամ օգուվելու տեղեկատվության ցանկացած աղբյուրից, որը հանրամատչելի չէ: Ակադեմիական անազնվություն նշանակում է դիտավորյալ կերպով այլ անձի փոխարեն կատարել կամ փորձել կատարել կամ օգնել այլ անձին կատարելու ցանկացած ակադեմիական աշխատանք, որը չի համապատասխանում ակադեմիական ազնվության սկզբունքներին: Մասնաճյուղի ֆակուլտետների ղեկանները յուրաքանչյուր նոր աշխատակցի կամ ուսանողի ծանոթացնում են սույն կարգի հետ, ներկայացնում են ակադեմիական ազնվության չափանիշները և դրանց խախտման հետևանքները, զգուշացնում են, որ ակադեմիական անազնվություն դրսևորելը պատժելի է:

Այս գործողության շրջանակներում կատարված քայլերից է մասնավորապես **«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ»**-ի մշակումը (ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2017թ. հոկտեմբերի 28-ի թիվ 27 նիստ):

Վերոնշյալ կարգով հստակեցվել է ավարտական աշխատանքների պատրաստման և գնահատման գործընթացները, մտցվել են դրանց կատարման ընթացքի մոնիթորինգի մեխանիզմներ, գնահատման չափանիշներ և չափորոշիչներ: Մասնավորապես, փաստադուրծն ընդգրկում է ավարտական աշխատանքի օրինակելի կառուցվածքը և կառուցվածքին և ձևավորմանը ներկայացվող պահանջները, պատրաստման և պաշտպանության ժամանակացույցը, գնահատման չափանիշները, չափորոշիչները և հատկացվող միավորները, ավարտական աշխատանքի տիտղոսաթերթի ձևավորման, աշխատանքի պաշտպանության երաշխավորման և գրախոսության ներկայացման ձևաթղթերը:

Գրագողությունը կանխելու նպատակով կարգում ամրագրվել է գրագողության հայտնաբերման դեպքում կանխարգելիչ քայլեր (կարգի 4.5 և 4.6 կետեր), նախնական պաշտպանության ընթացքում գրագողության հայտնաբերման դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն, որը ներկայացվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին, իսկ հրապարակային պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է «անբավարար»:

Ընթացքի մեջ է գրագողությունը կանխելու նպատակով ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմների, ապա նաև առաջարկված մեխանիզմների արդյունավետության գնահատման ցուցիչների մշակման գործընթացը:

Խնդիր 1.3. Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների գործունեության արդյունավետությունը:

Գործողություն 1. Որակի ապահովման ուսանողական հանձնաժողովների հիման վրա ստեղծել կրթական ծրագրերի ուսանողական հանձնաժողովներ՝ ուսանողական հարցումների արդյունքներին հետամուտ լինելու և ծրագրերի որակի վերաբերյալ հետադարձ կապն ապահովելու համար (01-09.2016 3-րդի հետ միասին):

2016 թվականի նոյեմբեր-2017 թվականի հունվար ամիսներին ՄԿՈԱ բաժնի կողմից **կազմակերպվել և իրականացվել են** աշխատանքներ կրթական ծրագրերի 11 ուսանողական խմբերի (հիմնականում 4-րդ կուրսի ուսանողներ) հետ՝ **Խմբային բանավեճի** կամ, այսպես կոչված **«Ֆոկուս-խմբի»** մեթոդով, որի նպատակն էր ազատ և անկաշկանդ մթնոլորտում քննարկել ուսանողներին հուզող տարբեր հիմնահարցեր, հետամուտ լինել ուսանողական հարցումների արդյունքներին, ապահովել կրթական ծրագրերի որակի վերաբերյալ հետադարձ կապը, այդ խմբերի անդամներին ծանոթացնել կրթության որակի վերաբերյալ ուսումնասիրություններ կատարելու տեխնիկային, նրանց մոտ ձևավորել վերլուծություններ կատարելու հմտություններ: Հանդիպումների 2-3 ժամվա ընթացքում բաժնի մասնագետները անց են կացրել զրույց-քննարկումներ, որոնց արդյունքները գրանցվել են, ապա կատարվել է դրանց վերլուծություն, դուրս են գրվել ուսանողների առաջ քաշած խնդիրները, առաջարկները, ապա ամփոփ ներկայացվել են կրթական գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկներ: Այդ առաջարկները ներկայացվել են համապատասխան ստորաբաժանումներին՝ ֆակուլտետների ղեկաններին, ամբիոնների վարիչներին, կրթական ծրագրերի պատասխանատուներին, Ուսումնամեթոդական վարչությանը, շրջանավարտների և կարիերայի կենտրոնին, Ուսանողական խորհրդին:

Անցկացրած քննարկումների արդյունքների վերլուծությունը հաշվետվության տեսքով տեղադրվել է կայքում:

2017 թվականի ապրիլին մանկավարժական պրակտիկայից ավարտից հետո **հանդիպումներ են իրականացվել** ֆոկուս-խմբերի հետ (ավարտական կուրսերի ուսանողների հետ) պրակտիկայի արդյունավետության վերաբերյալ լրացուցիչ քննարկումներ անցկացնելու նպատակով: Այդ քննարկումների ընթացքում ձեռք են բերվել **ուշադրության արժանի արդյունքներ**: Հանդիպում քննարկումների ժամանակ մասնակից ուսանողներն բարձրաձայնել են պրակտիկայի կազմակերպման, տևողության, ժամանակի, իրենց վստահելու հետ կապված խնդիրներ: Այդ առաջարկները հավաքագրվել են, կազմվել է փաթեթ, որը ներկայացվել է համապատասխան ամբիոններ և ուսումնամեթոդական վարչություն:

Գործողություն 2. Վերանայել և գործադրել կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման կարգը (09.2019-12.2020):

Գործողություն 3. Գործադրել ԵՊՀ-ի դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը մասնաճյուղի բոլոր ամբիոններում (01.2017-06.2019):

Մասնաճյուղն առայժմ կիրառում է դասախոսական կազմի գնահատման իր մեխանիզմները, որոնք նպաստում են դասախոսական կազմի որակավորման անընդհատ աճին, դասավանդման և հետազոտական աշխատանքների ակտիվությանը,

ուսումնամեթոդական և գիտամեթոդական աշխատանքների կատարմանը: Գործունեության բազմագործոն գնահատման համակարգման գործընթացներն ընթացքի մեջ են և կշարունակվեն մինչև 2019թ.-ի հունիսը:

Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի գնահատումն առավել հավաստի արդյունքներ դարձնելու նպատակով մասնաճյուղում կիրառվում է ինչպես անհատական (ինքնագնահատում, գնահատում անմիջական ղեկավարի կողմից), այնպես էլ կոլեկտիվ (գնահատում գործընկերների, ուսանողների) գնահատման եղանակներ:

Դասախոսի անհատական գնահատման գործիք է անհատական զարգացման պլանը, որով դասախոսը ամբիոնին ներկայացնում է մեկ ուսումնական տարվա ընթացքում իր գիտական, գիտամանկավարժական և գիտամեթոդական գործունեության, մասնագիտական աճի ապահովման, գիտամանկավարժական կադրերի պատրաստման, վերապատրաստման, որակավորման բարձրացման կամ վերաորակավորման անհրաժեշտության պլանը, ուսումնամեթոդական աշխատանքների ուղղությամբ իր կողմից իրականացվելիք աշխատանքների ցանկը: Ուսումնական տարվա ավարտին դասախոսը ներկայացնում է հաշվետվություն: Հաշվետվության այս ձևը նպաստում է, որ դասախոսները առավել ուշադրություն դարձնեն իրենց մասնագիտական, գիտական, գիտամանկավարժական գործունեությանը:

2012թ. սկսած մասնաճյուղի բոլոր ամբիոններում լրացվում է դասախոսի գիտամանկավարժական գործունեության գնահատման վարկանիշային թերթիկ: Այն լրացվում է դասախոսի, ամբիոնի վարիչի և ղեկանի կողմից՝ համաձայն որի ըստ դասախոսի գիտամանկավարժական, ուսումնամեթոդական և կազմակերպական գործունեության՝ նրան տրվում են միավորներ: Բացի այս հիմնական միավորներից, դասախոսը կարող է նաև վաստակել լրացուցիչ միավորներ՝ կրթության և գիտության համակարգի զարգացման ակնառու գործունեության համար և այս լրացուցիչ միավորները գումարվում են նրա հիմնական միավորներին:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ինքնագնահատման յուրահատուկ մեխանիզմ է հանդիսանում դասընթացների փաթեթների (պորտֆոլիոների) կազմումը: Պորտֆոլիոն ծառայում է դասախոսին որպես սեփական գործունեության անդրադարձի /ռեֆլեքսիայի/ միջոց և նրա արդյունքների ներկայացումը՝ որպես կոմպետենտության ընթացիկ գնահատման միջոց: Այն կիսամյակի ավարտին արտացոլում է դասախոսի և ուսանողների գործունեությունը, ներկայացնում ամրագրված մեխանիզմները, առանձնացնում դրանցից արդյունավետները, կամ նշում նրանք, որոնք իրենց չեն արդարացրել: Փաթեթի լիարժեք վարումը հնարավորություն է տալիս նախ հաջողությունների ու անհաջողությունների վերլուծության շնորհիվ կատարելու հետագա գործունեության նորովի պլանավորում, ընդհանրացնելու և համակարգելու մանկավարժական լավագույն փորձը, կոլեգաներին ներկայացնելու դասավանդման և ուսումնառության արդյունավետ ձևերը և մեթոդները:

Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գնահատման մեխանիզմներից է նաև ամբիոնների վարիչների և ղեկանների կողմից իրականացվող դասալսումները (ԵՊՀ ԻՄ-ում դասալսումների անցկացման կանոնակարգ, ԳԽ 17.10.2014թ.):

Դասալսումների արդյունքները հաշվի են առնվում դասախոսի հետ նոր աշխատանքային պայմանագիր կնքելիս, դասախոսների վերապատրաստումների թեմաների ընտրության և ժամանակացույցների կազմման ժամանակ:

Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական կոմպետեցիաների, դասավանդման որակի և արդյունավետության գնահատման մեխանիզմներից են փոխադարձ դասալսումները, որի ժամանակ դասալսմանը մասնակցող դասախոսը դասապրոցեսը գնահատում է ըստ հաստատված հարցաթերթի (ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում դասալսումների անցկացման կանոնակարգ, Հավելված 1): Հարցաթերթում առանձնապես կարևորվում են դասի ընթացքում ուսանողների ներգրավվածության ապահովման, խմբերի հետ աշխատանքի իրականացման դասախոսի հմտությունները, նրա կիրառած մեթոդների արդյունավետությունը և այլն: Ամբիոնում կատարվում է նաև դասալսման արդյունքների վերլուծություն:

Մասնաճյուղում գործում են պրոֆեսորադասախոսական անձնակազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման մի շարք այլ մեխանիզմներ, դրանք հիմնականում ուսանողների և արտաքին շահակիցների կարծիքների ուսումնասիրման միջոցով ստացվող աննուղակի գնահատականներ են, սակայն նպաստում են մասնաճյուղում կադրային ներուժի ճիշտ կառավարմանը, ուղղված են դասավանդման որակի բարելավմանը:

Այդ մեխանիզմներից են.

- **«Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները»** (կիսամյակային), որոնց միջոցով պարզվում է ուսանողների կարծիքը դասախոսների դասավանդման մեթոդների, որակի, մասնագիտական կոմպետեցիաների վերաբերյալ և արդյունքներն օգտագործվում են դասախոսական կազմի գործունեության գնահատման, պաշտոնում ընտրվելու կամ առաջխաղացման, աշխատանքային պայմանագրի երկարացման և նյութական խրախուսման գործընթացներում:

- **«Մասնաճյուղում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցումը»**, որն ընդհանուր առմամբ միտված է պարզելու շրջանավարտների բավարարվածությունը մասնաճյուղում ստացած կրթությունից, այդ թվում նաև բավարարվածությունը մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմից:

- **«ԵՊՀ ԻՄ-ի պրակտիկանտ ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության» և «ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության»** հարցումները, արտաքին շահակիցները գնահատելով ուսանողների կամ շրջանավարտների տեսական գիտելիքները, գործնական հմտությունները, մասնագիտական և ընդհանուր պատրաստվածությունը, ինչ որ չափով ներկայացնում են նաև դասախոսների աշխատանքը (ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացման գործում մեծ է դասախոսի դերը):

- **Ուսանողների պարբերական հանդիպումները մասնաճյուղի ղեկավարություն հետ** (ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում նույնիսկ մի քանի անգամ), որոնց ժամանակ անկաշկադ ներկայացնում են իրենց կարծիքները, առաջարկները ու բողոքները,

որևէ դասախոսից դժգոհություն, բողոք ունենալու դեպքում ներկայացնում են իրենց կարծիքը, որը քննարկվում է համապատասխան ստորաբաժանման կամ ամբիոնի հետ ու տրվում համապատասխան լուծում:

Գործողություն 4. *Գործադրել դասընթացների և կրթական ծրագրերի գնահատման առցանց համակարգը (09.2016-12.2020):*

Մասնաձյուղում դասընթացների և կրթական ծրագրերի գնահատման առցանց համակարգ ներդրված չէ, սակայն մասնաձյուղում ոչ էլեկտրոնային տարբերակով մշտապես կատարվում է դասընթացների գնահատում՝ տարբեր մեխանիզմներով:

Հաշվի առնելով այն, որ ԵՊՀ ԻՄ-ի կրթական ծրագրերը շրջանառության մեջ են մտել 2013թ.-ի սեպտեմբերից, դեռևս նրանց ամբողջական գնահատում չի իրականացվել, սակայն առկա են ընթացիկ գնահատման և մշտադիտարկման արդյունքներ, որոնք ամրագրված են ամբիոնների և ֆակուլտետների խորհուրդների նիստերի արձանագրություններում:

Մասնաձյուղում կրթական ծրագրերը գնահատումն իրականացվում է համաձայն **«ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգ»**-ի (ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 17.10.2014թ.-ի թիվ 6 նիստ): Այդ կարգը նորից վերանայման ընթացքի մեջ է, հիմք ընդունելով ԵՊՀ-ի վերանայված համապատասխան կարգը:

Ծրագրերի կանոնավոր մոնիթորինգի նպատակն է գնահատել ծրագրերի մատուցման որակը և համապատասխանությունը սահմանված նպատակներին ու կրթական չափորոշիչ պահանջներին: Նրա խնդիրն է գնահատել ծրագրի և նրա բաղկացուցիչ մասերի սահմանած կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը, դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման գործընթացների արդյունավետությունը, բացահայտել և վերհանել ծրագրի թերություններն ու իրականացման դժվարությունները, կատարել նախորդ տարվա կատարողականի վերլուծություն և այլն:

Որպես մշտադիտարկման և գնահատման հետադարձ կապի լավ մեխանիզմ մասնաձյուղում 2014թ. սեպտեմբերից ներդրված են **պորտֆոլիոները**՝ փաթեթները, որոնք համալրում են կրթական ծրագրի փաստաթղթային փաթեթը՝ ամբողջացնելով նրա ակնկալիքները: Փաթեթների միջոցով դասախոսներն իրենց դասընթացների շրջանակներում իրականացնում են դասընթացի կատարողականի վերլուծություն, գնահատում են դասընթացի ուժեղ և թույլ կողմերը, մշակում բարելավման նոր առաջարկներ՝ հաջորդ ուստարվա համար: Դասախոսների մշտադիտարկման և գնահատման արդյունքները քննարկվում են ամբիոններում, ապա ներկայացվում ֆակուլտետի խորհրդում հաստատման:

Ծրագրերի մշտադիտարկումն իրականացվում է նաև **դասալսումների միջոցով**, նաև դասախոսի կողմից կազմված հատուկ **հարցաշարերի միջոցով դասընթացի գնահատմամբ**, որով ուսանողներն իրենց կարծիքներն են արտահայտում դասընթացի պահանջվածության, դասախոսի կողմից նրա իրականացման արդյունավետության, իրենց ձեռքբերումների վերաբերյալ: Հավաքագրված արդյունքների վերլուծություններն ամրագրվում են դասընթացի փաթեթում:

Մշտադիտարկման անուղղակի, սակայն լավ մեխանիզմ է 2014-15 ուստարվանից մասնաճյուղում ներդրված **ամփոփիչ ասեստավորման հանձնաժողովների հաշվետվության նոր ձևը**՝ հատուկ ձևաթղթի միջոցով, որն ամփոփում է հանձնաժողովի կարծիքը շրջանավարտների ձեռք բերած ուսումնառության ընդհանրական արդյունքների մակարդակի վերաբերյալ, շրջանավարտների կողմից ավարտական աշխատանքների ներկայացման հմտությունների վերաբերյալ: Նրանց տված դրական գնահատականները և կարծիքները գնահատում են կրթական ծրագրի հաջողվածությունը, իսկ առաջարկություններն հիմք են հանդիսանում կրթական ծրագրի իրականացման հետագա բարելավման համար:

Որպես մշտադիտարկման և կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման հետադարձ կապի մեխանիզմներ մասնաճյուղում հաջողությամբ ներդրված են դեռևս 2011թ.-ից **արտաքին և ներքին շահակիցների շրջանում իրականացվող հարցումները**: Մասնաճյուղի շրջանավարտների և պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքների, ուսանողների և շրջանավարտների մասնաճյուղում ուսումնառությունից բավարարվածության վերաբերյալ կարծիքների հավաքագրման և համապատասխան հարցերի արդյունքների վերլուծության միջոցով պարզաբանվում են կրթական ծրագրի արդյունավետությունը, նրա պահանջվածությունը և աշխատաշուկայի պահանջարկին բավարարելը:

Կրթական ծրագրերի և դասընթացների առցանց գնահատման համար մասնաճյուղն ակնկալում է ԵՊՀ-ի աջակցությունը: ԵՊՀ-ում աշխատանքներ են ձեռնարկվել որակի ապահովման և հավատարմագրման վեր-հենքով վիրտուալ շտեմարանի ստեղծման ուղղությամբ, որի նպատակն է ապահովել ԵՊՀ դասընթացների և կրթական ծրագրերի որակի և արդյունավետության գնահատման հետադարձ կապի առցանց մեխանիզմները: Քանի որ մասնաճյուղում գործում է ԵՊՀ-ի ներդրած SuperVision տեղեկատվական համակարգը, ապա այդ գործընթացի ավարտին մասնաճյուղն ակնկալում է այդ շտեմարանների կիրառումը նաև մասնաճյուղում իրականացվող կրթական ծրագրերի և դասընթացների համար:

Գործողություն 5. Նախաձեռնել և իրականացնել ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթաց (01-12.2020):

Գործողություն 6. Նախապատրաստել և առցանց եղանակով իրականացնել ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները, ինչպես նաև ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցումները (01.2016-12.2017):

Այս գործողության իրականացման շրջանակներում ԵՊՀ-ում լրամշակվել և ԵՊՀ ԳԽ 2017 թ. հունվարի 26-ի նիստի թիվ 4/2 որոշմամբ հաստատվել է «Երևանի պետական համալսարանում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցման կանոնակարգը», ըստ որի 2016-2017 ուստարում կիսամյակային հարցումները թե՛ հեռակա և թե՛ առկա ուսուցման համակարգերի ուսանողների շրջանում իրականացվել են առցանց եղանակով: Հարցմանն ուսանողները մասնակցել են ցանկացած վայրից՝ օգտվելով

ԵՊՀ ուսանողական անհատական վիրտուալ տիրույթից, մուտք գործելով համալսարանական իր էլեկտրոնային փոստ: Ուսանողների հարցման արդյունքները մշակվում են ԵՊՀ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնում:

Մասնաճյուղում նույնպես վերանայվել է այդ կանոնակարգը՝ **«Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցման կանոնակարգ»**-ը, որը հաստատվել է մասնաճյուղի գիտական խորհրդի 2017թ. հունվարի 27-ի թիվ 21 նիստում: Այդ կանոնակարգով նույնպես նախատեսվում է մասնաճյուղում ուսանողական կիսամյակային հարցումներն անցկացնել առցանց, ընդ որում ակնկալվում էր, որ հարցումների անցկացման գործընթացն իրականացվելու է՝ օգտվելով ԵՊՀ ուսանողական անհատական վիրտուալ տիրույթից: Մակայն հաշվետու ուստարում այդ գործընթացը առցանց չի իրականացվել, հետաձգվել է, այն կկիրարկվի ապագայում:

ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ ամենամյա հարցումներն առցանց կազմակերպելու նպատակով նույնպես լրամշակվել է համապատասխան կանոնակարգը, այն մասնաճյուղում առայժմ քննարկման փուլում է, այն կներկայացվի մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը 2018թ.-ի հունվար ամսին:

Թեպետ կանոնակարգը դեռևս չի ներկայացվել հաստատման, սակայն մասնաճյուղում 2016-17 ուստարվա մայիս և հունիս ամիսներին առկա և հեռակա ուսուցման շրջանավարտների մասնաճյուղում ուսումնառությունից բավարարվածության հարցումն իրականացվել է առցանց: Հարցումն առցանց իրականացնելու համար մասնաճյուղի ՄԿՈԱ բաժնում շրջանավարտների և շահառուների հետ աշխատանքները համակարգողի հետ միասին կատարվել են նախապատարաստական աշխատանքներ, մշակվել է հարցման իրականացման ժամանակացույց: Ըստ, ժամանակացույցի յուրաքանչյուր մասնագիտության ամփոփիչ ատեստավորման քննությունների ավարտից հետո շրջանավարտները համակարգչային սրահներում առցանց պատասխանել են հարցերին:

Շրջանավարտների մասնաճյուղում ստացած կրթությունից բավարարվածության հարցման արդյունքները վերլուծվել են, կատարվել է դրանց համեմատական վերլուծություն նախորդ 3 ուստարիների հարցումների արդյունքների հետ: Հարցման արդյունքների համար կազմվել է հաշվետվություն, որը տեղադրվել է մասնաճյուղի կայքում: Հարցումների արդյունքներն ուղարկվել են համապատասխան ֆակուլտետներ:

Խնդիր 1.4. Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը կրթական գործընթացում:

Գործողություն 1. Ներդնել ԵՊՀ-ում մշակված վեր-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ՝ ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման համար (02.2017-12.2020):

Ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման համար ԵՊՀ-ում մշակված վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգը դեռևս մասնաճյուղում ներդրված չէ, սակայն դրա իրականացման գործընթացներն ընթացքի մեջ են:

Սակայն մասնաճյուղի ծրագրավորողների ուժերով Moodle համակարգի միջոցով ստեղծվել և առցանց իրականացվել են երկու դասընթաց: Սակայն միասնական համակարգ չի գործում:

Գործողություն 2. *Ձևավորել անհրաժեշտ տեխնոլոգիական և մեթոդական հենք՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման և ներդրման համար (09.2016-01.2017):*

ԵՊՀ-ի կողմից մասնաճյուղում ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգի ներդրման համար մասնաճյուղը կապահովի համապատասխան տեխնիկական հենք, և մասնաճյուղի դասախոսներին կտրամադրվեն ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման ղեկավար ձեռնարկ-նախագիտություններ՝ մշակված ԵՊՀ-ում: Այդ գործընթացը դեռևս չի իրականացվել:

Գործողություն 3. *Վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար (02.2017-12.2020):*

Դեռևս 2015թ.-ին մասնաճյուղի մեկ դասախոս վերապատրաստվել է «Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ» դասընթացի էլեկտրոնային ուսումնառության կազմակերպման համար և 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակում մի շարք կրթական ծրագրերի 1-ին կուրսեցիներ այդ դասընթացն ուսումնասիրել են առցանց մատուցման հնարավորություններով:

Դասախոսական կազմի այլ վերապատրաստում մասնաճյուղում չի իրականացվել, սակայն մասնաճյուղում համապատասխան մասնագետի աջակցությամբ 2017-18 ուստարվա առաջին կիսամյակում Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա կրթական ծրագրի 2 դասընթացներ ձևավորվել են և զուգահեռ մատուցվել առցանց: Պլանավորվել է շարունակել առցանց դասընթացների ձևավորման գործընթացը: Իսկ դասախոսական կազմի վերապատրաստումները պլանավորվում է իրականացնել ռազմավարական ծրագրի ժամանակացույցի շրջանակներում: Այդ գործընթացի իրականացման համար ակնկալում են ԵՊՀ աջակցությունը՝ «Առցանց ուսուցման տեխնոլոգիաներ» դասընթացով:

Գործողություն 4. *Ներդնել իրախուսման մեխանիզմներ՝ դասավանդման գործընթացում ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների կիրառման համար (01-06.2018):*

Մասնաճյուղում քննարկման փուլում է «ԵՊՀ ԻՄ-ի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգ»-ի նախագիծը, որի համաձայն մասնաճյուղի աշխատողներին լրավճար վճարվում է գիտահետազոտական, ուսումնամեթոդական, կազմակերպչական աշխատանքների որոշ տեսակների կատարման համար: Մասնավորապես, ըստ նրա 3.1. ենթակետում

(«Ուսումնամեթոդական գործունեության որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման կարգը») ներկայացված Աղյուսակ 2-ի 1-ին կետի մասնաճյուղի հիմնական աշխատողներին լրավճար վճարվում է ԵՊՀ ԻՄ համացանցային պորտալում մասնաճյուղի գիտական խորհրդով երաշխավորված դասախոսությունների կամ ուսումնական ձեռնարկի տեղադրման համար: Այս գործողության իրականացման համար մասնաճյուղը դեռ ժամանակահատված ունի:

Իսկ մինչև այդ կարգի հաստատումը գիտահետազոտական, ուսումնամեթոդական և կազմակերպչական արդյունավետ գործունեության համար մասնաճյուղի աշխատակիցները խրախուսվում են մասնաճյուղում ներդրված և գործող տարբեր մեխանիզմներով:

Գործողություն 5. *Ապահովել կրթական ծրագրերը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով (09.2018-12.2020):*

Գործողություն 6. *Ապահովել հեռակա ուսուցման դասընթացները համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով (01.2016-12.2020):*

Հեռակա ուսուցման ուսանողների համար կարևոր տեղեկատվության միջոց է հեռակա ուսուցման բաժնի կայքը (<http://heraka.com>), որի «Դասախոսություններ» բաժնում տեղադրված են ըստ մասնագիտությունների տարբեր դասընթացների էլեկտրոնային դասախոսությունները: Իսկ դասախոսներն ուսանողների հետ աշխատում են կուրսի ընդհանուր և ուսանողների անհատական էլեկտրոնային փոստերի միջոցով՝ տնային, ինքնուրույն աշխատանքները կազմակերպելու, կուրսայի և ավարտական աշխատանքների համար խորհրդատվության, և այլ տեղեկատվության մատուցման համար: Ինչպես առկայում, այնպես էլ հեռակա ուսուցման բաժնում գրեթե բոլոր դասախոսներն իրենց դասընթացներն իրականացնում են հիմնականում համապատասխան շնորհանդեսների և այլ էլեկտրոնային ռեսուրսների կիրառմամբ:

Գրադարանը համալրված է անհրաժեշտ մասնագիտական էլեկտրոնային գրականությամբ և մասամբ նաև ծրագրերին համապատասխան էլեկտրոնային դասախոսություններով, որոնք պարբերաբար համալրվում և թարմացվում են:

Հեռավար ուսուցման հնարավորություն առայժմ նախատեսված չէ:

Գործողություն 7. *Կանոնակարգել և ընդլայնել առցանց եղանակով իրականացվող դասընթացները (01-06.2016-09.2016-12.2020):*

2017թ.-ի սեպտեմբերից մասնաճյուղի բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա կրթական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսի ուսանողների համար «Մուդրլ» (*Moodle*) ուսուցման կառավարման համակարգի միջոցով առցանց համապատասխանաբար իրականացվել են «Հանրահաշիվ և երկրաչափություն» և «ԷՀՄ ճարտարապետություն և Assembler լեզու» դասընթացները: Պլանավորվում է ընդլայնել առցանց եղանակով իրականացվող դասընթացների քանակը:

II. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընդլայնել դասախոսական կազմի և ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում, նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայնմանը և հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը:

Խնդիր 2.1. Նպաստել հետազոտությունների ծավալի մեծացմանը և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավվածության ընդլայնմանը:

Այս խնդրի բոլոր գործողությունների իրականացումն ամփոփված է մեկ փաստաթղթի՝ «ԵՊՀ ԻՄ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգ»-ի ներդրմամբ: Կարգի նախագիծը ներկայացված է մասնաճյուղի ամբիոնների քննարկմանը: Համապատասխան քննարկումներից և արդյունավետ առաջարկությունների հիման վրա վերախմբագրելուց հետո այն կներկայացվի մասնաճյուղի գիտական խորհուրդ՝ հաստատման համար (հավանաբար 2018թ.-ի հունվարին):

Գործողություն 1. *Իրականացնել հետազոտական գործունեության գնահատում՝ առաջնորդվելով գիտական հրատարակումներով, դրանց վրա կատարված հղումներով և այլ ընդունված ցուցանիշներով (01.2017-12.2020):*

Նշված գործողության իրականացման համար ԵՊՀ ԻՄ-ում մշակվել են գիտահետազոտական գործունեության գնահատման չափանիշներ, որոնք ամփոփված են «ԵՊՀ ԻՄ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգ»-ի նախագծի 2.1. կետում: Կարգի հաստատումից հետո ԵՊՀ ԻՄ բոլոր այն աշխատակիցները, որոնց գիտական հրատարակումները կբավարարեն կարգում նշված չափանիշներին, կստանան լրավճար:

Գործողություն 2. *Մշակել և ներդնել համապատասխան մեխանիզմներ՝ ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրատարակումները խրախուսելու համար (01.2016-12.2020):*

Այս գործողության իրականացումը պայմանավորված է «ԵՊՀ ԻՄ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգ»-ի նախագծի 2.1. կետի աղյուսակ 1-ի 1-ին կետով: Մասնավորապես, ներկայացված են նաև ազդեցության գործակցով ամսագրերի ցանկը, որոնք հստակեցվել են ըստ «Clarivate Analytics» գործակալության ամենամյա «Journal Citation Reports (JCR)» զեկուցման մեջ ամփոփված ազդեցության գործակցով պարբերականների:

Գործողություն 3. *Խրախուսել ՈԻԳԸ-ի շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կատարումը և դեկավարումը (01.2016-12.2020):*

ՈԻԳԸ-ի շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կատարումը և ղեկավարումը կխրախուսվեն՝ համաձայն «ԵՊՀ ԻՄ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգ»-ի 3.1. կետի աղյուսակ 2-ի 8-րդ և 9-րդ կետերի, որի նախագիծը քննարկման փուլում է:

Մինչև կարգի հաստատումը մասնաճյուղում ՈԻԳԸ-ի կողմից կազմակերպվող տարբեր գիտաժողովներում ուսանողների գիտական զեկուցումների համար տարբեր խրախուսումներ են ստանում և ուսանողները և նրանց ղեկավարները:

Գործողություն 4. *Բարելավել հետազոտական բաղադրիչի իրականացումը բակալավրի կրթական ծրագրերում (01.2016-12.2020):*

Այս գործողությամբ ներկայացված խնդիրն իր լուծումը մասնակի ստացել է մասնաճյուղում կրթական ծրագրերի վերանայման գործընթացի շրջանակներում: Դեռևս 2016թ.-ի սեպտեմբերից սկսվել են վերանայվել կրթական ծրագրերով նախատեսված բոլոր տեսակի պրակտիկաների ծրագրերը, ամբիոններում խիստ ուշադրություն է դարձվում կուրսային և ավարտական աշխատանքների թեմաների ընտրությանը (որպեսզի ընտրված թեմաներն ունենան ուսանողների կողմից հետազոտելու ասպարեզ), նրանց իրականացման վրա դրվող պահանջներին:

Մասնաճյուղի Գիտական խորհրդի 2017թ.-ի հոկտեմբերի 28-ի թիվ 27 նիստում հաստատվել է «ԵՊՀ ԻՄ-ում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման» կարգը, որի 5-րդ կետի («Բակալավրի ավարտական աշխատանքի գնահատում») 2-րդ աղյուսակում ներկայացված են ավարտական աշխատանքի գնահատման չափանիշները և դրանց համապատասխան չափորոշիչները: Մասնավորապես աղյուսակում ներկայացված 1-ին չափանիշով պահանջվում է աշխատանքի արդիականության հիմնավորում և գրականության վերլուծություն, իսկ 2-րդ չափանիշի չափորոշիչներով գնահատումը կորոշի աշխատանքի կատարման մակարդակը և ինքնուրույն ձեռքբերած արդյունքները: Այս չափանիշներին համապատասխան իրականացված աշխատանքն ակնհայտ է ուսանողից պահանջում է հետազոտելու և ստացված արդյունքները ինքնուրույն վերլուծելու ունակություններ:

Խնդիր 2.2. Զարգացնել հետազոտական համագործակցությունը հանրապետության գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի և ձեռնարկությունների հետ:

Գործողություն 1. *Աջակցել գիտահետազոտական կենտրոնների հետ տարածաշրջանային նշանակության համատեղ ծրագրերի իրականացմանը (09.2016-12.2020):*

Այս գործողության իրականացման շրջանակներում դեռևս ծրագրեր չեն իրականացվել:

Գործողություն 2. *Նախաձեռնել համագործակցային ծրագրեր տարածաշրջանային բուհերի հետ և դրանցում ներգրավել հանրապետության առաջատար գիտաշխատողներին (01.2016-12.2020):*

Գործողություն 3. Նախաձեռնել տարածաշրջանի ձեռնարկությունների կարիքներին համապատասխան և նրանց մասնակցությամբ հետազոտական ու կրթական ծրագրեր (01.2016-12.2020):

Խնդիր 2.3. Խթանել Մասնաճյուղի հետազոտական գործունեության միջազգայնացումը:

1. **Գործողություն 1.** Խրախուսել միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում մասնաճյուղի աշխատողների հրատարակումները (01.2017-12.2020):

Միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված պարբերականներում մասնաճյուղի դասախոսների հրատարակումները կխրախուսվեն «ԵՊՀ ԻՄ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի» 2.1. կետի աղյուսակ 1-ի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն, որի նախագիծը քննարկման փուլում է:

Մասնավորապես միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված պարբերականների ցանկը հստակեցվել է ըստ «Web of Science» և «Scopus» շտեմարանների:

Գործողություն 2. Ավելացնել օտար լեզուներով հրատարակվող հոդվածների թիվը «Ակունք» ժողովածուում (01.2017-12.2020):

Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղի «Ակունք» գիտական հոդվածների 2 ժողովածուներում տպագրվել են օտար լեզվով գրված (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն) 13 հոդվածներ: Այս թիվը շատ չէ, սակայն մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի Անգլերեն լեզվի և գրականության ու Ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոններում որոշում է կայացվել ավելացնել համապատասխան օտար լեզվով գրվող հոդվածների թիվը:

Գործողություն 3. Կազմակերպել միջազգային գիտաժողովներ, օժանդակել արտասահմանյան գիտաժողովներին մասնաճյուղի աշխատողների մասնակցությանը (01.2017-12.2020):

Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղում միջազգային գիտաժողովներ չեն կազմակերպվել, սակայն մասնաճյուղի 10 դասախոսներն մասնակցել են հանրապետական և միջազգային տարբեր գիտաժողովների, որից 3-ը ՀՀ-ում, 2-ը արտասահմանում և 3-ը ԱՊՀ երկրներում կայացած միջազգային գիտաժողովներ են: 6 դասախոս մասնակցել է 12 հանրապետական և 4-ը՝ մեկական միջազգային ցուցահենդեսների, 2 դասախոս կազմակերպել է անհատական ցուցահանդես (ՀՀ-ում, ԱՄՆ-ում):

Մասնաճյուղի մեկ դասախոս Հումբոլդտ միության անդամ է, արդեն մի քանի տարի ընդգրկված է գերմանական գիտահետազոտական ծրագրերում (2002թ. եղել է DAAD-ի կրթաթոշակառու, 2004-2006 թթ. և 2017թ. (3 ամիս) մասնակցել է Ալեքսանդր ֆոն Հումբոլդտ (գերմ.՝ Alexander von Humboldt-Stiftung) հիմնադրամի գիտահետազոտական ծրագրերին:

Մասնաճյուղում արտասահմանյան գիտաժողովներին մասնաճյուղի աշխատողների մասնակցությանը օժանդակելու մեխանիզմներ դեռևս մշակված չեն: Այդ գործողության իրականացման ժամանակահատվածը դեռևս չի ավարտվել:

Գործողություն 4. *Աջակցել արտասահմանյան գործընկերների հետ համագործակցության շարունակականությանն ու խորացմանը (01.2016-12.2020):*

Մասնաճյուղը արտասահմանյան գործընկերների հետ համագործակցության ծրագրեր քիչ ունի: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են մի շարք համագործակցային գործընթացներ.

- 2016թ. հունվարին ԵՊՀ ԻՄ-ում կայացել է հանդիպում **“World Vision Armenia” կազմակերպության,** Տուրիզմի տարածքային զարգացման ծրագրերի ներկայացուցիչների (Անդրե Ուայթ /Անգլիա/, Օլգա Կովտուն /Ռուսաստան/, Նարինե Մինոնյան /Ալավերդի/, Ինգա Մանուկյան), Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ Լալսկոպոս Գալստանյանի հետ: Հանդիպման նպատակն էր Տավուշի մարզում տուրիստական ծրագիր իրականացնելու շրջանակներում ծավալել համագործակցություն, ծրագրում ընդգրկել մասնաճյուղի ուսանողներին՝ նպատակ ունենալով նրանցից լավագույններին հետագայում նաև ապահովելու աշխատանքով: Տուրիզմի տարածքային զարգացման ծրագրի պատասխանատուները ներկայացրին իրենց ծրագրի էությունը, նպատակը, խնդիրները: Ծրագիրը հավանության արժանացավ տնօրենի կողմից, ըստ այդմ՝ ուրվագծվեցին համագործակցության եզրերը, նախանշվեցին քայլերը: Նշվեց, որ այդ ծրագրում կարող են ընդգրկվել մասնավորապես Տնտեսագիտության ֆակուլտետի «Մերվիս», Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «ԱԼԳ» և «ՖԼԳ» մասնագիտությունների, Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողները: Ապա 2017թ. նոյեմբերին **Իջևանում Ռուսաստանի Դաշնության կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից իրականացվող «Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» ծրագիրը՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության հետ համատեղ** ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կազմակերպվել են Տավուշի տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոնի պաշտոնական բացումը: Կենտրոնի բացման արարողությանը մասնակցել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը, Հայաստանում ՄԱԶԾ մշտական ներկայացուցչի տեղակալ Դմիտրի Մարիասինը, ՀՀ կրթության և գիտության փոխնախարար Դավիթ Սահակյանը, Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանության մշակութային կցորդ Եվգենի Պանտելենը: Երկկողմ համագործակցությունն ամրապնդելու և խորացնելու նպատակով Հայաստանում ԱԶԾ մշտական ներկայացուցչության և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի միջև **կնքվել է համագործակցության հուշագիր:**

- Հայաստանում ֆրանկոֆոնիայի երկամսյակի շրջանակում 2016թ. մարտին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի է ունեցել ֆրանկոֆոն ժողովուրդներին նվիրված

միջոցառում: Իջևանը Վալանսի հետ քույր քաղաք է: Նրանց միջև **պարբերաբար իրականացվում են ուսանողների փոխանակման ծրագրեր**, որոնք նպաստում են ֆրանսերեն լեզվի ուսումնասիրմանն ու տարածմանը: Ֆրանսիացի բարերարների շնորհիվ մասնաճյուղում կահավորվել է ֆրանսերենի լսարանը: «Հայ-ֆրանսիական բարեկամություն» կազմակերպությունը 2012 թվականից մասնաճյուղի ուսանողների կողքին է՝ կրթության ոլորտին վերաբերող իր ծրագրով: Այն ներառում է մի շարք դրույթներ՝ ուսանողների վերապատրաստում, վճարների փոխանցում, թոշակների տրամադրում, դպրոց-համալսարան կապի ամրապնդում, դասընթացների ու դասալսումների կազմակերպում, համապատասխան գրականության տրամադրում և այլն:

- 2016թ. ապրիլին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ են այցելել **Ռուսաստանի Դաշնության Գժելի պետական համալսարանի պատվիրակության ներկայացուցիչները**՝ Սերվիսի և տուրիզմի ամբիոնի վարիչ, մանկ. գիտ. թեկն., դոցենտ Տատյանա Լիսիցինան (պատվիրակության ղեկավար), նույն ամբիոնի դոցենտ, Ռուսաստանի Դաշնության վաստակավոր նկարիչ, ՌԳՄ անդամ, մանկ. գիտ. թեկն. Իրինա Կորշունովան, մշակութաբան. թեկն., դոցենտ, զբոսավար Ալլա Կորժանովան: Այցելության հիմնական նպատակը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հետ **համագործակցության պայմանագիր կնքելը, համատեղ ծրագրեր իրականացնելն էր**: Հանդիպման ընթացքում կողմերը ներկայացրել են կրթական և գիտամշակութային գործունեություն իրականացնող երկու համալսարանների առաքելությունները, հիմնական խնդիրները, գործող ֆակուլտետներն ու մասնագիտությունները, ապա քննարկելով համագործակցության պայմանագրի դրույթները՝ ստորագրել այն:

- 2016թ. ապրիլին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ են այցելել ԵՊՀ-ի ֆրանսիական բանասիրության ամբիոնի ներկայացուցիչները և **Մոնպելյեի համալսարանի պրոֆեսոր, միջնադարյան գրականության մասնագետ Ֆրանսուա Ռուդոն**: Այցելության հիմնական նպատակն էր ԵՊՀ ԻՄ-ի «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողների համար «Ֆրանսիական վերածննդի գրականությունը» թեմայով դասախոսություն կարդալը: Ապա մասնաճյուղի օտար լեզուների ամբիոնում ԵՊՀ-ի ֆրանսիական բանասիրության ամբիոնի ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում քննարկվել են «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության առարկայական ծրագրերի, դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառման ոլորտում մայր բուհի և մասնաճյուղի համագործակցությանը վերաբերող հարցեր:

- 2016թ. հունիսին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի է ունեցել հանդիպում **«Հայ-ֆրանսիական բարեկամություն»** կազմակերպության կամավոր Ժուլիեն Լըկուտուդիեի հետ: Հանդիպման նպատակն էր նշված մասնագիտության ուսանողներին կրթաթոշակներ հանձնելը: Հանդիպման վերջում ամփոփվել է կամավորի մեկ տարվա կատարած աշխատանքը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում:

- 2017թ. հոկտեմբերին մասնաճյուղ են այցելել **ՀՀ-ում Գերմանիայի դեսպանության** մշակութային հարցերի կցորդ (պատասխանատու) Աննեմարի Քուլմանը, Գերմանիայի

Ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD)-ի երևանյան տեղեկատվական կենտրոնի տնօրեն Սիլվիա Շմիդը, կրթաթոշակային ծրագրերի գլխավոր խորհրդատու Մերի Նավասարդյանը, Գյոթե ինստիտուտի հայաստանյան ներկայացուցիչ Դանա Շլուխտմանը: Այցելության հիմնական նպատակն էր ԵՊՀ ԻՄ-ի ուսանողներին ներկայացնել Գերմանիայի Ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD)-ի կրթական ծրագրերը՝ նախատեսված հայ ուսանողների (բակալավրիատի և մագիստրատուրայի), շրջանավարտների, հետազոտողների ու դասախոսների համար: Քննարկվել են ուսանողների փոխանակման ծրագրեր իրականացնելու վերաբերյալ մի շարք հարցեր, ուրվագծվել են երկկողմ համագործակցության եզրերն ու հեռանկարները: Հայ-գերմանական համագործակցությունը սերտացնելու, լեզվամշակութային հաղորդակցությունը խորացնելու նպատակով մասնաճյուղի տնօրենը հյուրերին առաջարկել է ՀՀ-ում Գերմանիայի դեսպանատանը քննարկել մասնաճյուղում գերմաներեն լեզվի ուսուցման կենտրոն ստեղծելու մասին հարցը:

III. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զարգացնել հանրային ներգրավման և ծառայությունների համակարգը, խթանել հասարակայնության հետ կապերն ու սոցիալական պատասխանատվությունը:

Խնդիր 3.1. Ապահովել հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային պատասխանատվության բարձրացումը:

Գործողություն 1. *Վերանայել ԵՊՀ ԻՄ-ի հանրային կապերի հայեցակարգը (01.2016-12.2017):*

Մասնաճյուղում 2014թ.-ից գործում է «ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականությունը հանրային կապերի ոլորտում» (հաստատվել է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 27.05.2014թ. նիստում), որը հաշվետու ժամանակահատվածում վերանայվել է և կներկայացվի հաստատման:

Գործողություն 2. *Զարգացնել հանրային կապերի միասնական համակարգը, բարձրացնել հանրային կապերի ներբուհական ցանցի արդյունավետությունը (01.2016-12.2020):*

Մասնաճյուղում արդյունավետ գործում է կապը կառուցվածքային ստորաբաժանումների և մամուլի ու հասարակայնության հետ կապերի պատասխանատուի միջև: Բոլոր ստորաբաժանումների գործունեությունը թափանցիկ լուսաբանվում է տեղեկատվական տարբեր միջոցներով, այդ թվում առաջնայնությունը տրվում է մասնաճյուղի կայք-էջին: Նրանց գո հետ հասարակայնության հետ կապերի պատասխանատուների հետ արդյունավետ գործունեությունը, պարբերաբար կազմակերպվել են աշխատանքային հանդիպումներ նրանց հետ:

Մամուլի և հասարակայնության հետ պատասխանատուն 2017թ.-ի սեպտեմբերից կառուցվածքային ստորաբաժանումների հետ աշխատում է հատուկ ձևաթղթով, նպաստելով հանրային կապերի ոլորտում ներբուհական ցանցի արդյունավետության բարձրացմանը:

Գործողություն 3. *Ապահովել ինտերնետային կայքի դինամիկ զարգացումը՝ հարստացնելով և արդիականացնելով դրա բովանդակային և ծրագրային բաղադրիչները (01.2016-12.2020):*

Մասնաճյուղն իր հեղինակության ամրապնդման, հասարակական վարկանիշի բարձրացման նպատակով վարում է տեղեկատվության տարածման, գովազդային-լրատվական, քարոզչական համապատասխան քաղաքականություն: ԵՊՀ ԻՄ-ի բոլոր ստորաբաժանումների գործընթացների, իրադարձությունների, կազմակերպված միջոցառումների, հարցազրույցների, անհրաժեշտ հայտարարությունների, ուսանողական կյանքին և միջավայրին վերաբերող նորությունների լուսաբանումը, տեղեկատվության մատչելիությունն ապահովվում է մասնաճյուղի պաշտոնական կայքի (<http://ijevan.y-su.am/>) միջոցով (եռալեզու տարբերակի իրականացումն ընթացքի մեջ է), «**Facebook**» սոցիալական ցանցում գործող ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի էջի, ինչպես նաև մասնաճյուղի տարբեր ստորաբաժանումների և ուսանողական կառույցների էջերի միջոցով:

Կառավարման գործընթացի թափանցիկության, աշխատակիցների և ուսանողների իրազեկվածության ապահովման, գործունեության և ուսման մեջ տեղեկույթի փոխանակման տեսանկյունից մեծ է կայքի՝ որպես աշխատանքի արդյունավետության գերժամանակակից գործոնի դերը: Ընդամենը 6 տարվա պատմություն ունեցող կայքը դարձել է ուսանողների «սիրելին»: ԵՊՀ ԻՄ-ի առկա ուսուցման 403 ուսանողներից 203-ը 2017 թ. հարցման ժամանակ պատասխանել է, որ կայքից օգտվում է «շատ հաճախ» ու «հաճախ»: 4.6-ից բարձր միջին գնահատականներով նրանք փաստել են, որ բավարարված են կայքի կառուցվածքից, նորությունների լուսաբանումից, տեղեկատվության ստացման հարմարավետությունից և լիարժեքությունից:

Մասնաճյուղի պաշտոնական կայքը 2017 թ. օգոստոսի դրությամբ ունի 204 էջ (նախորդ տարվա 194 էջի փոխարեն), տեղադրված է 1825 նյութ, 7936 ֆայլ (նախորդ տարվա 6051 ֆայլի փոխարեն):

Կայքի «**ԶԼՄ-ները մեր մասին**» էջում տեղադրված են մասնաճյուղի վերաբերյալ տարբեր ԶԼՄ-ների կողմից հրապարակված հոդվածներ ու տեսանյութեր: Հաշվետու ուստարում **1-ին լրատվականով, “YouTube”-ով**, տարբեր կայքերով լուսաբանվել են շուրջ 13 իրադարձություն.

- ✓ «Առաջին կուրսեցիների՝ Ուսուցչի երդման հանդիսավոր արարողությունը» (2016թ. նոյեմբերի 16),
- ✓ «Մասնաճյուղում կայացավ «Գյուղական զբոսաշրջության ինտեգրացված զարգացում» ծրագրի ներկայացուցիչների հետ հանդիպում» (2017թ. մարտի 17),
- ✓ “Write On! Armenia”. “2017 National Winners” (2017թ. ապրիլ),
- ✓ «Իջևանի զբաղվածության տարածքային կենտրոնի ներկայացուցչի հանդիպումը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում» (2017թ. փետրվարի 23),
- ✓ «Փոխհատուցվել է 745 ուսանողի ուսման վարձ» (2017թ. մարտի 3),
- ✓ «Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրի ներկայացուցիչների հերթական հանդիպումը ուսանողների հետ» (2017թ. մարտի 10),

- ✓ «Գյուղական Զբոսաշրջության Ինտեգրված Զարգացում» ծրագրի շրջանակներում ԵՊՀ ԻՄ-ում կայացավ «Քայլ առաջին. Start up-ի համար մտքի ձևավորման փուլ» ուսուցում-քննարկումը» (2017թ. ապրիլի 28),
- ✓ «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կայացավ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից, Ռուսաստանի Դաշնության ֆինանսավորմամբ իրականացվող «START UP. Քայլ 2. մտքի հստակեցում և ձեռնարկատիրական հատկանիշներ» ուսուցում-քննարկումը» (2017թ. մայիսի 5),
- ✓ «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում տեղի ունեցան «Մերվիս» մասնագիտության ավարտական պետական ամփոփիչ քննություններ (2017թ. մայիսի 27),
- ✓ «Տավուշի մարզպետ Հովիկ Աբովյանն ընդունել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանող Լավար Մնացականյանին» (2017թ. հունիսի 26),
- ✓ «Երազանքից իրականություն. Չինչինի Մարիամի պատմությունը» (2017թ. հուլիսի 11),
- ✓ «Մասնաճյուղում կայացավ 2016-17 ուստարվա շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը» (2017թ. հուլիսի 14),
- ✓ «Միսս Քոչարյանը, ում աշակերտները սովորեցրեցին հիանալ ամեն օրով» (2017թ. հուլիսի 26):

Մշտապես իրականացվում է ինտերնետային կայքի բովանդակային և ծրագրային բաղադրիչների դինամիկ զարգացում, դրանք հարստացվում են և արդիականացվում, բացվում են նոր էջեր, կատարվում է համացանցային տարբեր հարթակներում ակտիվ հաղորդակցություն:

ԵՊՀ ԻՄ-ի կայքում տեղակայվել և շահագործման են հանձնվել մի շարք բաժիններ՝ «Համալսարանակներ», «Մասնաճյուղի էլեկտրոնային գրադարան», «Ինքնավերլուծություններ» և այլն, նոր դիզայնով ու համալրված բաժիններ: Պարբերաբար թարմացվում են «Փաստաթղթեր» (<http://ijevan.yasu.am/documents/>), «Դիմորդ», «ԵՊՀ ԻՄ կառուցվածք» (<http://ijevan.yasu.am/about-ysu-ib/structure/>), «Մրցույթներ, թափուր հաստիքներ» (<http://ijevan.yasu.am/information/tenders-and-vacancies/>) և այլ բաժինները:

Գործողություն 4. *Մշակել մարքեթինգային գործողությունների հայեցակարգ և բազմազանեցնել գովազդային նյութերը (01.2016-12.2018):*

Մասնաճյուղում 2014թ.-ից գործում է «ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականությունը հանրային կապերի ոլորտում» (հաստատվել է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 27.05.2014թ. նիստում): Այդ քաղաքականության խնդիրն է նպաստել մասնաճյուղի ու նրա գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը, ընդլայնել և ակտիվացնել մասնաճյուղի գովազդարշավը (տպագրել բուկլետներ, փոստային և հեռախոսային տեղեկագրքեր և այլն), պարբերաբար կազմակերպել մամուլի ասուլիսներ, պատրաստել մամլո հաղորդագրություններ, մասնաճյուղի կայքն ապահովել համապատասխան լրատվությամբ և պարբերաբար այն կատարելագործել, բազմացնել տեղեկատվության տարածման ձևերը, միջոցները և

շրջանակները, ակտիվ համագործակցել ՁԼՄ-ների հետ, մասնաճյուղի գովազդային-լրատվական, քարոզչական և մարքեթինգային բոլոր կարողությունները նպատակաուղղել նրա դրական հեղինակության պահպանմանն ու ամրապնդմանը և այլն:

Սահմանված ժամանակահատվածում կատարվել են աշխատանքներ գովազդային նյութերի մշակման և բազմացման ուղղությամբ: Հրատարակվել են ԵՊՀ ԻՄ-ին վերաբերող հայերեն, վրացերեն և պարսկերեն բուկլետներ, մասնաճյուղի կիրառական անվեստի ֆակուլտետին վերաբերող հայերեն բուկլետներ:

Գործողություն 5. *Ընդլայնել հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը և զարգացնել մշտադիտարկման համակարգը (01.2016-12.2020):*

Հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապն իրականացվում է «Facebook» սոցիալական ցանցում գործող ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի էջի (<https://www.facebook.com/ysuib>, 2017թ.-ի նոյեմբերի դրությամբ՝ 2560 հետևորդ), ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ֆեյսբուքյան խմբի (<https://www.facebook.com/groups/studentibysu/>, 2017թ.-ի նոյեմբերի դրությամբ՝ 2190 անդամ), ինչպես նաև մասնաճյուղի տարբեր ստորաբաժանումների և ուսանողական կառույցների էջերի միջոցով. Ուսանողական խորհրդի՝ <https://www.facebook.com/EPHIMUX/> (2017թ.-ի նոյեմբերի դրությամբ ունի 924 հետևորդ), ՈԻԳԸ-ի՝ <https://www.facebook.com/sssysuib/?fref=ts> (2017թ.-ի նոյեմբերի դրությամբ ունի 441 հետևորդ), նոր բացված Էլեկտրոնային գրադարանի՝ <https://www.facebook.com/groups/2001762936740924/> (2017թ.-ի նոյեմբերի դրությամբ ունի 100 անդամ), Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի՝ <https://www.facebook.com/shrjanavartnerysuib/> (2017թ.-ի նոյեմբերի դրությամբ ունի 257 հետևորդ), ԵՊՀ ԻՄ գիտակազմակերպական բաժնի՝ <https://goo.gl/R2w9P9> (2017թ.-ի նոյեմբերի դրությամբ ունի 34 հետևորդ):

Այս ֆեյսբուքյան էջերում ծավալվում են ակտիվ քննարկումներ:

Մասնաճյուղի կայքն ունի նաև «Հարց ու պատասխանի» բաժին, որի օգնությամբ կայքից օգտվողները բարձրաձայնում են իրենց հուզող հարցերը և ստանում պարզաբանող պատասխաններ:

Գործողություն 6. *Ընդլայնել և զարգացնել մասնաճյուղի ներգրավումը տարածաշրջանային ծրագրերին ու նախաձեռնություններին, բազմազանեցնել հանրությանը մատուցվող ծառայությունները (01.2016-12.2019):*

Մասնաճյուղը ներգրավված է տարածաշրջանային նշանակության տարբեր միջոցառումների և ծրագրերի մեջ: Նա մշտապես կանգնած է տարածաշրջանային շատ խնդիրների վերհանման և դրանց լուծմանն աջակցման ուղղու վրա: Մասնաճյուղը մեծ ֆինանսներ չունի տարբեր բարեգործական ծրագրեր իրականացնելու համար, սակայն անմասն չի մնում սոցիալական որոշ խնդիրների լուծման միջոցով մարզի հանրությանը աջակցելուց:

Մասնաճյուղն ուսանողների համար իրականացրել է սոցիալական մի շարք ծրագրեր: Պետական և ներքուհական կրթաթոշակներ են հատկացվել մասնաճյուղի 140 ուսանողների, որոնցից անվանական կրթաթոշակ է ստացել 10 ուսանող: 2016-2017 ուստարում սոցիալական ծրագրերի շրջանակներում 470 ուսանողի համար կատարվել է ուսման վարձի մասնակի փոխհատուցում, այդ թվում՝ 183-ը՝ առկա ուսուցման համակարգում:

Հաշվետու ուստարում ուսման վարձի 50% և ավելի գեղչից օգտվել են ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից 9 ուսանող: Ուսման վարձի գեղչից օգտվել են նաև մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում զինվորական ծառայություն անցած մասնաճյուղի 27 ուսանողներ:

Աջակցություն է ցուցաբերվում «Հայաստան» համահայկական հիմնադրամին և Հայաստանի երիտասարդական հիմնադրամին:

Մասնաճյուղի աշխատակիցները մասնակցում են մարտական գործողությունների ժամանակ զոհված զինծառայողներին ընտանիքներին ֆինանսական աջակցության ծրագրին:

Հաճախակի կազմակերպվում են տարբեր այցեր մասնաճյուղ, մասնաճյուղի դասախոսները և ուսանողները կազմակերպում են բազմաբնույթ այցեր տարածաշրջանի դպրոցներ, զորամասեր, հաստատություններ: Մասնակցում են տարածաշրջանային հիմնախնդիրներին վերաբերող կոնֆերանսների, ժողովների, միջոցառումների:

2016թ. դեկտեմբերին «Հայաստանի մանուկներ հիմնադրամ»-ի Նոյեմբերյանի շրջանի շահառու 20 աշակերտներ՝ հիմնադրամի ներկայացուցիչների ուղեկցությամբ, այցելել են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ: Այցելության նպատակն էր մոտիկից ծանոթանալ մասնաճյուղի ընդհանուր կառուցվածքին, գլխավոր ստորաբաժանումների գործունեությանը, մասնակցել դասապրոցեսի: «Հայաստանի մանուկներ հիմնադրամ»-ը (COAF) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով:

2017թ. մայիսին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ են այցելել Դիլիջանի միջազգային դպրոցի սաները: Այցելության նպատակն էր մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների և շրջանավարտների բազմաժանր աշխատանքների միջոցով աշխարհի տարբեր երկրներից դպրոցում ուսանող աշակերտներին ծանոթացնել հայոց մշակութային արժեքներին, արվեստի ու կենցաղի առանձնահատկություններին: Արվեստանոցներում հյուրերը տեղում ականատես եղան աշխատանքների ստեղծագործական պրոցեսին, դրանց ստեղծման տեխնիկային, հյուրերի պատվին տրվեցին վարպետության դասեր:

2017թ. մայիսին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը նախաձեռնել էր «Մասնագիտական կրթությունը և ուսուցումը՝ հեռավոր և սահմանամերձ (սահմանապահ) բնակավայրերի հզորացման նախապայման» խորագրով գիտաժողովների շարք, որի երկրորդ հանդիպումը մայիսին կայացավ ՀՀ Տավուշի մարզի Բերդ քաղաքում: Անցկացման վայրի ընտրությունը պայմանավորված էր հանրային ուշադրությունը սահմանամերձ ու սահմանապահ բնակավայրերին հրավիրելու և տեղական միջավայրը ակտիվացնելու հանգամանքով: Նախարարությունը գիտաժողովների շարքը կազմակերպել էր՝ կարևորելով հեռավոր ու սահմանային բնակավայրերի հզորացման առաջնահերթության հարցը և նպատակ ունենալով ի նպաստ տարածաշրջանային զարգացումների ակտիվացնել

սոցիալական գործընկերների միջև հարաբերությունները, խթանել առաջավոր փորձի ամրապնդումը, ինչպես նաև բարձրացնել հանրային իրազեկվածությունը՝ առկա խնդիրների ու հնարավորությունների վերաբերյալ: Միջոցառմանը մասնակցել են ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, Տավուշի մարզի գործարար հատվածի և մասնագիտական ուսումնական հաստատությունների, ինչպես նաև միջազգային և տեղական կազմակերպությունների, ՀԿ-ների ներկայացուցիչներ: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը նույնպես մասնակցել է գիտաժողովում և նրա ներկայացուցիչը հանդես է եկել **«ԵՊՀ» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գործունեությունը Տավուշի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում» թեմայով զեկուցումով:**

Գործողություն 7. *Բարձրացնել ներքին կորպորատիվ հաղորդակցության արդյունավետությունը (01.2016-12.2020):*

Մասնաճյուղում ներքին կորպորատիվ հաղորդակցությունն իրականացվում է հիմնականում մասնաճյուղի կայք-էջի (ljevan.y-su.am) միջոցով, թեպետ բոլոր ստորաբաժանումները գործնական հաղորդակցումն իրականացնում են իրենց ընդհանուր և անձնական էլեկտրոնային փոստերի միջոցով: Նախատեսվում է ներառվել ԵՊՀ աշխատողների համացանցային ներքին տիրույթ (intranet.y-su.am), որը կբարձրացնի ներքին հաղորդակցման, տեղեկատվության շրջանառման և մշակման արդյունավետությունը:

Գործողություն 8. *Խրախուսել հանրային ծառայությունների մատուցմանն ուղղված գրահրատարակչական գործունեությունը (01.2016-12.2020):*

Խնդիր 3.2. Զարգացնել լրացուցիչ կրթության միասնական համակարգը՝ ապահովելով հանրային պահանջարկի և համալսարանական առաջարկի միջև փոխկապակցությունը:

1. **Գործողություն 1.** *Ուսումնասիրել լրացուցիչ կրթության հանրային պահանջարկը տարածաշրջանում և հետևել շուկայում իրականացվող լրացուցիչ կրթական ծրագրերին (09.2016 - 12.2020):*

Մասնաճյուղի կողմից տարածաշրջանում լրացուցիչ կրթության հանրային պահանջարկի ուսումնասիրություն դեռևս չի իրականացվել:

Գործողություն 2. *Մշակել լրացուցիչ կրթության հայեցակարգ՝ ԵՊՀ-ում գործող ծրագրերը օգտագործելու և մասնաճյուղի համար մրցունակ ծրագրեր պատրաստելու ուղղությամբ (11.2017 - 12.2020):*

Այս գործողության շրջանակներում մասնաճյուղում դեռևս ոչինչ չի իրականացվել:

Գործողություն 3. *Մշակել տարածաշրջանի հանրային պահանջարկին համապատասխան լրացուցիչ կրթության նոր ծրագրեր՝ ընդլայնելով պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ գործընկերային կապերը:*

Գործողություն 4. Բարձրացնել լրացուցիչ կրթության ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը (01-03.2016):

IV. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԱԿՑԱԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ձարգացնել դասախոսական կազմի ներուժը, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը և բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը:

Խնդիր 4.1. Ձարգացնել դասախոսական կազմի ներուժը:

1. **Գործողություն 1.** Կատարելագործել դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիրը (01-06.2016):

2011-16թթ. մասնաճյուղում իրականացվել է ԵՊՀ գիտական խորհրդի 2010թ.-ի նոյեմբերի 18-ի թիվ 7 նիստում հաստատված Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիրը, որում դասախոսական կազմի որակավորման բարձրացումը դիտվում է թե՛ որպես դասախոսի հարատև կրթության բաղադրիչ՝ նրա մասնագիտական կոմպետենցիաների շարունակական զարգացմամբ, թե՛ որպես համալսարանական կրթության որակի ներքին ապահովման համակարգի կարևորագույն կառուցամաս: Որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիրը հնարավորություն է տալիս դասախոսական կազմի ձեռք բերելու անհատական հետաքրքրություններով ու կարիքներով կամ մասնագիտության ոլորտի նոր պահանջներով պայմանավորված կոմպետենցիաներ:

Մահմանված կրեդիտները հավաքելու համար մասնաճյուղում Մայր բուհի աջակցությամբ ու սեփական նախաձեռնությամբ պարբերաբար իրականացրել է վերապատրաստման դասընթացներ:

Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի շնորհիվ դասախոսները բարելավել են իրենց մասնագիտական կարողությունները, ձեռք են բերել ակադեմիական միջավայրում անգլերենով հաղորդակցվելու բավարար հմտություն, տիրապետում են տեղեկատվական տեխնոլոգիաներին և կարողանում դրանք կիրառել ուսումնական գործընթացում, տիրապետում են դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներին, քաջատեղյակ են կրթագիտական տվյալ բնագավառի գերակա ուղղություններին, ձեռք բերած գիտելիքները կիրառում են կրթական գործընթացներում:

2016-17 ուստարվա ընթացքում մասնաճյուղում դասախոսական կազմի որակավորման բարձրացման դասընթացներ չեն իրականացվել:

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում պրոֆեսորադասախոսական կազմի՝ 2011 թվականից կրեդիտային համակարգով իրականացվող որակավորման բարձրացումը շարունակական բազմափուլ գործընթաց է: Ծրագրի առաջին փուլը (2011-2016թթ.) միտված էր որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան ԵՊՀ ԻՄ դասախոսական կազմի համալրմանը և բարելավմանը:

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2017թ. փետրվարի 11-ի թիվ 22 նիստում հաստատվել է նոր կրթագիտական ծրագիրը՝ «Կրեդիտային համակարգով պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (2017-2021 թթ.)», որով սկսվել է կրթագիտական ծրագրի իրականացման երկրորդ փուլը:

Երկրորդ փուլում (2017-2021թթ.) ծրագրի կառուցվածքի և բովանդակության կատարելագործումը պայմանավորված է ԵՊՀ ԻՄ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մի շարք խնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Այդ մեթոդակա փաստաթուղթը սահմանում է 2017-2021թթ. ծրագրի կառուցվածքը, բովանդակությունը, կրթական և հետազոտական-ուսումնամեթոդական մոդուլների ու դասընթացների կազմը, դրանց՝ ECTS կրեդիտներով արտահայտված աշխատածավալները և ծրագրի ավարտական պահանջները: Կրեդիտային համակարգը դասախոսին հնարավորություն է տալիս որակավորումը բարձրացնելու ուսուցման անհատական ծրագրով՝ կրթական և հետազոտական-ուսումնամեթոդական մոդուլների հարաբերակցության ընտրությամբ ապահովելով իր համար նախընտրելի հմտությունների զարգացումը:

Գործողություն 2. *Մշակել դասախոսական կազմի համալրման և կատարելագործման երկարաժամկետ ծրագիրը, համաձայն որի՝*

-կատարելագործել դասախոսների պաշտոնների տեղակալման չափորոշիչները և գործընթացները,

- ապահովել հիմնական դասախոսական կազմի պարտադիր և լիարժեք մասնակցությունը որակավորման բարձրացման կրթական ծրագրերին (09 - 12.2016):

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում պրոֆեսորադասախոսական կազմի համալրումը կատարվում է կրթական ծրագրերի նպատակները պատշաճորեն իրականացնելու անհրաժեշտությամբ:

Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմը փորձառու ու առաջատար մասնագետներով ապահովելու գործում մասնաճյուղին մեծապես աջակցում են ԵՊՀ-ի համապատասխան ամբիոնները՝ մասնաճյուղ ուղարկելով մրցութային կարգով իրենց մոտ աշխատանքի անցած լավագույն կադրերին:

Մասնաճյուղի դասախոսական անձնակազմը համարելու համար հայտարարվում է մրցույթ, որի միջոցով ստուգվում են մրցույթին դիմած դասախոսների մասնագիտական որակների համապատասխանությունը (տվյալ ժամանակահատվածի համար) կրթական ծրագրերի կրթական վերջնարդյունքների իրականացման պահանջներին, կամ աշխատանքի են հրավիրվում ոլորտի բարձր որակավորում ունեցող մասնագետներ:

2009թ. դեկտեմբերին գիտական խորհրդի կողմից հաստատվել է մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման կանոնակարգ, որի մեջ ներառված են դասախոսական կազմի տարակարգերի մասին ընդհանուր դրույթներ և պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման ընտրությունների և տեղակալման կարգերը: Ըստ կանոնակարգի՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում գործում են

պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների հետևյալ տարակարգերը՝ **դասախոս, ասիստենտ, դոցենտ պրոֆեսոր:**

Սակայն, ըստ տարակարգերի դասախոսական կազմի ընտրության, պաշտոնների տեղակալման և առաջընթացի ապահովման փորձի հետ մեկտեղ ինչպես մայր բուհում, այնպես էլ մասնաճյուղում դեռևս չկան ըստ կրթական ծրագրերի դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող կոնկրետ պահանջներ:

Վերոնշյալ կարգի ընդհանուր դրույթներից էլնելով՝ ամբիոններն իրենք են որոշում կոնկրետ կրթական ծրագիրը սպասարկող դասախոսների մասնագիտական գիտելիքներին և կարողություններին ներկայացվող հստակ պահանջներ, հիմք ընդունելով ծրագրի կրթական վերջնարդյունքները: Նախատեսվում է ամբիոններում կրթական ծրագրերի պատասխանատուների հետ միասին մշակել կրթական ծրագիրն իրականացնող դասախոսական կազմին ներկայացվող հստակ չափորոշիչներ:

Մասնաճյուղում ներդրված 2011-2016թթ. Կրեդիտային համակարգով դասախոսների վերապատրաստման կրթագիտական ծրագրի շրջանակներում ըստ ժամանակացույցի իրականացվել է հիմնական դասախոսական կազմի վերապատրաստում: Նրանք որակավորման բարձրացման անհատական ծրագրի իրականացման շրջանակներում մասնակցել են կրթագիտական ծրագրի երկու հիմնական կառուցամասերով՝ կրթական և հետազոտական-մեթոդական նախատեսված տարբեր դասընթացների («Լսարանային ցուցադրությունների պատրաստում» (PowerPoint), Ուսուցողական Case-փաթեթ, «Դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ», «Կրթական ծրագրերի մշակման հիմունքներ», Մանկավարժական հոգեբանություն, Մասնագիտության արդի հիմնախնդիրներ) և այլ մասնագիտական դասընթացներ:

2017թ.-ից դեռևս նոր կրթագիտական ծրագիր չի իրականացվում:

Գործողություն 3. *Մշակել և իրականացնել երիտասարդ դասախոսների մանկավարժական և հոգեբանական հմտությունները զարգացնող վերապատրաստման դասընթացներ (09.2016 - 12.2016):*

Երիտասարդ դասախոսների մանկավարժական և հոգեբանական հմտությունները զարգացնելու համար մասնաճյուղի «Երիտասարդ դասախոսների աջակցման և վերապատրաստման» կենտրոնի կողմից իրականացվել են համապատասխան վերապատրաստման դասընթացներ, որոնց մասին գրվել է սույն փաստաթղթի **խնդիր 1.1-ի 1-ին գործողության** կատարողականի վերլուծության շրջանակներում:

Գործողություն 4. *Սահմանել կրթական ծրագրերին համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ ծրագրի կրթական վերջնարդյունքների (09.2016 -09.2017):*

Մասնաճյուղի կարևորագույն ներուժը և հաջողության հիմնական գրավականը նրա բարձրակարգ գիտամանկավարժական կազմն է: Հաշվետու ուստարում մասնաճյուղում դասավանդել են հիմնական և համատեղությամբ 126 դասախոսներ, այդ թվում՝ 3 պրոֆեսոր

(2.4 %), 38 դոցենտ (30,1 %), 51 ասիստենտ և 34 դասախոս (67.5 %), որոնցից գիտական աստիճանով՝ 3 դոկտոր և 66 թեկնածու, ընդ որում՝ գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը 50 %-ից ավելի է: 2016-2017 ուստարում մասնաճյուղն ունեցել է 1 դոկտորանտ, 2 ասպիրանտ և 9 հայցորդ:

Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հիմնական պահանջները ձևակերպված են ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված տվյալ ծրագրերին համապատասխանող բակալավրատի կրթական չափորոշիչներում: 2016թ.-ից մասնաճյուղում սկսված է բակալավրի կրթական ծրագրերի վերանայման գործընթացը, կրթական ծրագրերը ներառում են կրթական վերջնարդյունքները, որոնցով էլ պայմանավորվում է և սահմանվում է ծրագիրն իրականացնող դասախոսական կազմի բազային կրթության, հետազոտական և ուսումնամեթոդական գործունեության և մասնագիտական որակավորման վրա դրվող պահանջները: Մասնագիտական հատուկ դասընթացները հիմնականում դասավանդում են գիտական աստիճան ունեցող փորձառու և առաջատար մասնագետները:

2018-19 ուստարվա կրթական ծրագրերի վերանայման գործընթացը մասնաճյուղում արդեն սկսված է և ՄԿՈԱ բաժին են ներկայացվել ծրագրի առաջարկի հայտերը՝ ծրագիրն իրականացնող դասախոսական կազմով:

Գործողություն 5. *Դասախոսների համար ստեղծել համապատասխան պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ մասնակցելու կրթության բնագավառում իրականացվող նորագույն ծրագրերին (09.2016-09.2017):*

Մասնաճյուղը վարում է գիտության և կրթության ժամանակակից նվաճումները, դասավանդման, ուսումնառության և գնահատման արդյունավետ մեթոդները ուսումնական գործընթացում և դասաձուսական կազմի գիտական և ուսումնական գործընթացում ներդնելու քաղաքականություն: Մասնաճյուղում ստեղծված են բոլոր պայմանները դասախոսների ուսումնական և գիտահետազոտական գործունեության ապահովման համար: Գործում են ժամանակակից տեխնիկական սարքավորումներով կահավորված համակարգչային սրահներ ու լսարաններ, աշխատատեղերը հագեցած են համակարգիչներով, գործում է անվճար ինտերնետ կապ, գրադարանը պարբերաբար համայնքում է մասնագիտական գրականությամբ, որոնցից շատերը դասընթացների արդյունավետ իրականացման համար ձեռք են բերվում դասախոսների առաջարկով: Մասնաճյուղը դասախոսների համար իրականացրել է վերապատրաստման դասընթացներ «Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի (2011-16թթ.)» շրջանակներում, այդ ծրագիրը շարունակական է և արդեն ընթացքի մեջ է 2017-21թթ. կրթագիտական ծրագիրը:

Դասախոսների ուսումնամեթոդական և գիտական գործունեության խթանման համար մասնաճյուղն ունի իր մեխանիզմները: Խրախուսվում են բոլոր նորարարական մոտեցումները ուսումնառության գործընթացում (տեխնիկական միջոցների կիրառում, շնորհանդեսներով կամ առցանց դասընթացի կազմակերպում, case-փաթեթի իրականացում,

ուսանողների ինքնուրույն ու ստեղծագործական ունակությունները զարգացնելու նոր մեթոդների կիրառում և այլն): Տրամադրվում են գործողություններ գիտաժողովների մասնակցելու, գիտական զեկուցումներ կարդալու համար, որոնց համար նաև մասնակիցները խրախուսվում են: «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուում մասնաճյուղի դասախոսների հոդվածները տպագրվում են անվճար:

Քննարկման փուլում է «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը»:

Գործողություն 6. *Լրամշակել դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերը (09.2016-12.2016):*

Դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերը վերանայվում և հաստատվում են հիմնականում յուրաքանչյուր ուստարվա 2-րդ կիսամյակում, հաջորդ ուստարվա համար դասախոսների ուսումնական բեռնվածությունը հաշվելու համար: Վերանայման ժամանակ հիմք է ընդունվում ԵՊՀ կողմից հաստատված համապատասխան փաստաթուղթը՝ ԵՊՀ գիտական խորհրդի 2017թ. մարտի 30-ի 6/2 որոշմամբ հաստատված «ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական հաշվարկի նորմերը»:

Մասնաճյուղի գիտական խորհրդի 2017թ.-ի ապրիլի 8-ի թիվ 23 նիստում հաստատվել են ***«ԵՊՀ ԻՄ առկա և հեռակա ուսուցման ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերը»:***

Նախկինում գործող նորմերի համեմատ ավելացել են որոշ դրույթներ: Այսպես, օրինակ, նոր նորմերում որոշակի ժամաքանակներ են նախատեսված բակալավրիատի կրթական ծրագրերի ղեկավարի, ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղարի, ԵՊՀ գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության աշխատանքներին մասնակցության համար: Պրակտիկաների բարելավման նպատակով էապես ավելացվել են արտադրական պրակտիկաներին հատկացվող ժամաքանակները, իսկ բակալավրիատի ուսումնական պրակտիկայի մասում տարանջատվել են պրակտիկաների տարբեր տեսակները:

Խնդիր 4.2. Ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգ:

Այս խնդրի 2-6 կետերով պայմանավորված գործողությունները հնարավոր կլինի իրականացնել մասնաճյուղի կառուցվածքում Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի ստեղծմամբ:

Գործողություն 1. *Մշակել և ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման հայեցակարգ (01-12.2016):*

Մասնաճյուղում ընթացքի մեջ է մարդկային ռեսուրսների կառավարման հայեցակարգի մշակման գործընթացը, որով սահմանվելու են ԵՊՀ ԻՄ մարդկային

ռեսուրսների կառավարման համակարգի զարգացման ուղղությունները, իրականացվելիք բարեփոխումների առաջնահերթությունները, մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի հիմնական գործառնությունները: Հայեցակարգի նպատակն է նախանշել անձնակազմի վարչական, տեխնիկական և որոշ այլ տարակարգերի մասնագիտական զարգացման գործընթացի, արդյունավետության գնահատման և մոնիթորինգի ապահովման համակարգերի ներդրումը, մարդկային ռեսուրսների կառավարման տարբեր գործընթացների ավտոմատացումը և այլն:

Գործողություն 2. *Իրականացնել մարդկային ռեսուրսների կառավարման կարողությունների զարգացման ծրագիր (01.2017-12.2018):*

Գործողություն 3. *Մշակել պաշտոնի անձնագրեր վարչական աշխատողների համար (01-12.2016):*

Գործողություն 4. *Մշակել աշխատանքի նկարագրեր ուսումնասօժանդակ, ինժեներատեխնիկական և այլ տարակարգերի աշխատողների համար (01-12.2016):*

Գործողություն 5. *Մշակել և ներդնել վարչական, ուսումնասօժանդակ, ինժեներատեխնիկական տարակարգերի աշխատողների վերապատրաստման և ատեստավորման համակարգ (01.2017-12.2020):*

Գործողություն 6. *Վարչական համակազմի՝ ոչ բարձրագույն կրթություն ունեցող աշխատակիցների համար կազմակերպել որակավորման դասընթացներ և հետագայում անցկացնել ատեստավորում (01.2017-12.2020):*

Խնդիր 4.3. Բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը, բազմազանեցնել իրականացվող սոցիալական ծրագրերը:

Գործողություն 1. *Զարգացնել դասախոսների տարբերակված հավելավճարի մեխանիզմը (09.2016 -09.2020):*

Այս գործողության իրականացման շրջանակներում մասնաճյուղն առաջնորդվել է ԵՊՀ համապատասխան գործընթացի արդյունքներից («Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգ», ԵՊՀ գիտական խորհուրդ, 04.05.2017թ.): Մասնաճյուղում քննարկման փուլում է «ԵՊՀ ԻՄ-ում աշխատողների աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը», որով սահմանված են և առանձին աղյուսակներով ու դրույթներով ներկայացված են մասնաճյուղի աշխատողներին գիտահետազոտական, ուսումնամեթոդական, կազմակերպչական աշխատանքների որոշ տեսակների կատարման համար լրավճարի վճարման կարգը, պայմանները, մասնավորապես գործունեության նկարագիրը, միավոր աշխատանքի գինը՝ ՀՀ դրամով, մեկ աշխատողին հասանելիք լրավճարի հաշվարկման կարգը, ուսանողական հարցման արդյունքներով դասախոսներին վճարվող լրավճարների հաշվարկման կարգը և այլն:

Գործողություն 2. Մշակել վարչական և ուսումնասովորական աշխատողների տարբերակված հավելավճարի չափանիշներ և համապատասխան կարգ (01 - 12.2020):

Գործողություն 3. Բարձրացնել աշխատողների հիմնական աշխատավարձը՝ հաշվի առնելով ՀՀ գնաճի տեմպերը՝ ըստ պաշտոնական վիճակագրության (01.2016 -12 .2020):

Հաշվետու ուստարում մասնաճյուղի աշխատակիցների հիմնական աշխատավարձի բարձրացում չի եղել՝ պայմանավորված վերջին տարիներին ընդունելության նվազող ցուցանիշներով և, հետևաբար, ֆինանսական միջոցների պակասով: Ըստ ժամանակացույցի՝ այս գործողությունը պետք է իրականացվի 2016-2020թթ. ընթացքում, հետևաբար աշխատակիցների աշխատավարձի բարձրացում կարող է լինել հետագայում:

Գործողություն 4. Ներդնել սոցիալական աջակցության ծրագրեր (01.2016 -12.2020):

Մասնաճյուղում սոցիալական աջակցության ծրագրեր ներդրված չեն:

Սակայն մասնաճյուղի դասխոսական կազմի գիտահետազոտական և ուսումնամեթոդական հոդվածները «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուում տպագրվում են անվճար:

Գործողություն 5. Զարգացնել սոցիալական ենթակառուցվածքը, բարելավել հասարակական սննդի կետերի պայմանները, ապահովել ԵՊՀ հանգստի և մարզաառողջարանային բազաների մատչելիությունը մասնաճյուղի բոլոր աշխատողների և սովորողների համար (01.2016-12.2020):

Մասնաճյուղն իր սննդի կետերը չունի, սակայն պարբերաբար իրականացնում է իր տարածքում գործող հասարակական սննդի օբյեկտներում գնագոյացման քաղաքականության և սննդի որակի մշտադիտարկում և հսկողություն: Առայժմ սննդի սեփական ենթակայության կետեր ունենալու նախագծեր չկան:

Իսկ մասնաճյուղի աշխատակիցները և ուսանողներն օգտվում են ԵՊՀ հանգստի և մարզաառողջարանային բազաների ծառայությունից, դրա համար ապահովված է նրանց մատչելիությունը, տեղեկատվությունը նրանց ծառայությունից օգտվելու պայմանների մասին:

Գործողություն 6. Ավելացնել սոցիալական ծրագրերի համար հատկացված հաշվեկշիռը մասնաճյուղի բյուջեում (01.2016-12.2020):

V. ՈՐԱԿՑԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Ձևավորել կրթական ծրագրերի իրականացման պահանջները բավարարող համալսարանական ենթակառուցվածքներ:

Խնդիր 5.1. Զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանները, արդիականացնել մասնաճյուղի ենթակառուցվածքները:

Գործողություն 1. Կրթական ծրագրերի պահանջներից ելնելով՝ տեխնոլոգիապես վերազինել առկա լսարաններն ու ուսումնական լաբորատորիաները, ձևավորել նորերը (01.2016-12.2020):

Մասնաճյուղի 9 լսարաններ (2-ը բնական գիտությունների, 5-ը հումանիտար գիտությունների, 1-ը տնտեսագիտության, 1-ը Կիրառական արվեստի ֆակուլտետներում) հազեցվել են պրոյեկտորով և համակարգչով, որտեղ իրականացվում են շնորհանդեսներով և առցանց իրականացվող դասընթացները: Ուսումնամեթոդական վարչությունում ավելացվել է համակարգիչներով համալրված 2 աշխատատեղ: 2017թ. հուլիս-օգոստոս ամիսներին ուսումնական և աշխատանքային պայմանները բարելավելու նպատակով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում իրականացվել են մի շարք հիմնանորոգման և ընթացիկ շինվերանորոգման աշխատանքներ, ձեռք է բերվել նոր գույք, համակարգչային տեխնիկա, տեսասարքեր և այլն: Ընթացքի մեջ են Կիրառական արվեստի ֆակուլտետի հագուստի մոդելավորման արվեստանոցի և դրա հարակից միջանցքի ընթացիկ վերանորոգման աշխատանքները:

Գործողություն 2. *Արդիականացնել նիստերի դահլիճի, խորհրդակցությունների սենյակի տեխնիկական հազեցվածություն (01.2016-12.2020):*

Հաշվետու 2016-17 ուստարին մասնաճյուղում սկսվել է վերակառուցված նիստերի դահլիճով: Դահլիճի հատակը հարթեցվել է, հին գորգը փոխարինվել է նոր որակյալ գորգով (170 ք.մ.), բեմի կախովի առաստաղը նորոգվել է, նրա մեջ տեղադրվել են 14 հատ ԼԵՂ-տեխնոլոգիաներով լուսատուներ, դահլիճը հազեցվել է անհրաժեշտ տեխնիկական սարքերով:

Վերակառուցվել է նաև խորհրդակցությունների սենյակը: Առաստաղը և պատերի վնասված մասերը նորոգվել են լատեքսով (44 ք.մ.), տախտակե հատակը ամրացվել է, նրա վրա պատրաստվել է լամինատե հատակ (48 ք.մ.): Խորհրդակցությունների սենյակի պատի վրա ամրացվել է լայնեկրան հեռուստացույց, համալրվել է նաև տեխնիկապես (2 նոր դինամիկներով և ուժեղացուցիչներով):

Գործողություն 3. *Արդիականացնել մարզադահլիճը և մարզասրահը (01.2016-12.2020):*

2017-18 ուստարին սկսվել է արդիականացված մարզադահլիճով և մարզասրահով: 2017թ.-ի հուլիս-օգոստոս ամիսներին հիմնովին վերանորոգվել է մասնաճյուղի մարզադահլիճը: Ընթացքի մեջ են ուսանողների համար նոր հանդերձասենյակների շինվերանորոգման աշխատանքները: Մարզադահլիճի մուտքի հարակից տարածքում ուսանողների համար մոնտաժվել են մարմնակրթական մարզասարքեր: Նախատեսված է նշված տարածքի ծածկույթը ամբողջությամբ փոխարինել ցեմենտբետոնե ծածկույթով և այդտեղ փռել արհեստական գորգ: Մարզասրահի հատակը և նստարանները յուղաներկվել են (259,1 ք.մ.), լատեքսով նորոգվել են մարզասրահի պատերը (279,1 ք.մ.), նորոգվել են հանդերձարանների առաստաղները և պատերը: Գնվել է նոր մարզագույք՝ ցանցեր, գնդակներ, սպորտային ներքնակներ:

Մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի խեցեգործության և քանդակի արվեստանոցների տարածքները վերանորոգվել և վերակահավորվել են որպես ժամանակակից մարզասրահ:

Գործողություն 4. *Իրականացնել մասնաճյուղի հյուրանոցային համալիրի վերանորոգման աշխատանքներ (01.2016-12.2018):*

Կազմակերպվում և հաջողությամբ լուծվում են Երևանից ժամանող դասախոսների հանգստի և գիշերելու հարցերը: Ուսումնական մասնաշենքերից ոչ հեռու 2006թ.-ին կառուցված մասնաճյուղի հյուրանոցային համալիրը, որը նախատեսված էր 18 դասախոսի համար, ապահովում է շուրջ 70 դասախոսի կենցաղային խնդիրները, հանգստի ու հարմարավետ աշխատանքի պայմանները: 2010թ. համալիրը ընդարձակվել է ևս մեկ՝ չորս հոգու համար նախատեսված մասնաբաժնով և հանգստի ու աշխատանքի հարմարավետ սենյակով: Համալիրն ապահովված է ինտերնետ կապով, կոմունալ բոլոր հարմարություններով: Կա մշտական տաք ջուր և ցնցուղ:

Դասախոսների հանգիստը կազմակերպելու համար հաշվետու ուստարում համալիրի հարակից կանաչ գոտում, գետի ափին կառուցվել է հարմարավետ զրուցարան, որն ունի նաև աշխատելու համար անհրաժեշտ պայմաններ:

Գործողություն 5. *Իրականացնել ուսումնական մասնաշենքերի վերանորոգման աշխատանքներ՝ գույքահեռ ապահովելով հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար հարմարեցված պայմաններ (01.2016-12.2018):*

Հաշվետու ուստարում ուսումնական գործընթացի բարելավման և արդյունավետ կազմակերպման համար մասնաճյուղում կատարվել են լսարանների, արվեստանոցների, լաբորատորիաների և այլ ուսումնական տարածքների վերանորոգման շուրջ 1781 ք.մ. աշխատանքներ (վերանորոգվել է 102մ² միջանցք, 1679մ² առաստաղ), 365 ք.մ. փայտե հատակ վերանորոգվել կամ փոխարինվել է, հիմնանորոգվել է 300 ք.մ. ցեմենտբետոնե ծածկույթ, 13.3զծ/մ աստիճանավանդակի հնամաշ բազրիքները փոխարինվել են մետաղականով, կատարվել է ուսումնական տարածքների տեխնիկական վերազինում և այլն:

Հաշվետու ուստարվա ուսումնառության գործընթացը կազմակերպվել է հետևյալ ռեսուրսներով՝ տեսասարքով համալրված համակարգչային 5 սրահ և 5 լսարան, ինտերակտիվ ուսուցման (On-line) 1 լսարան, լեզուների ուսուցման 2 մասնագիտական լսարան, 1 մասնագիտական լաբորատորիա, 8 արվեստանոց: Առանձնահատուկ պետք է նշել ԵՊՀ-ի թանկարժեք նվիրատվության՝ էլեկտրոնային տախեոմետրի մասին, որով «Քարտեզագրություն և կադաստրային գործ» կրթական ծրագրի ուսումնառողները զարգացնում են իրենց մասնագիտական կարողությունները: Համապատասխան լսարանները և աշխատատեղերը հագեցված են եղել 53 տպող և պատճենահանող սարքերով, ձեռք է բերվել 3 գունավոր տպող սարք:

Գործողություն 6. Վերանորոգել և արդիականացնել գրադարանի ընթերցասրահներն ու գրապահոցը (01.2016-12.2020):

Գործողություն 7. Ձարգացնել ուսումնական մասնաշենքերի անվտանգության ենթակառուցվածքը (01.2016-12.2017):

Մասնաճյուղի ուսումնական մասնաշենքերի անվտանգությունն իրականացվում է համապատասխան անձնաց կողմից կենտրոնական մասնաշենքի գլխավոր մուտքի դարպասների մոտ: Այնտեղ կառուցվել է պահակակետ: Մասնաճյուղի երկու մասնաշենքերում աշխատում են հսկիչներ: Բացի դրանից կենտրոնական մասնաշենքի ամբողջ արտաքին տարածքը տեսահսկվում է: 2017թ.-ի սեպտեմբերից տեսահսկման սարքեր են տեղադրվել Բնական գիտությունների և Կիրառական արվեստի ֆակուլտետների միջանցքերում: Այս պահին մասնաճյուղում տեղադրված են 7 տեսախցիկներ:

Գործողություն 8. Արդիականացնել օպերատիվ տպագրական աշխատանքներ իրականացնող ենթակառուցվածքը (01.2016-12.2017):

Հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության 3-րդ գլխի 15-րդ հոդվածի 6 և 7 կետերի պահանջները՝ մասնաճյուղում կանոնադրական նպատակներ իրականացնելու համար օրենքով սահմանված կարգով վճարովի և անվճար հիմունքներով որոշակի ծառայություններ կազմակերպելու, ինչպես նաև ուսանողների ուսման և աշխատակիցների ընթացիկ գործունեության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու համար տնօրենի 10.12.2016թ.-ի թիվ 225/1 հրամանով ստեղծվել է պատճենահանման և տպագրական գործունեության կազմակերպման ծառայություն՝ առանձին աշխատասենյակով և տեխնիկական համապատասխան միջոցներով: Ընդ որում պատճենահանման յուրաքանչյուր էջի համար ուսանողներից գանձվում է 6 դրամ, իսկ մասնաճյուղի դասախոսների և առանձին ծառայությունների աշխատակիցների համար իրականացվում է անվճար ծառայություն՝ համապատասխան հաշվառումով: Վերը նշված ծառայություններից ստացված գումարները սահմանված կարգով և ժամկետներում փոխանցվում են մասնաճյուղի հաշվարկային հաշվին:

Խնդիր 5.2. Ձարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերն ու գրադարանային ենթակառուցվածքները:

Գործողություն 1. Մշակել տեղեկատվական համակարգերի զարգացման հայեցակարգ (01.2016):

Գործողություն 2. Հիմնել «սովորող-համալսարան» վիրտուալ տիրույթ՝ վարչական, ուսումնական գործընթացներին (առարկայական ծրագրեր, հարցաշարեր, գրականություն և այլն) առնչվող տեղեկատվությամբ (01.2017-12.2018)

Վարչական, ուսումնական գործընթացներին (առարկայական ծրագրեր, հարցաշարեր, գրականություն և այլն) առնչվող տեղեկատվության ապահովման համար «սովորող-համալսարան» վիրտուալ տիրույթ ստեղծելու գործընթացը մասնաճյուղում սեփական

հնարավորություններով առայժմ իրականացված չէ: Մասնաճյուղում ուսանող-դասախոս փոխադարձ կապն առայժմ իրականացվում է էլեկտրոնային փոստերի միջոցով: Այս առումով ակնկալվում է Մայր բուհի աջակցությունը՝ ԵՊՀ-ում մեկնարկած «Ուսանող-Համալսարան» վիրտուալ տիրույթում (ուսանողական ինտրանետ, virtual.ysu.am) նաև մասնաճյուղը ներառելու ուղղությամբ, որ մասնաճյուղի ուսանողները կներառվեն «Ուսանողական ինտրանետ» համակարգում, դասախոսներին կտրամադրվեն համապատասխան էլեկտրոնային հասցեներ այդ վիրտուալ տիրույթում:

Գործողություն 3. *Ձարգացնել ներքին համակարգչային լարային և անլար ցանցը՝ մեծացնելով օգտատերերի քանակը և կապուղիների թողունակությունը (01.2017-12.2018):*

Մասնաճյուղում գործում է ներքին համակարգչային ցանց, որը միավորում է շուրջ 172 համակարգիչ: Գրադարանի ընթերցասրահին ապահովված է անվճար WIFI ինտերնետ կապով:

Գործողություն 4. *Մշակել գրադարանի զարգացման հայեցակարգ (01.2016-12.2020):*

ԵՊՀ ԻՄ գրադարանի զարգացման հայեցակարգի մշակումն ընթացքի մեջ է: Հայեցակարգի մշակման համար ստեղծված աշխատանքային խումբը կազմել է հայեցակարգի նախագիծը, այն արդեն ներկայացվել է ստորաբաժանումների քննարկմանը: 2017-2018 ուստարվա առաջին կիսամյակում Հայեցակարգը կներկայացվի ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանը:

Գործողություն 5. *Ավարտել հիմնական ուսումնական գրականության թվայնացման գործընթացը (01.2016-12.2020):*

Գրադարանի էլեկտրոնային քարտարանի տարբերակի ներդրման համար իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ, որի վերջնարդյունքում կներդրվի «KOHА» համակարգը: Համակարգն առայժմ չի ներդրվել տեխնիկական սարքերի բացակայության պատճառով: Նախատեսվում է գրադարանային սպասարկման «KOHА» համակարգը գործարկել 2018 թվականի սեպտեմբերից: 2017թ.-ի հոկտեմբերից ներդրվել է գրադարանի կայքը, որի միջոցով արդեն թվայնացվել է շուրջ 100 գիրք: Գրականության թվայնացումը շարունակվում է:

Գործողություն 6. *Ընդլայնել ուսանողների հասանելիությունը միջազգային գրադարանային ցանցերին և կոնսորցիումներին (01.2016-12.2020):*

ԵՊՀ ԻՄ աշխատակիցները և ուսանողները հնարավորություն ունեն օգտվելու ԵՊՀ գրադարանի կողմից առաջարկվող միջազգային գրադարանային ցանցերից և կոնսորցիումներից: Արտասահմանյան գիտական կազմակերպությունների և գրադարանների հետ համագործակցությունը բացակայում է, նախատեսվում է նման

համագործակցությունների ծրագրեր սկսել 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակից սկսած:

Գործողություն 7. *Ինտենսիվացնել ուսումնագիտական գրականության արդիականացման գործընթացը (01.2016-12.2020):*

Մասնաճյուղի գրադարանային ֆոնդը հաշվետու ուստարում համալրվել է շուրջ 700 միավոր գրականությամբ և ներառում է 15324 գիրք, որից 6510-ը դասագիրք է, 2921-ը ծրագրային գեղարվեստական, 3357-ը՝ ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրքեր են, գրադարանը համալրված է 1950 էլեկտրոնային-տեղեկատվական և 586 այլ նյութերով՝ գիտական տեղեկագրեր ու հանդեսներ, քարտեզներ և այլն: Մեծաքանակ ուսումնագիտական և մասնագիտական գրքեր է հատկացրել Մայր բուհը:

Գործողություն 8. *Բարձրացնել գրադարանային ծառայությունների որակը (01.2016-12.2020):*

Գրադարանային ծառայությունների որակը բարձրացնելու համար 2017-2018թթ ուստարվա հոկտեմբերից գործարկվել է ԵՊՀ ԻՄ էլեկտրոնային գրադարանի համացանցային կայքը (բաց և հասանելի)՝ Ijevanlib.y-su.am: Այն ուսանողներին և դասախոսներին ըստ ուղղությունների առաջարկում է էլեկտրոնային գրքեր, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, տրամադրում է «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուները, առաջարկում է մի շարք ծառայություններ:

VI. ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները, խթանել ուսանողական կազմակերպությունների աշխատանքները:

Խնդիր 6.1. **Զարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները՝ խթանող կրթական միջավայր ապահովելու նպատակով:**

Գործողություն 1. *Վերհանել ուսանողների կրթական և այլ կարիքները, գնահատել նրանց բավարարվածությունը մատուցվող ծառայություններից (01.2016-12.2017):*

Մասնաճյուղի ՄԿՈԱ բաժինը ուսումնասիրման տարբեր մեթոդներով (հարցումներ, ֆոկուս-խմբեր) մշտապես վեր է հանում ուսանողների կրթական կարիքները, հավաքագրում, վերլուծում, ապա գնահատում նրանց բավարարվածությունը մատուցվող ծառայություններից: Սոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքները և վերլուծությունները հրապարակայնացվում են, կազմվում է առաջարկությունների փաթեթ, ուղարկվում համապատասխան ստորաբաժանումներին:

2011-16թթ. կատարած տարբեր ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա **ամփոփել է** արտաքին շահակիցների կարծիքները մասնաճյուղի ուսանողների, շրջանավարտների, պրակտիկանտ-ուսանողների և ընդհանրապես մասնաճյուղում

ուսումնառության որակի վերաբերյալ, **ուսումնասիրել և նույնպես ամփոփել է** ներքին շահակիցների կարծիքները մասնաճյուղի, ուսանողների գնահատման, ուսումնառությունից բավարարվածության, պրակտիկաների կազմակերպման վերաբերյալ, ըստ 2011-16 տարիների ընթացքում 3 անգամ իրականացրած մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների վերլուծության և ԵՊՀ ԻՄ զարգացման 2011-15թթ. ռազմավարական ծրագրի իրականացման վերլուծության արդյունքների **2017թ. փետրվար ամսին կազմել է** հավաքագրված խնդիրների ամփոփ փաթեթն ըստ ոլորտների, ներքին և արտաքին շահակիցների կողմից կատարված առաջարկությունների ամփոփ փաթեթն ըստ գործընթացների: Փաթեթում խնդիրները հավաքագրվել են ըստ ոլորտների, նշվել են դրանց լուծման համար պատասխանատու ստորաբաժանումները և այլն: Ըստ ստորաբաժանումների կազմվել են նաև ենթափաթեթեր: Փաթեթները ներկայացվել են տնօրենությանը՝ քննարկման և ստորաբաժանումներին համապատասխան հանձնարարականով ուղարկելու նպատակով:

Գործողություն 2. *Զարգացնել ուսանողներին մատուցվող խորհրդատվական և լրացուցիչ կրթական ծառայությունները (01.2016-12.2020):*

Ուսանողներին մատուցվող խորհրդատվական և լրացուցիչ կրթական ծառայությունները մասնաճյուղում իրականացնում են ամբիոնները, կրթական ծրագրերի պատասխանատուները, ուսումնական խորհրդատուները, շրջանավարտների և արտաքին շահակիցների հետ աշխատանքները համակարգողը, մասնաճյուղային և ֆակուլտետային ուսանողական խորհուրդները:

Տարբեր դասընթացների շրջանակներում իրականացվում են տարաբնույթ գործնական դասեր մասնաճյուղի տարբեր ստորաբաժանումներում (հաշվապահությունում, Անձնակազմի կառավարման բաժնում, Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնում), բանկերում (ՀՀ կենտրոնական բանկում, ՎՏԲ-Հայաստան բանկի Իջևանի մասնաճյուղում), թանգարաններում և հյուրանոցային համալիրներում (Իջևանի պատմաերկրագիտական թանգարանում, «Ապագա տուր» հյուրանոցային համալիրում, Դիլիջանի երկրագիտական թանգարանում, Թուֆենկյան «Հին Դիլիջան» համալիրում, Պարույր Սևակի տուն-թանգարանում), տարբեր ձեռնարկություններում (Պոռոչյանի կոնյակի գործարանում, Երևանի կոնյակի գործարանում, Իջևանի գինու և կոնյակի գործարանում), բաց-դասեր պատմամշակութային վայրերում (Գոշավանքում, Աշոտ Երկաթի բերդում, Մորու ձորի վանքում) և այլն:

Մասնաճյուղում կրթական ծրագրերի պատասխանատուների միջոցով իրականացվում է խորհրդատվական արտալսարանային ծառայություններ:

2016թ. սեպտեմբերից մասնաճյուղում իրականացվել են ֆրանսերեն և անգլերեն լեզուներով արտալսարանային դասընթացներ:

Գործողություն 3. *Ներդնել առարկայական խորհրդատվությունների համակարգ բակալավրի ծրագրերի առաջին կուրսի ուսանողների համար, որոնք կիրականացնեն ավարտական կուրսերի ուսանողները (01.2017-12.2018):*

Ավարտական կուրսերի ուսանողների կողմից առաջին կուրսեցիներին անհրաժեշտ առարկայական խորհրդատվությունների իրականացման համար մասնաճյուղում ներդրված հատուկ համակարգ դեռևս չի գործում, բայց այդ ուղղությամբ աշխատանքներն իրականացվում են ֆակուլտետներում ուսումնական խորհրդատուների, ամբիոնների վարիչների, կրթական ծրագրերի պատասխանատուների նախաձեռնությամբ: Առարկայական խորհրդատվական դասընթացներն իրականացնելու համար ներգրավվում են ավարտական կուրսերի բարձր առաջադիմությամբ ուսանողներ, նաև դասախոսներ:

Մասնաճյուղում հրավիրվում են նաև մասնագետներ ուսանողների ցանկությամբ որոշ դասընթացներ անցկացնելու համար:

2017թ. հոկտեմբերին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կայացել է վերապատրաստման դասընթաց անգլերեն լեզու դասավանդողների և ուսանողների համար (Teacher Training Workshop “Empowering Recipes For EL Teachers”): Այն իրականացվել է Հայաստանի ԱՄՆ դեսպանատան շրջանավարտների դրամաշնորհային ծրագրի (US Embassy in Armenia within the US Alumni Outreach Grant Program) ֆինանսավորմամբ, Անգլերեն դասավանդողների հայկական ասոցիացիայի (AELTA), ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի ու Անգլերենի ռեսուրս կենտրոնի համատեղ ջանքերով:

2017թ. փետրվար-մարտ ամիսներին ԵՊՀ ԻՄ-ում կայացել է «Խաղերի ծրագրավորում» թեմայով դասընթացների շարքը, որը վարել է “Game Lab”-ի հիմնադիրը: Դասընթացի շրջանակներում ուսանողներին ներկայացվել է խաղային ոլորտը և խաղերի ծրագրավորման արդիականությունը, ուսանողները ծանոթացել են վիդեո խաղերի ստեղծման համար օգտագործվող գործիքներին, “Game Lab”-ի կողմից ստեղծված խաղերին, մասնակիցներն ընթացքում գրել և ներկայացրել են պարզագույն խաղեր:

Գործողություն 4. *Բազմազանեցնել մարզամշակութային ծրագրերը, զարգացնել ուսանողական ակումբային համակարգը՝ շեշտադրելով ինտելեկտուալ, բնապահպանական, երկրագիտական և հայրենաճանաչողական բնույթի միջոցառումները (01.2016-12.2020):*

Ուսանողական և ուսումնագիտական միջավայրի ձևավորման գործում իրենց անփոխարինելի տեղն ունեն ուսանողական համապատասխան կառույցները: Հաշվետու ուստարում **ուսանողական խորհրդի** (ՈՒԽ) և **Ուսանողական գիտական ընկերության** (ՈՒԳԸ) կողմից կազմակերպվել են տարբեր տոների, հիշատակների նվիրված մշակութային և մարզական բազմաթիվ միջոցառումներ: Իրականացրել են միջոցառումներ նվիրված գիտելիքի և դպրության օրվան, անկախության տոնին, ուսանողների միջազգային օրվա առթիվ Երևանում մասնակցել են ուսանողական ֆլեշ-մոբին, անց են կացրել տարաբնույթ մրցույթներ («Ուսանողը որպես հասարակության շարժիչ ուժ» թեմայով էսսեների, «Miss Foreign Language» լեզվի գեղեցկության), մասնակցել բաց դասերի, դասընթացների և քննարկումների («Կանխարգելենք ՁԻԱՀ-ը», «Վախի վերահսկումը հանրային ելույթների ժամանակ», «Գենդերային անհավասարություն», «Ճանաչենք հայ թատրոնի մեծերին», «Ինչպե՞ս հասնել հաջողության», Համաշխարհային մրցանակների մասին (Ֆիլդայան,

Աբելյան, Նոբելյան, Պուլիցերյան), «Հայ զինվորի հոգեկերտվածքի ձևավորումը ազգային գաղափարախոսության համատեքստում» թեմաներով), կազմակերպել և մասնակցել են ուսանողական գիտաժողովների, սեմինարների, խորհրդաժողովների, կարդացել են զեկուցումներ («Երիտասարդության խնդիրները և պետության զարգացման միտումները» խորագրով հանրապետական գիտաժողով, «Աշխատանք փաստաթղթերի հետ», «Ինչպես գրել ռեզյումե և ներկայանալ հարցազրույցի» և «Ժամանակի կառավարում» թեմաներով սեմինարներ, մասնակցություն համապետական ուսանողական եռօրյա խորհրդաժողովի), հանդիպումներ, ինտելեկտուալ խաղեր, գիտական ուսուցողական ֆիլմերի դիտումներ և այլն:

Մասնաճյուղի 4 ուսանող մասնակցել է «Բազե-2016» հավաքին, նրանցից 2-ն արժանացել են մրցանակների:

«Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբն ակտիվ համագործակցում է մարզի զինվորական կառույցների հետ, կազմակերպվում են այցեր գորամասեր, հանդիպումներ մասնաճյուղում և տարբեր ուսուցողական և դաստիարակչական միջոցառումներ:

2016թ.-ի ապրիլին ՀՀ ՊՆ Իջևանի զորամասի հրամանատարը մասնաճյուղին նվիրեց օդամղիչ համակարգով աշխատող ուսումնական զենք՝ մասնաճյուղի ուսանողների համար ուսումնավարժական պարապմունքներ կազմակերպելու, նրանց մարտական պատրաստվածությունը բարձրացնելու նպատակով: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ մասնաճյուղի ուսանողները զորամասի աջակցությամբ կանցնեն կրակային պատրաստության դասընթացներ: Ապա այդ դասընթացների արդյունքում լավ ցուցանիշներ հանդես բերած ուսանողները կմասնակցեն մարզի մասշտաբով անցկացվելիք համապատասխան մրցումներին:

2017թ.-ի ապրիլին մասնաճյուղում ակումբը կազմակերպել է միջոցառում հայրենասիրության թեմայով, որին հրավիրվել են նաև ԵԿՄ Տավուշի մարզային խորհրդի անդամներ, պատանի երկրապահներ:

2017թ.-ի ապրիլին մասնաճյուղում կայացել է հանդիպում Մայր բուհի՝ ապրիլյան քառօրյա պատերազմին մասնակցած ուսանողների (Գոռ Դարմանյանի, Ապրես Գրիգորյանի, Գևորգ Մանուկյանի) հետ: Հանդիպմանը մասնակցել են նաև ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից մասնաճյուղի ուսանողներ Գրիգոր Եգանյանը և Գրիգոր Փաշինյանը:

Մասնաճյուղի «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողները հերթական անգամ մասնակցել են ԱՄՆ խաղաղության կորպուսի կողմից կազմակերպված «WRITE ON! COMPETITION 2017» էսսեների մրցույթին: Հանրապետական փուլի 541 մասնակիցների մեջ մասնաճյուղի 3 ուսանող գրավել են 1-3-րդ տեղերը, իսկ իրենց երկրներում առաջին տեղ գրաված 22 երկրների ներկայացուցիչների մեջ միջազգային փուլում 2-րդ մրցանակային տեղ գրաված Հայաստանի 2 մասնակիցներից մեկը մասնաճյուղի ուսանողն էր:

Հազեցած է նաև մասնաճյուղի ուսանողների **մարզական կյանքը**: Նրանք մասնակցում են մասնաճյուղային, մարզային և հանրապետական տարբեր սպորտային մրցումների, և ունեն նշանակալի ձեռքբերումներ: Մարզային շատ միջոցառումների նախաձեռնողը և

կազմակերպիչը մասնաճյուղի «Արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի» ամբիոնն է:

2016թ.-ի հոկտեմբերին մեր ուսանողը մասնակցել է Երևանում կայացած բաղմինթոնի Հայաստանի Հանրապետության մեծահասակների առաջնությանը, որին մասնակցել են տարբեր մարզերի 100 մարզիկ-մարզուհիներ: Նա զուգախաղերում գրավել է երկրորդ տեղը:

2017թ.-ի ապրիլին մասնաճյուղում անց է կացվել վոլեյբոլի մարզային առաջնություն՝ նվիրված Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցին: Առաջնությանը մասնակցել են Տավուշի մարզի վեց թիմեր՝ Գանձաքարի, Սարիգյուղի, Այգեհովտի, Ներքին Ծաղկավանի, Պտղավանի և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի թիմերը: Օլիմպիական ձևով ընթացող մրցակցությունում հաղթել է մասնաճյուղի վոլեյբոլի թիմը:

2017թ.-ի ապրիլին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կայացել է սեղանի թենիսի մարզային առաջնություն, որին մասնակցել են Դիլիջանի, Գանձաքարի, Պտղավանի, Այգեհովտի, Իջևանի թիվ 5 հիմնական դպրոցի և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի՝ թվով 46 մարզիկ-մարզուհիներ: Տղաների պայքարում 1-ին և 3-րդ տեղերը զբաղեցրել են մասնաճյուղի ուսանողները:

Հաշվետու ուստարվա ընթացքում պարբերաբար անց են կացվել նաև մասնաճյուղային առաջնություններ տարբեր սպորտաձևերից (շախմատ, վոլեյբոլ, բասկետբոլ, մինի ֆուտբոլ, սեղանի թենիս, բաղմինթոն, բազկամարտ), կազմակերպվում են սպորտլանդիաներ,

Գործողություն 5. *Մշակել ուսանողների կողմից վարչական անձնակազմին տարբեր խնդիրներով դիմելու ընթացակարգ (01-04.2016):*

Ուսանողների կողմից վարչական անձնակազմին տարբեր խնդիրներով դիմելու ընթացակարգի մշակման գործընթացը դեռևս չի սկսվել: Դրա գործընթացը կսկսվի բարձրագույն կրթության մասին նոր օրենքի ընդունումից հետո, այն գտնվում է քննարկման փուլում:

Գործողություն 6. *Խթանել ուսանողների կարիերայի ծառայությունները՝ զարգացնելով լրացուցիչ պրակտիկայի (ինտերնշիփ), խորհրդատվության և ուսուցողական դասընթացների համակարգը» (01-12.2019):*

Գործողություն 7. *Նպաստել ուսանողների ձեռներեցության հմտությունների զարգացմանն ուղղված ծառայությունների կայացմանը (01.2016-12.2020):*

Այս գործողության շրջանակներում մասնաճյուղում հիմնականում իրականացվել են ուսանողների և շրջանավարտների ապագա կարիերային նպաստող մի շարք գործընթացներ: Ուսանողների ձեռներեցության հմտությունների զարգացմանն ուղղված ծառայություններ հիմնականում իրականացվում է մասնաճյուղի շրջանավարտների և արտաքին շահակիցների հետ աշխատանքները համակարգողի, ուսանողական խորհրդի,

ֆակուլտետային ուսանողական խորհուրդների կողմից՝ համապատասխան դասընթացների, դաս-քննարկումների և բանավեճերի միջոցով:

Հաշվետու ուստարում մասնաճյուղի շրջանավարտների և արտաքին շահակիցների հետ աշխատանքները համակարգողի նախաձեռնությամբ կազմակերպվել է հանդիպում.

- Զբաղվածության պետական գործակալության տարածաշրջանային կենտրոնի աշխատակցի և ԵՊՀ ԻՄ ուսանողների հետ՝ նպատակ ունենալով ուսանողներին տեղեկացնել զբաղվածության պետական քաղաքականությանը և նրանց ուղղորդել աշխատաշուկայում (<http://ijevan.yసు.am/22-02-17/>),
- «Կրթություն Հայաստան» (Teach for Armenia) ՀԿ-ի ներկայացուցիչների և մասնաճյուղի ուսանողների հետ, որի ընթացքում քննարկվել է «Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագիրը և մասնակցության պայմանները՝ ապագա շրջանավարտներին աշխատանքային հետագա հնարավորության նպատակով (<http://ijevan.yసు.am/10-03-17/>),
- Ֆինանսական համակարգի հաշտարարի և ԵՊՀ ԻՄ ուսանողների հետ ֆինանսական ոլորտում իրազեկվածության վերաբերյալ, ինչը հնարավորություն կտար ուսանողներին հետագայում ինքնուրույն կողմնորոշվելու ոլորտում առաջացող խնդիրներում (<http://ijevan.yసు.am/20-04-17/>),

Կենտրոնը մասնաճյուղի Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի հետ համատեղ օժանդակել է «Տուրիզմի հետազոտական և զարգացման կենտրոն»-ի ձևավորման համար ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից իրականացվող աշխատանքներին: Կազմակերպել է հանդիպում մասնաճյուղի ուսանողների և շրջանավարտների և ՄԱԶՕ «Գյուղական Զբոսաշրջության Ինտեգրացված Զարգացում» ծրագրի ներկայացուցիչների հետ, մասնակցություն է ունեցել նրանց կողմից իրականացված դասընթացների կազմակերպական աշխատանքներին: Նշենք, որ շնորհիվ իրականացված միջոցառումների, մասնաճյուղի թվով 9 շրջանավարտ և ուսանող ընդունվել են աշխատանքի Տավուշի մարզի Տուրիզմի հետազոտական և զարգացման կենտրոնում (<http://ijevan.yసు.am/17-03-17/>, <http://ijevan.yసు.am/28-04-2017-2/>, <http://ijevan.yసు.am/start-up-2/>):

Ստեղծվել է ԵՊՀ ԻՄ Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ֆեյսբուքյան էջ՝ նպատակ ունենալով ուսանողների և շրջանավարտներին ավելի մատչելի դարձնել կայքում տեղադրվող թափուր աշխատատեղերի, փորձնակության (ինտերնշիփ), կրթաթոշակների և նմանատիպ այլ ինֆորմացիան (<https://www.facebook.com/shrjanavarnertysuib/>): Պարբերաբար թարմացվում է ԵՊՀ ԻՄ պաշտոնական կայքում առկա, շրջանավարտների կարիերային նպաստող տեղեկատվությունը. 2016թ. դեկտեմբերից 2017թ. հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում տեղադրվել են շուրջ 40 հայտարարություն մարզում առկա թափուր աշխատատեղերի վերաբերյալ, որ հիմնականում վերաբերել են ֆինանսական և կրթական ոլորտներին, 5 հայտարարություն՝ ինտերնշիփի հնարավորության մասին, որ վերաբերել են ֆինանսական, սպասարկման և տուրիզմի ոլորտներին, ինչպես նաև բազմաթիվ հայտարարություններ՝ կրթաթոշակների, ուսման վարձի փոխհատուցման, այլ ծրագրերի մասնակցության վերաբերյալ (<http://ijevan.yసు.am/information/tenders-and-vacancies/>):

Մասնաճյուղի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվել է «Ինչպե՞ս հասնել հաջողության» թեմայով դաս-միջոցառում:

Նախատեսվում է մասնաճյուղի «Կիրառական արվեստ», «Դիզայն» և «Համակարգչային գրաֆիկա» կրթական ծրագրերի ուսանողների ուսումնառության ընթացքում տարբեր առաջադրանքների շրջանակներում, կամ ինքնուրույն իրականացրած աշխատանքները ներկայացնել ցուցահանդես-վաճառքի:

Նախատեսվում է նաև կրթական մյուս ծրագրերի արտադրական պրակտիկաներն իրականացնել վճարովի ծառայությունների մատուցմամբ:

Նախապատրաստական աշխատանքներ են կատարվում են **ձեռներեցության կենտրոն** ստեղծելու ուղղությամբ, որը նպատակը կլինի իրականացնել ուսանողների նորարարական և ձեռներեցական նախաձեռնություններին նպաստող ծրագրեր:

Գործողություն 8. *Ընդլայնել հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին մատուցվող ծառայությունները (01.2016-12.2017):*

Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար բարելավվում են մի շարք ծառայություններ: Մասնաճյուղի կայքի և հեռակա բաժնի կայքի միջոցով նրանք ստանում են համապատասխան տեղեկատվություն ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցի, դասացուցակների, քննաշրջանների և դրանց արդյունքների վերաբերյալ, մասնաճյուղում տեղի ունեցող տարաբնույթ միջոցառումների, հանդիպումների, մշակութային ու սպորտային միջոցառումների մասին: Կայքում բացվել է Էլեկտրոնային գրադարան էջը, նրանք կարող են օգտվել գրադարանի էլեկտրոնային պաշարներից, թվայնացված գրականությունից, նաև տեղադրված դասախոսություններից:

Կարող են օգտվել նաև կայքի «Հարց ու պատասխան» բաժնից, իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները ստանալու համար: Նաև տարբեր կառույցների ֆեյսբուքյան էջերի միջոցով մասնակցել տարբեր քննարկումների:

Գործողություն 9. *Ներդնել հեռավար եղանակով իրականացվող խորհրդատվությունների համակարգ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար (01.2016-12.2020):*

Այս ուղղությամբ նույնպես որոշակի գործընթացներ չեն իրականացվել:

Գործողություն 10. *Ապահովել շրջանավարտների հետ մասնաճյուղի և առանձին ֆակուլտետների շարունակական կապը և խթանել շրջանավարտների կողմից Մասնաճյուղին տարաբնույթ աջակցության նախաձեռնությունները (01.2017 - 12.2020):*

2015թ.-ից Մասնաճյուղում ներդրված է մասնաճյուղի շրջանավարտների հաշվառման տեղեկատվական համակարգ, որում մշտապես ավելացվում և թարմացվում են նաև շրջանավարտների մասնագիտական գործունեության վերաբերող տվյալները: Տեղեկատվական բազայում ներկայումս ամփոփված է 2010-2017թթ. 2415 շրջանավարտների վերաբերյալ տեղեկատվություն, ըստ այդ բազայի տվյալների (որի տվյալները լիարժեք չեն

շրջանավարտների հետ կապի բացակայության պատճառով) հաշվառված շրջանավարտներից 581-ը աշխատում է, որոնցից 272-ը մասնագիտությամբ:

Պարբերական բնույթ են կրում շրջանավարտների հանդիպումները մասնաճյուղի տնօրենի հետ: Մասնավորապես, 2016թ. հոկտեմբերի 3-ին ԵՊՀ ԻՄ-ում կայացավ տնօրենի հերթական հանդիպումը մասնաճյուղի «Կադրային բանկ»-ում գրանցված մի քանի շրջանավարտների հետ:

Մասնաճյուղը վարում է ԵՊՀ ԻՄ-ի դասախոսական, վարչական և ուսումնասօժանդակ անձնակազմը բուհի շրջանավարտներով համալրելու կադրային քաղաքականություն (2017թ.-ի սեպտեմբերի դրությամբ մասնաճյուղի տարբեր կառույցներում աշխատում են 59 շրջանավարտներ): Նախապես հավաքագրված ինքնակենսագրությունների և մոտիվացիոն նամակների հիման վրա ճշտվեց շրջանավարտների նեղ մասնագիտացումը, աշխատանքային փորձը, անհատական նախասիրություններն ու կարողությունները, նախընտրած աշխատանքի վերաբերյալ իրենց պատկերացումները: Քննարկումից հետո մի քանի շրջանավարտների հրավիրվեցին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ՝ փորձաշրջանով աշխատելու:

Նախատեսվում է մասնաճյուղում ստեղծել Շրջանավարտների միություն, որի օգնությամբ կակտիվացվի կապը մասնաճյուղի շրջանավարտների հետ, կտարվեն գործընթացներ նրանց կողմից մասնաճյուղին տարաբնույթ աջակցության նախաձեռնությունները խթանելու ուղղությամբ:

Խնդիր 6.2. Զարգացնել մասնաճյուղի ուսանողական կազմակերպությունների կարողություններն ու խթանել ուսանողական ինքնակառավարումը:

Գործողություն 1. *Մշակել ուսանողական ինքնակառավարման հայեցակարգ (01.2017-12.2017):*

Այս գործողության իրականացման ուղղությամբ դեռևս գործընթացներ չեն իրականացվել: Այն կիրականացվի ԵՊՀ ուսանողական խորհրդի կողմից համապատասխան աշխատանքներին զուգահեռ:

Գործողություն 2. *Կազմակերպել ուսանողական կազմակերպությունների ինստիտուցիոնալ զարգացմանը նպաստող և ուսանողների առաջնորդությանն աջակցող ուսուցողական դասընթացներ (01.2016-12.2020):*

ՈՒԽ անդամները մասնակցել են համապետական ուսանողական եռօրյա խորհրդածոդովին, ՄԱԿ-ի ազգային ասոցիացիայի կազմակերպած եռօրյա դասընթացներին, համագործակցել են ՀԵՀ Տավուշի մարզային կենտրոնի, Ինֆոտանի, ՀՈՒԱԱ-ի «Կրթական ավտոբուս» ծրագրի, ՀԿ-ների և բարձրագույն կրթության կազմակերպման փորձագետների հետ՝ կազմակերպելով խաղեր, թեմատիկ դասընթացներ:

Մասնաճյուղի ՈՒԳԸ-ի աջակցությամբ կազմակերպվել է «Երիտասարդության հիմնախնդիրները և պետության հզորացման միտումները» խորագրով ուսանողական գիտաժողով, որին մասնակցել ՀՀ տարբեր բուհերի ուսանողներ, և գիտաժողովն անց է

կացվել մասնաճյուղում, կազմակերպվել է «Ուսանողական կառույցների դերն ու նշանակությունը» թեմայով քննարկում, «Ինչպե՞ս գրել ռեզյումե և ներկայանալ հարցազրույցի» թեմայով սեմինար և «Ժամանակի կառավարում» թեմաներով սեմինար, որը կազմակերպվել է բարձրագույն կրթության կազմակերպման փորձագետների կողմից:

Ուսանողական խորհուրդը առաջին կուրսեցիների համար մշտապես անց է կացնում ուսանողական ինքնակառավարման վերաբերյալ խորհրդատվություն:

Գործողություն 3. Խթանել մասնաճյուղի ուսանողական կազմակերպությունների ներհանրապետական և միջազգային համագործակցությունը (01.2016-12.2020):

Գործողություն 4. Նպաստել ՈՒԳԸ-ի՝ ուսանողների հետազոտական աշխատանքները խթանող ծրագրերի արդյունավետության բարձրացմանը (01.2016-12.2020):

Մասնաճյուղում քննարկման ընթացքի մեջ է «ԵՊՀ ԻՄ-ի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի» նախագիծը, որի 3-րդ կետի թիվ 2 աղյուսակում ներկայացված են ուսումնամեթոդական գործունեության որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման նկարագրերը և վճարման կարգը: Մասնավորապես, այն նախատեսում է լրավճարի տրամադրում ՈՒԳԸ-ի գիտական ղեկավարման և ՈՒԳԸ-ի տարեկան գիտաժողովի նյութերի ժողովածուում ԵՊՀ ԻՄ ուսանողի կողմից հրապարակված աշխատանքի ղեկավարման համար:

Կարգի նպատակն է նպաստել ուսանողների հետազոտական գործունեության աջակցմանը, բարելավմանը և արդյունավետության բարձրացմանը:

VII. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Զարգացնել մասնաճյուղի ընդունելության մարքեթինգային գործընթացները, օպտիմալացնել ընդունելությունը և այն համապատասխանեցնել երկրի զարգացման կարիքներին, հանրության և աշխատաշուկայի պահանջներին: Ընդլայնել օտարերկրյա ուսանողների համակազմը:

Խնդիր 7.1. Զարգացնել ընդունելության մարքեթինգային գործընթացները՝ դիմորդների հոսքի պահպանման և մեծացման նպատակով:

Խնդրի իրականացման նպատակով նախատեսված բոլոր գործողությունների համար սահմանված է կատարման ժամկետ՝ 2016-2020թթ.: Դիտարկվող ժամանակահատվածի համար նախատեսված գրեթե բոլոր գործընթացներն իրականացվել են:

Գործողություն 1. Քայլեր ձեռնարկել բակալավրիատում ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական մասնագիտությունների գծով հարցազրույցով ընդունելությունը վերականգնելու համար (01.2016 – 12.2020):

Բակալավրիատում ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական մասնագիտությունների գծով հարցազրույցով ընդունելությունը վերականգնելու համար քայլեր է ձեռնարկել ԵՊՀ-ն՝ դիմելով ՀՀ ԳԿ նախարարությանը, սակայն խնդիրը լուծում չի ստացել:

Գործողություն 2. *Զարգացնել դիմորդների մասնագիտական կողմնորոշման համար մասնաճյուղի կայքէջը (01.2016-12.2020):*

Ընդունելության համակազմի պահպանման և ընդլայնման համար մասնաճյուղը շարունակաբար ակտիվացնում է համագործակցությունը մարզի միջնակարգ և ավագ դպրոցների հետ, ապահովում մասնաճյուղի ակտիվ գովազդարշավը նաև պաշտոնական կայք-էջի միջոցով: Մասնաճյուղի կայքն ունի «Դիմորդ» բաժին, որտեղ դիմորդները գտնում են ընդունելության հետ կապված իրենց հետաքրքրող բոլոր հարցերի պատասխանները: Այդ բաժնում ներկայացված են ընդունելության գործընթացը կարգավորող պետական օրենքները, կարգերը և մասնաճյուղայի կարգերն ու կանոնակարգերը («Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգ», «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում առկա ուսուցման ուսումնական տարվա մասնագիտությունների, ընդունելության քննությունների, տեղերի և ուսման վարձի ցանկ»): Կայքում տեղադրվում է տեղեկատվություն մասնաճյուղում ընդունելությունը սկսելու մասին հայտարարություն, բուհում ընդունելության դիմում-հայտի լրացման և փաստաթղթերի ներկայացման ժամկետների, դիմորդի կողմից դիմում-հայտի հետ միասին ներկայացվող փաստաթղթերի մասին:

Տեղեկատվությունն ապահովվում է նաև կայքում տեղադրված «Դիմորդի ուղղեցույց»-ով, նաև կայքի միջոցով դիմորդների հետ էլեկտրոնային հարց ու պատասխան իրականացնելու միջոցով:

Կայքը մշտապես զարգացվում է, արդիականացվում, նոր էջեր ավելացնելու հաշվին լայնացնում է տեղեկատվության ծավալը, բարելավում տեղեկատվության ստացման մատչելիությունը, այդ թվում մշտապես բարելավվում է նաև «Դիմորդ» էջը:

Գործողություն 3. *ԵՊՀ-ի հետ համատեղ Տավուշի մարզի դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար հանրակրթական տարբեր առարկաների գծով ամենամյա օլիմպիադաներն անցկացնել մասնաճյուղում՝ 2 փուլով՝ ընդլայնելով մասնակիցների շրջանակը (01.2016-12.2020):*

Դիմորդների հավաքագրման գործընթացում կարևոր նշանակությունն ունեն հանրակրթական տարբեր առարկաների գծով ԵՊՀ-ի հետ համատեղ կազմակերպվող օլիմպիադաները: 2016/2017 ուստարում դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար կազմակերպված օլիմպիադաներին մասնակցել են մարզի 4 ավագ, 30 միջնակարգ դպրոցների և 2 վարժարանների շուրջ 300 աշակերտներ, նրանցից 60-ը հաղթահարել են 1-ին փուլը և մասնակցել ԵՊՀ-ում կազմակերպված օլիմպիադայի 2-րդ փուլին: Տարբեր

պարզևատրումներ են ստացել 20 աշակերտ, որոնցից 2-ը՝ 1-ին, 2-ը՝ 2-րդ, 2-ը՝ 3-րդ կարգի դիպլոմներ, 9 աշակերտ ստացել են գովասանագրեր:

Գործողություն 4. *Ավագ դպրոցների և քոլեջների սովորողների համար կազմակերպել ամենամյա «Բաց դռների օրեր» և ճանաչողական այցեր մասնաճյուղ (01.2016-12.2020):*

Մարզի դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար պարբերաբար կազմակերպվել են ամենամյա «Բաց դռների օրեր», նաև ճանաչողական և գործնական այցեր մասնաճյուղ:

2016թ. մայիսին ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետում ճանաչողական այցով հյուրընկալվել են Իջևանի տարածաշրջանի Կայանի Հինդյանի անվան դպրոցի բարձր դասարանի աշակերտները, նրանք ծանոթացել են համակարգչից օգտվելու հմտություններին, ցուցադրել են ծրագրավորումից և ալգորիթմական մտածողությունից իրենց կարողությունները՝ գրելով փոքր ծրագրեր: Նրանց ոգևորությունը փաստում էր, որ նրանց մեծ մասը իր գիտելիքները կխորացնի հենց ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտում:

2017թ. մայիսին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ են այցելել Դիլիջանի միջազգային դպրոցի սաները: Այցելության նպատակն էր մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների և շրջանավարտների բազմաժանր աշխատանքների միջոցով աշխարհի տարբեր երկրներից դպրոցում ուսանող աշակերտներին ծանոթացնել հայոց մշակութային արժեքներին, արվեստի ու կենցաղի առանձնահատկություններին: Նրանց նաև ներկայացրեցին մասնաճյուղը, նրանում իրականացվող կրթական ծագրերը, համակարգչային սրահները, գրադարանը և այլն:

Գործողություն 5. *Ակտիվացնել դիմորդների հավաքագրման աշխատանքները տարածաշրջանում՝ հիմնելով դիմորդների հետ տարվող աշխատանքների ներկայացուցչություններ և դրանք ապահովելով անհրաժեշտ տեղեկատվական նյութերով (01.2016-12.2020):*

2016-2017 ուստարում մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ 10 մասնագիտությունների գծով ընդունվել է 196 դիմորդ (նախորդ ուստարվա 161-ի փոխարեն), այդ թվում 38-ը՝ անվճար, 123-ը՝ վճարովի, իսկ հեռակա ուսուցմամբ 7 մասնագիտությունների գծով՝ 201 դիմորդ (նախորդ ուստարվա 217-ի փոխարեն): Նախորդ տարվա համեմատ նկատելի է դիմորդների թվի էական աճ առկա ուսուցման համակարգում:

Մասնաճյուղի դիմորդների շուրջ 99 %-ը (228 դիմորդից 225-ը) Տավուշի մարզի դպրոցների շրջանավարտներն են:

Ընդունելության համակազմի պահպանման և ընդլայնման համար մասնաճյուղը շարունակաբար ակտիվացնում է համագործակցությունը մարզի միջնակարգ և ավագ դպրոցների հետ, ապահովում մասնաճյուղի ակտիվ գովազդարշավը նաև պաշտոնական կայք-էջի միջոցով:

Գործող մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով տպագրվել և դպրոցներին, հիմնական գործատուներին ու

շահագրգիռ այլ կազմակերպությունների են տրամադրվել ԵՊՀ-ի հրատարակած «Դիմորդի ուղեցույցը», մասնաճյուղի, Կիրառական արվեստի ֆակուլտետի և հեռակա ուսուցման բաժնի նաև վրացերեն և պարսկերեն լեզուներով պատրաստված գովազդային բուկլետները (350 օրինակ) և տեսաերիզները: Առաջին կուրսեցիների համար կազմվել և մասնաճյուղի կայքում տեղադրվել է «Առաջին կուրսի ուսանողի ուղեցույցը», որի նպատակն է առաջին կուրսեցիներին ծանոթացնել մասնաճյուղի կառուցվածքին, ուսումնատրության կանոններին, ուսանողների իրավունքներին ու պարտականություններին, գիտամանկավարժական գործընթացի կազմակերպմանը և ներհամալսարանական կառույցներին ու նրանց գործունեությանը: Այս ուղեցույցն ունի ոչ միայն մեթոդական, այլև գովազդային կարևոր նշանակություն:

Գործողություն 6. *Ընդլայնել ԵՊՀ ԻՄ-ի հետ պայմանագրային հիմունքներով համագործակցող ավագ դպրոցների և քոլեջների շրջանակը (01.2016-12.2020):*

Կրթօջախն ունի պայմանագրեր մարզի 4 ավագ դպրոցների ու քոլեջների հետ և հստակ կազմված ժամանակացույցով կազմակերպել է հանդիպումներ մարզի 4 ավագ և 50 հիմնական դպրոցների, ինչպես նաև Իջևանի և Բերդի վարժարանների շուրջ 970 աշակերտների հետ: Հաշվետու ուստարում համագործակցության շրջանակն ընդլայնվել է, և Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման (ՄԿՊԿ) բաժինը հանդիպումներ է կազմակերպել նաև Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջանի 6 դպրոցներում:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը ակտիվորեն շարունակում է համագործակցությունը միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների հետ՝ նրանց բարձր առաջադիմությամբ շրջանավարտների կրթությունը մասնաճյուղում շարունակելու գործընթացի շրջանակներում: Հաշվետու ուստարում կրթությունը շարունակելու նպատակով մասնաճյուղի 7 մասնագիտությունների գծով քոլեջներից շուրջ 18 հայտ է ներկայացվել:

Գործողություն 7. *ԵՊՀ-ի և ԵՊՀ ԻՄ-ի դասախոսներին առավելագույնս ներգրավել հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ ակնարկային և բովանդակային դասախոսությունների, թեմատիկ քննարկումների կազմակերպման գործում (01.2016-12.2020):*

Պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներն այցելել են մարզի դպրոցներ, հանրակրթական առարկաներից ակնարկային և բովանդակային դասախոսություններ են կարդացել բարձր դասարանի աշակերտների համար, տվել են անհրաժեշտ խորհրդատվություն, ուսուցիչների հետ քննարկումներ են իրականացրել դասավանդման ժամանակակից արդյունավետ մեթոդների վերաբերյալ:

Խնդիր 7.2. **Օպտիմալացնել մասնաճյուղի ընդունելության կառուցվածքը և չափաքանակները՝ դրանք համապատասխանեցնելով աշխատաշուկայի և հանրության պահանջներին, կատարելագործել ընդունելության ընթացակարգերը և աշխատակարգերը:**

Գործողություն 1. *Օպտիմալացնել ընդունելության ամենամյա պլանավորումն ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և կրթական ծրագրերի՝ ուղենիշ ունենալով արտաքին և ներքին միջավայրերի վերլուծությունը (01.2016-12.2020):*

Մասնաճյուղն իր կատարած ուսումնասիրությունների շնորհիվ անմիջապես արձագանքում է աշխատաշուկայի պահանջներին՝ վերաբացելով կամ փոխարինելով մասնագիտություններն ավելի ժամանակակից մասնագիտություններով: Արդարացված ներդրում եղավ առկա և հեռակա ուսուցմամբ «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրերով ուսումնառության կազմակերպումը: «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով 2016-2017 ուստարում ընդունելության կազմակերպումը, որն ունեցավ 44 առաջին կուրսեցի, ուղղակի արձագանքն էր տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջների: Արդարացված էր նաև «Դիզայն» և Զբոսաշրջություն կրթական ծրագրերով ուսումնառության կազմակերպումը:

Կազմվել և ՀՀ կրթության նախարարության հաստատմանն է ներկայացվել 2018-2019 ուստարվա համար նախատեսված ինը կրթական ծրագրեր՝ համապատասխան ընդունելության քննություններով, հատկացված տեղերով և վարձավճարներով: **Իրականացվելիք կրթական ծրագրերն ընտրվել են** ուղենիշ ունենալով արտաքին շահակիցների և ուսանողների հետ իրականացվող հանդիպումների, կատարվող հարցումների արդյունքների վերլուծությունները:

Գործողություն 2. *Կրթական ծրագրերով ընդունելության ամենամյա պլանավորման համար աշխատանքներ իրականացնել համապատասխան ընթացակարգերի և աշխատակարգերի կատարելագործման ուղղությամբ (01.2016-12.2020):*

Կրթական ծրագրերով ընդունելության ամենամյա պլանավորումն իրականացվում է համապատասխան ընթացակարգերի և աշխատակարգերի միջոցով՝ համաձայն ՀՀ կրթության նախարարության կողմից սահմանված ընդունելության կանոնակարգերի և ընթացակարգերի:

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2016թ.-ի սեպտեմբերի 10-ի թիվ 18 նիստում հաստատվել է «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի առկա ուսուցման բակալավրի 2017թ.-ի ընդունելության մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկը», որում որոշվել են կայքում տեղադրվել է տեղեկատվություն ԵՊՀ ԻՄ-ի առկա ուսուցմամբ 2017թ.-ի ընդունելության մասնագիտությունների, ընդունելության քննությունների, տեղերի և ուսման վարձաչափերի վերաբերյալ:

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2017թ.-ի ապրիլի 4-ի թիվ 23 նիստի 23/1 որոշմամբ հաստատվել է «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հեռակա ուսուցման բակալավրի 201թ.-ի ընդունելության մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկը»:

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2017թ.-ի հուլիսի 8-ի թիվ 25 նիստում հաստատվել է «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի առկա ուսուցման բակալավրի 2018թ.-ի ընդունելության մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկը»:

Խնդիր 7.3. Մեծացնել օտարերկրյա ուսանողների համակազմը մասնաճյուղի կրթական բոլոր աստիճաններում՝ իրականացնելով հավաքագրման և ուսուցման կազմակերպման համալիր միջոցառումներ:

Գործողություն 1. *Ծավալել դիմորդների հավաքագրման աշխատանքներ տարածաշրջանի երկրներում՝ անհրաժեշտության դեպքում ստեղծելով ԵՊՀ ԻՄ-ի ներկայացուցչություններ (01.2016-12.2020):*

Գործողություն 2. *Քայլեր ձեռնարկել ուսանողների հավաքագրմամբ զբաղվող օտարերկրյա կրթական միջնորդ կազմակերպությունների հետ համագործակցության թույլտվություն ստանալու համար (01.2016-12.2020):*

Գործողություն 3. *Մշակել և մասնաճյուղի կայքում ներկայացնել օտարերկրյա ուսանողների ուսումնառության ուղեցույց, ինչպես նաև մասնաճյուղի ու նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր (01.2016 -12.2020):*

Մասնաճյուղի կայքի «Դիմորդ» բաժնում ներկայացված է առկա և հեռակա ուսուցման համար ընդունելության կարգ՝ «Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը» (ՀՀ կառավարության 26.04.2012թ. թիվ 597-Ն որոշում), պահանջվող փաստաթղթերը, մասնագիտությունները, ընդունելության քննությունները, տեղերը և ուսման վարձաչափերը՝ ըստ ուստարիների: Այդ բաժինը ներառում է նաև «Բուկլետներ» ենթաբաժինը, որը նախատեսված է մասնաճյուղը ոչ միայն հայ դիմորդների, այլ նաև օտարերկրյա դիմորդներին ներկայացնելու, գովազդելու և իրազեկելու համար: Այդ ենթաբաժնում տեղադրված նոր բուկլետներն են «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ (2017թ., հայերեն)», «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ (2016թ., պարսկերեն)», «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ (2015թ., հայերեն, վրացերեն)», «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետ (2016թ., հայերեն)»:

Բուկլետները մասնաճյուղի Ուսումնամեթոդական վարչության Մինչհամալսարանական կրթության և պրակտիկայի կազմակերպման բաժնի աշխատակիցների այցելությունների ժամանակ տրամադրվում են դպրոցներին և քոլեջներներին: Բաժանվում են նաև մասնաճյուղի արտաքին շահակիցներին, նաև մասնաճյուղ այցելած օտարերկրյա հյուրերին:

Ընթացքի մեջ է մասնաճյուղում գործող կրթական ծրագրերի վերաբերյալ կայքէջում պարսկերեն և վրացերեն համառոտ տեղեկատու նյութեր ունենալու գործընթացը:

Օտարերկրյա ուսանողների թիվը (2015-16 ուստարվա դրությամբ 7) ընդհանուր համակազմում չնչին տոկոս է կազմում: Բուկի միջազգայնացման ու արտաքին կապերի զարգացման, օտարերկրյա (հիմնականում Վրաստանից, Ռուսաստանից, Իրանից) դիմորդներ ներգրավելու ուղղությամբ աշխատանքները ակտիվացնելու նպատակով

մասնաճյուղում ձևավորվել է Միջազգային կապերի բաժին (10.09.2015թ գիտխորհրդի թիվ 11 նիստ):

Գործողություն 4. Մտեղծել և կիրառել նախապատրաստական կրթական ծրագրեր՝ օտարերկրյա դիմորդների լեզվական և ընդհանուր կրթական գիտելիքների մակարդակը ԵՊՀ ԻՄ-ի ծրագրային պահանջներին համապատասխանեցնելու համար (01.2016-12.2020)

Մասնաճյուղում հաշվետու ուստարում օտարերկրյա դիմորդներ չեն եղել և ուսանողներ չկան:

Գործողություն 5. Մասնակցել ամենամյա կրթական էքսպոներին և նմանատիպ միջոցառումներին (01.2016-12.2020):

VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ապահովել մասնաճյուղի ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքերը և բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը: Բարելավել մասնաճյուղի կառավարման համակարգը և նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:

Խնդիր 8.1. Ապահովել Մասնաճյուղի ֆինանսական միջոցների անհրաժեշտ ներհոսքը՝ բազմազանեցնելով դրանց աղբյուրները և մեծացնելով ծավալները:

Գործողություն 1. Ձեռնարկել քայլեր ընդլայնելու մասնաճյուղի մասնակցությունը ԵՊՀ-ի գիտակրթական ծրագրերին՝ նպաստելով մասնաճյուղի պետական ֆինանսավորման ծավալների մեծացմանը (01.2016 – 12. 2020):

Մասնաճյուղի պետական ֆինանսավորման ծավալները թեպետ քիչ, սակայն տարեցտարի ավելանում են և 2016թ.-ի համար այն կազմել է մոտավորապես 120180,5 հազ. ՀՀ դրամ: 1 (մեկ) ուսանողի հաշվարկով ուսման վարձի փոխհատուցման նպաստի պետական ֆինանսավորումը բոլոր մասնագիտությունների գծով 2017 թվականին կազմում է 90280,0 հազ. ՀՀ դրամ:

Պետության կողմից ուսման վարձի (ուսանողական նպաստի ձևով) լրիվ փոխհատուցում է ստացել 115 ուսանող (այդ թվում՝ 4-ը արտամրցութային): Պետական և ներքուհական կրթաթոշակներ են հատկացվել մասնաճյուղի 140 ուսանողների, որոնցից անվանական կրթաթոշակ է ստացել 10 ուսանող: 2016-2017 ուստարում ուսման վարձի մասնակի փոխհատուցումից օգտվել է 470 ուսանող, այդ թվում՝ 183-ը՝ առկա ուսուցման համակարգում:

Գործողություն 2. Ակտիվացնել ԵՊՀ ԻՄ-ի մասնակցությունը կրթական և գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին (01.2016 – 12. 2020):

Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղը կրթական, գիտահետազոտական տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրերի չի մասնակցել:

Սակայն մասնաճյուղի դասախոսները մասնակցում են տարբեր դրամաշնորհային ծրագրերի: ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի՝ 2016թ. դեկտեմբերի 19-ի N71-Ա հրամանով «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2016» մրցույթի արդյունքում ֆինանսավորման է երաշխավորվել նաև ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի ԺՊ, արվեստագիտության թեկնածու Մարտին Հարությունյանի՝ «Երևանի փողոցների ու դրանց հարակից կառույցների նախագծման, կոմպոզիցիայի, դիզայնի ու արտաքին ձևավորման խնդիրներն ու բարելավման հնարավորությունները» գիտական թեման:

Գործողություն 3. *Ընդլայնել և կանոնակարգել Մասնաճյուղի վճարովի ծառայությունները (01.2016 – 12. 2020):*

Մասնաճյուղում իրականացվում է վճարովի տպագրական և պատճենահանման ծառայություններ, որից ստացված եկամուտներն ըստ կարգի փոխանցվում են մասնաճյուղի հաշվեհամարին: 2016-17 ուստարվա ընթացքում վճարովի ոչ կրթական ծառայություններից ֆինանսական մուտքերը մասնաճյուղի ընդհանուր եկամուտներում էական չեն:

Գործողություն 4. *Ապահովել շրջանավարտների և այլ շահառուների հետ Մասնաճյուղի և նրա առանձին ստորաբաժանումների շարունակական կապը՝ խրախուսելով նրանց կողմից բուհին ֆինանսական, նյութական և այլ բնույթի աջակցության նախաձեռնությունները (01.2016 – 12. 2020):*

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ ԻՄ շրջանավարտների և այլ շահառուների հետ տարվել են միայն գործընկերային աշխատանքներ, սակայն համալսարանում իրականացվող ծրագրերին ֆինանսական աջակցություն դեռևս չկա:

Գործողություն 5. *Ուսումնասիրել Մասնաճյուղի բիզնես հնարավորությունները, մշակել ու կենսագործել տարաբնույթ բիզնես ծրագրեր (01.2016 – 12. 2020):*

Անցած ուստարում համալսարանական բիզնես ծրագրեր չեն իրականացվել:

Խնդիր 8.2. Զարգացնել մասնաճյուղի ֆինանսական պլանավորման համակարգը, բարձրացնել ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը:

Գործողություն 1. *Ներդնել ռիսկերի կառավարման համակարգ՝ շուկայական և տնտեսական տարաբնույթ ռիսկերի նկատմամբ մասնաճյուղի ռեսուրսների կայունության ապահովման նպատակով (01.2016 – 12. 2016):*

Գործողություն 2. Ներդնել ֆինանսական ոլորտի հաշվառման տեղեկատվական ցանցային համակարգը՝ ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման օպերատիվության ու արդյունավետության ապահովման նպատակով (01.2016 – 12. 2020):

Ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման օպերատիվության ու արդյունավետության ծրագրային ապահովման նպատակով մասնաճյուղի հաշվապահությունում ներդրված է «Հայկական ծրագրեր-6»-ը, որը ապագայում կարող է փոխարինվել ավելի կատարելագործված 7-րդ տարբերակով:

Հետագայում պլանավորվում է ներդնել «Հայկական ծրագրեր-Ձեռնարկություն» համակարգը՝ մասնաճյուղի Մարդկային ռեսուրսների կառավարման (նախկին՝ Անձնակազմի կառավարման) բաժնի և հաշվապահության համատեղ օգտագործման համար, նաև ակնկալում ենք ներդնել ԵՊՀ-ում փորձարկման փուլում գտնվող «Ուսանող» համակարգը՝ մասնաճյուղի հաշվապահության և ուսումնամեթոդական վարչության համատեղ օգտագործման համար:

Գործողություն 3. Օպտիմալացնել և վերապատրաստել ֆինանսական կառավարմանն առնչվող ստորաբաժանումների կազմը (01.2016 – 12. 2020):

Մասնաճյուղի ֆինանսական գործառույթներ իրականացնող հաշվապահության, Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի և գնումների պլանավորման ու պահեստավորման բաժնի աշխատակիցները պարբերաբար գործուղվում են ԵՊՀ-ի համապատասխան ստորաբաժանումներ՝ վերապատրաստման նպատակով և մայր բուհում տվյալ ուղղություններով իրականացվող նորարարական և տեխնոլոգիական լուծումներին իրագրել լինելու և մասնաճյուղում ներդնելու համար:

Գործողություն 4. Մշակել և իրականացնել ռեսուրսախնայողության համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրեր (01.2016 – 12. 2020):

Մասնաճյուղում իրականացվել է կառուցվածքային ստորաբաժանումների վերակազմավորում. ստեղծվել է Գիտակազմակերպական բաժին, Անձնակազմի կառավարման բաժինը վերակազմավորվել է Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի, լուծարվել է Վարչատնտեսական վարչությունը, ենթակայությամբ հաստատվել են 3 բաժիններ:

Ռեսուրսախնայողության շրջանակներում 2017թ.-ի նախահաշվով ավտոմեքենա ձեռք բերելու համար նախատեսված 7000,0 հազ. դրամը տնտեսվել է ԵՊՀ-ի աջակցության արդյունքում. նա մասնաճյուղին տրամադրել է համապատասխան մեքենա:

Որոշ չափով խնայողություն է կատարվել վառելիքի ձեռքբերման և գազամատակարարման հարցում:

Խնդիր 8.3. Կատարելագործել մասնաճյուղի իրավական դաշտը և կառավարման համակարգը:

Գործողություն 1. *Օպտիմալացնել մասնաճյուղի կազմակերպական կառուցվածքը, բարձրացնել ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը և հաշվետվողականությունը (01.2016 – 12. 2020):*

Ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը և հաշվետվողականությունը բարձրացնելու ուղղությամբ գործընթացներն իրականացվում են անընդհատ և շարունակաբար: Վերանայվել է մասնաճյուղի կազմակերպական կառուցվածքը, լուծարվել է Վարչատնտեսական վարչությունը, նրա ենթակայության բաժինները դարձել են առանձին ենթակառուցվածքներ, ստեղծվել է Գիտակազմակերպական բաժին, Միջազգային կապերի բաժին, Անձնակազմի կառավարման բաժինը վերակառուցվել է Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի:

Գործողություն 2. *Ներքին իրավական ակտերը համապատասխանեցնել մասնաճյուղի նոր կանոնադրությանը (01.2016 – 12.2017)*

2016-2017 ուստարում նույնպես շարունակվել է ներքին իրավական ակտերի մասնաճյուղի նոր կանոնադրությանը համապատասխանեցման գործընթացը: Մշակվել, վերանայվել և ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կողմից հաստատվել են հետևյալ փաստաթղթերը.

- ✓ ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ (26 նոյեմբերի 2016թ.),
- ✓ ԵՊՀ ԻՄ-ի դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն (26 նոյեմբերի 2016թ.),
- ✓ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կանոնադրություն (26 դեկտեմբեր 2016թ.),
- ✓ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կանոնադրություն (26 դեկտեմբեր 2016թ.),
- ✓ ԵՊՀ ԻՄ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների կանոնակարգ (**27.01.2017թ.**),
- ✓ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորում շնորհելու կանոնակարգ (**27.01.2017թ.**),
- ✓ ԵՊՀ ԻՄ-ի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի կանոնադրություն (**27.01.2017թ.**),
- ✓ ԵՊՀ ԻՄ-ի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի Ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի կանոնադրություն (**27.01.2017թ.**),
- ✓ ԵՊՀ ԻՄ-ի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի Անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի կանոնադրություն (**27.01.2017թ.**),/
- ✓ ԵՊՀ ԻՄ-ի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի կանոնադրություն (**27.01.2017թ.**),

- ✓ ԵՊՀ ԻՄ-ի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի կանոնադրություն (27.01.2017թ.),
- ✓ ԵՊՀ ԻՄ-ի Բնական գիտությունների ֆակուլտետի Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի կանոնադրություն (27.01.2017թ.),
- ✓ ԵՊՀ ԻՄ-ի Բնական գիտությունների ֆակուլտետի Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի կանոնադրություն (27.01.2017թ.),
- ✓ ԵՊՀ ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի կանոնադրություն (27.01.2017թ.),
- ✓ ԵՊՀ ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի կանոնադրություն (27.01.2017թ.),
- ✓ ԵՊՀ ԻՄ-ի Կիրառական արվեստի ֆակուլտետի Դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի կանոնադրություն (11.02.2017թ.),
- ✓ ԵՊՀ ԻՄ-ի Կիրառական արվեստի ֆակուլտետի Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի կանոնադրություն (11.02.2017թ.),
- ✓ ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ գիտաժողովների կազմակերպման կանոնակարգ (11.02.2017թ.),
- ✓ ԵՊՀ ԻՄ-ի կրեդիտային համակարգով պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման (2017-2021թթ.) կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (11.02.2017թ.),
- ✓ ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմի՝ կրեդիտային համակարգով որակավորման բարձրացման ծրագիրը (2017-2021թթ.) կազմակերպելու կարգ (11.02.2017թ.),
- ✓ ԵՊՀ ԻՄ -ի մեթոդական խորհրդի կանոնակարգ (նոր խմբագրությամբ) (08.04.2017թ.),
- ✓ ԵՊՀ ԻՄ -ի ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգ (նոր խմբագրությամբ) (08.04.2017թ.),
- ✓ ԵՊՀ ԻՄ-ի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (10-ը հունիսի 2017թ.),
- ✓ ԵՊՀ ԻՄ-ի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ (10-ը հունիսի 2017թ),
- ✓ ԵՊՀ ԻՄ-ի Գիտակազմակերպական բաժնի կանոնակարգ (08.07.2017թ.),
- ✓ ԵՊՀ ԻՄ-ի Միջազգային կապերի բաժնի կանոնադրություն (08.07.2017թ.),
- ✓ ԵՊՀ ԻՄ-ի Արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի ամբիոնի կանոնադրություն (08.07.2017թ.),
- ✓ ԵՊՀ ԻՄ-ի արխիվի կանոնադրություն (08.07.2017թ.),
- ✓ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ (08.07.2017թ.),
- ✓ ԵՊՀ ԻՄ-ի ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգ (27.05.2016թ.),
- ✓ ԵՊՀ ԻՄ-ի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգ (27.05.2016թ.),
- ✓ ԵՊՀ ԻՄ-ի մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի զարգացման հայեցակարգ (28.10.2017թ.),

✓ ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կարգ (28.10.2017թ.):

Գործողություն 3. *Զարգացնել մասնաճյուղի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և տեղեկատվական համակարգերը (01.2016 – 12.2017):*

Թեպետ այս գործողության իրականացումը պլանավորված էր 2017 թ. դեկտեմբերին, սակայն մասնաճյուղի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության զարգացման ուղղությամբ մասնաճյուղում գործընթացներ չեն իրականացվել: Աշխատանքներ են տարվում մասնաճյուղի դասախոսական կազմին ԵՊՀ աշխատակիցների համացանցային ներքին տիրույթում («Ինտրանետ», intranet.yu.am) ներառելու ուղղությամբ, որն այժմ հնարավորություն է տալիս ԵՊՀ աշխատակիցներին մուտքագրելու տեղեկատվություն իրենց աշխատանքների մասին (հոդվածներ, գիտաժողովի նյութեր, մենագրություններ, գրքեր, ուսումնական ձեռնարկներ, դասախոսություններ, արտոնագրեր, դրամաշնորհներ, քարտեզներ), ինչպես նաև արդյունավետ է դարձնում առցանց հավաքագրված տեղեկատվության վերամշակումը և տարատեսակ հաշվետվությունների ստացումը:

Սակայն մասնաճյուղի գրեթե բոլոր ստորաբաժանումներում մասնաճյուղի ծրագրավորողների կողմից մշակվել և տեղադրվել են տեղեկատվական համապատասխան համակարգեր (տվյալների բազաներ)՝ տվյալների հավաքագրման, պահպանման և մշակման համար: Ուսանողների անձնական և ուսումնական տվյալների մշակման համար ծրագրային համակարգեր են տեղադրված Ուսումնամեթոդական վարչությունում և բոլոր ֆակուլտետների դեկանատներում: Կադրերի հաշվառման և տվյալների մշակման համար ծրագրային համակարգ է գործում Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնում: Ծրագրային համակարգեր են տեղադրված նաև հաշվապահությունում:

Գործողություն 4. Կատարելագործել ԵՊՀ ԻՄ-ում ներքին աուդիտի համակարգը (01.2016 – 12.2020):

Մասնաճյուղում ներքին աուդիտի անցկացման կարգ հաստատվել է 2014թ.-ի դեկտեմբերի 25-ի թիվ 7 նիստում, որի նպատակն է գնահատել և խորհրդատվություն տրամադրել ԵՊՀ ԻՄ-ի ընթացիկ գործունեության, ուսումնական, ներքին հսկողության և կառավարչական գործընթացների վերաբերյալ, օժանդակել մասնաճյուղին՝ հաշվետու լինելու արտաքին և ներքին շահակիցների առջև, վերհանել և տարածել ստորաբաժանումների գործունեության լավագույն փորձը: Ներքին աուդիտ անցկացնելու համար ըստ կարգի ստեղծվում է հանձնաժողով, որը պլանավորում, իրականացում և հաշվետվության է ներկայացում աուդիտի արդյունքների վերաբերյալ, ապա ներկայացնում է հետագա գործողությունների ծրագիր՝ ներկայացված առաջարկությունների կատարմանը հետևելու նպատակով:

Կարգը հաստատվելուց հետո մասնաճյուղում մի քանի անգամ կատարվել է որոշ գործընթացների աուդիտ, մասնավորապես ամբիոններում Դասընթացների փաթեթների առկայության, նրանց ճիշտ կազմակերպման վերաբերյալ:

Գործողություն 5. Գործարկել տեղական և արտերկրյա բուհերի հետ ինստիտուցիոնալ համեմատական գնահատման (բենչմարքինգի) համակարգը (01.2019 – 12. 2019):

Գործողություն 6. Բարձրացնել սովորողների ներգրավվածության արդյունավետությունը մասնաճյուղի կառավարման գործընթացներում (01.2016 – 12. 2020):

Մասնաճյուղի ուսանողները մասնակցում են նրա կառավարման տարբեր գործընթացների, մասնավորապես ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կազմի 25%-ը տարբեր ֆակուլտետների ուսանողներ են (8 հոգի), նրանք ֆակուլտետների գիտական խորհուրդների անդամներ են, ներգրավված են կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացում, մասնաճյուղի ինստիտուցիոնալ ինքնագնահատման իրականացման գործընթացներում և այլն:

Հետևաբար, նրանց առաջնորդության, տեսակետներ արտահայտելու, առաջարկություններ անելու և հինավորելու կարողությունները զարգացնելու համար կազմակերպվում են համապատասխան դասընթացներ, սեմինարներ, թեմատիկ-քննարկումներ, բանավեճեր: Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ԻՄ ուսանողական խորհրդը կազմակերպել է «Ինչպե՞ս հասնել հաջողության» թեմայով դաս-միջոցառում, «Վախի վերահսկումը հանրային ելույթների ժամանակ» և «Ուսանողական կառույցների դերն ու նշանակությունը» թեմաներով քննարկումներ, «Ժամանակի կառավարում» թեմայով սեմինար՝ բարձրագույն կրթության կազմակերպման փորձագետների մասնակցությամբ, Մարդու իրավունքների և հանրային քննարկումների վերաբերյալ եռօրյա դասընթաց՝ ՄԱԿ-ի ազգային ասոցիացիայի համագործակցությամբ, «Ուսանողը որպես հասարակության շարժիչ ուժ» թեմայով էսսեների

մրցույթ: Մշակել են ուսանողների հասարակական ակտիվության գնահատման սանդղակ, մշտապես կազմակերպել են հանդիպումներ մասնաճյուղի տնօրենի հետ՝ քննարկելով ուսանողական ինքնակառավարման զարգացման ու ակտիվացման, բուհական և կրթական ոլորտի հիմնախնդիրների և դրանց հնարավոր լուծման ուղիների վերաբերյալ հարցեր:

Խնդիր 8.4. Ապահովել համալսարանական գործընթացների թափանցիկությունը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:

Գործողություն 1. Մշակել էթիկայի սկզբունքներ և բարեվարքության կանոններ մասնաճյուղի աշխատակիցների և ուսանողների համար (09.2018 – 12. 2018):

Գործողություն 2. Մշակել և իրականացնել կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների նոր ծրագիր (01.2016 – 12.2020):

Գործողություն 3. Բարձրացնել ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը, բարձրացնել կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակը (01.2016 – 12.2020):

Ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկության, կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ ուսանողների

իրագրվածության մակարդակի բարձրացման համար մասնաճյուղում կիրառվում են մի շարք մեխանիզմներ:

Առաջին ամենամատչելի, հասանելի և տեղեկատվության տրամադրման թափանցիկ միջոցը մասնաճյուղի կայքն է, որում տեղադրված են ուսանողների գիտելիքների գնահատման ընթացակարգերը, յուրաքանչյուր ֆակուլտետի համար տեղադրված են ֆակուլտետում իրականացվող կրթական ծրագրերի մասնագրերը և կրեդիտային համակարգով ուսումնառության կազմակերպման ուղեցույցները:

Ուսանողների իրագրվածությունն ապահովում են ուսումնական խորհրդատուները, համապատասխան կրթական ծրագրի պատասխանատուները, ՈԻՄՎ ներկայացուցիչները, որոնք մշտապես կազմակերպում են հանդիպումներ ուսանողների հետ, պատասխանում նրանց հուզող հարցերին, մանրամասն բացատրում գործող գնահատման համակարգի առանձնահատկությունները:

Իսկ ամենաարդյունավետ մեխանիզմը դա դասընթացների փաթեթներն են (պորտֆոլիոները), որոնք տրամադրվում են ուսանողներին: Նրանք ներառում են ուսանողների գնահատման դասախոսի ռազմավարությունն ու մարտավարությունը, դասընթացի կրթական վերջնարդյունքներն ու ըստ վերջարդյունքների ուսանողների գնահատման չափանիշները:

Ուսանողների, դասախոսական կազմի և մասնաճյուղի ղեկավարության հետ տարբեր հանդիպումների ժամանակ քննարկվում են ուսանողների գիտելիքների գնահատման նոր արդյունավետ մոտեցումների վերաբերյալ հարցեր:

Կարևորելով մասնաճյուղում ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման գործող համակարգի դերն ու նշանակությունը, գիտելիքների գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից որպես հետադարձ կապ օգտագործելու անհրաժեշտությունը և գիտելիքների արդյունավետ գնահատման հնարավորությունն ու արժանահավատությունն ապահովելու նպատակով մասնաճյուղի Գիտական խորհրդի 2017թ.-ի փետրվարի 11-ի թիվ 22/10 որոշմամբ և տնօրենի 15.02.2017թ. թիվ 29Լ/1 հրամանով մասնաճյուղում ստեղծվել է ուսանողների գիտելիքների գնահատման կարգը փոփոխող հանձնաժողով, որն ուսումնասիրել է ուսանողների գիտելիքների գնահատման ԵՊՀ մոտեցումները, ժամանակակից չափորոշիչները, պրոֆեսորադասախոսական կազմի ու ուսանողների առաջարկները և մասնաճյուղի 09.09.2011թ.-ի համապատասխան կարգում կատարել է փոփոխություններ (ԵՊՀ ԻՄ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը՝ ԳԽ 10.24.2017թ.):

Գործողություն 4. *Բարձրացնել աշխատողների իրագրվածության մակարդակը համալսարանական գործընթացների վերաբերյալ, մեծացնել հրապարակայնությունն ու թափանցիկությունը մասնաճյուղի կառավարման համակարգում (10.2016-05.2017):*

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրության և մասնաճյուղի կանոնադրության համապատասխան, ինքնակառավարման սկզբունքի հիման վրա, մասնաճյուղի խորհրդի, գիտական խորհրդի և տնօրենության գործառույթների

իրականացմամբ, ինչպես նաև կարևորագույն հարցերի լուծման ժամանակ կոլեկտիվին ներգրավելու միջոցով, որն ամրագրված է համապատասխան կարգերով: Կառավարման համակարգը համապատասխանեցված է մասնաճյուղի ռազմավարական ծրագրի նպատակներին և խնդիրներին: Բոլոր խնդիրների կառավարումը բաշխված է համապատասխան ստորաբաժանումների միջև, որոնց նպատակն է բարձրացնել վարչական ծառայությունների արդյունավետությունը, բարելավելով կառավարման համակարգի տեղեկատվությունը, ապահովելով տվյալների բազաների փոխկապակցվածությունը և ստորաբաժանումների համագործակցությունը:

Մասնաճյուղի գործունեության վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է մասնաճյուղի կայքում: Կայքում լուսաբանվում են մասնաճյուղի տնօրենության նիստերը, Գիտական խորհրդի նիստերը, նրա արձանագրություններն ու որոշումները, տեղադրված են բոլոր ստորաբաժանումների գործունեությունը լուսաբանող փաստաթղթերը (աշխատանքային պլաններ, խորհրդատվական ժամանակացույցեր, հաշվետվություններ, ուսումնասիրությունների արդյունքներ և այլն):

Գործողություն 5. *Հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի կատարողականը պարբերաբար քննարկել մասնաճյուղի գիտական խորհրդում (12.2016-12.2020):*

Գործողություն 6. *Մասնաճյուղի կայքէջի զարգացում՝ ապահովելու համար ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը (12.2016-12.2020):*

Կայքէջի միջոցով ապահովվում է մասնաճյուղի ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունն ու հասանելիությունը հասարակությանը, տեղադրվում են բոլոր ստորաբաժանումների և ուսանողական կառույցների գործունեությունն ապահովող բոլոր փաստաթղթերը, կատարվում է նրանց գործունեության ամենօրյա լուսաբանում, աշխատակազմին և ուսանողությանը տրամադրվում են արդիական նորություններ, հայտարարություններ

Ընթացքի մեջ է պաշտոնական կայքի մշտապես թարմացվող և եռալեզու տարբերակի ներդրման գործընթացը:

IX. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՅՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում:

Խնդիր 9.1. Մշակել և իրականացնել մասնաճյուղի միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն:

Գործողություն 1. *Մշակել ԵՊՀ ԻՄ-ի միջազգայնացման քաղաքականություն և գործունեության ծրագիր (01 – 12.2016):*

Մասնաճյուղի միջազգայնացման և արտասահմանյան բուհերի հետ համագործակցության ակտիվացման համար ստեղծվել է Միջազգային կապերի բաժին (ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 10.09.2015թ. նիստում), մասնաճյուղի 08.07.2017թ.-ի թիվ 25 նիստում

հաստատվել է Միջազգային կապերի բաժնի կանոնադրությունը, որում ներկայացված են բաժնի խնդիրները:

Գործողություն 2. ԵՊՀ-ի մասնակցությամբ քայլեր ձեռնարկել միջազգային ծրագրերում Մասնաճյուղի ներգրավման համար (01.2016 – 12.2020):

Գործողություն 3. Մասնաճյուղի կայքէջը դարձնել եռալեզու և միջազգայնացման գործընթացների նպաստող (01.2016 – 12.2020):

Ընթացքի մեջ են կայքի եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) տարբերակի գործընթացները, արդեն 3 լեզուներով ապահովված են կայքի որոշ ծառայություններ, գործընթացը շարունակվում է:

Գործողություն 4. Իրականացնել միջազգայնացման ոլորտում ներգրավված աշխատողների վերապատրաստում:

Գործողություն 5. Իրականացնել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի դասախոսների, աշխատակիցների և ուսանողների՝ օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման ծրագիր (01.2016 – 12.2020):

Գործողություն 6. Օգտագործել ԵՊՀ-ի հնարավորությունները Մասնաճյուղի վերաբերյալ Հայաստանում և այլ երկրներում տեղեկատվական նյութերի ստեղծման և տարածման առումով (01.2016-12.2020):

Խնդիր 9.2. Զարգացնել միջազգայնացման գործընթացները կրթական ոլորտում:

Գործողություն 1. Ներդնել թիրախային օտարալեզու ուսումնական մոդուլներ և ծրագրեր (09.2016 – 06. 2020):

Այս գործողության շրջանակներում որոշ կրթական ծրագրերի դասընթացներ ներդրվել են օտար լեզվով: Տնտեսագիտության ֆակուլտետի «Տնտեսագիտություն» կրթական ծրագրի 2016-17 ուսումնական պլանով իրականացվել է կամընտրական մեկ օտարալեզու մոդուլ (գործավարություն՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, հիմք՝ Բակալավրի ուսումնական պլանը, հաստատված 05.04.2016թ.): Գործընթացը դեռևս գտնվում է նախագծման փուլում: Նախատեսվում է 01.09.2017թ-ից գործող բոլոր կրթական ծրագրերում ներդնել մեկական օտարալեզու մոդուլ, 01.09.2018թ-ից՝ երկուական օտարալեզու մոդուլ, 01.09.2019թ-ից՝ երեքական օտարալեզու մոդուլ, 01.09.2020թ-ից՝ չորսական օտարալեզու մոդուլ:

Գործողություն 2. Հիմնել ամառային կրթական, մշակութային կամ ճանաչողական ծրագրեր:

Գործողություն 3. Օգտագործել օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ ԵՊՀ-ի կապերը՝ համատեղ ծրագրեր իրականացնելու համար:

Գործողություն 4. Աշխատողների և սովորողների շրջանում բարձրացնել ակադեմիական շարժունության ծրագրերի մասին իրազեկվածությունը:

Ակադեմիական շարժունության, փոխանակման ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը մասնաճյուղի աշխատակիցները և ուսանողները փնտրում և ստանում

են ԵՊՀ կայքից: Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղից արտասահման գործուղումներ չեն իրականացվել:

Գործողություն 5. *Կրթական ծրագրերի վերակառուցում՝ շարժունությունն ապահովելու նպատակով:*

2016թ.-ից մասնաճյուղում սկսված է բակալավրի կրթական ծրագրերի վերանայման գործընթացը, շարունակվել է նաև 2017թ.-ին: Վերանայման ժամանակ պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների շարժունությունն ապահովելու համար կրթական ծրագրերը վերանայող (կազմող) աշխատանքային խմբերը իրականացրել են հայաստանյան և արտասահմանյան առաջատար բուհերի համապատասխան կրթական ծրագրերի հետ համեմատական վերլուծություն (բենչմարքինգ): Նախ առաջին հերթին մասնաճյուղում իրականացվող կրթական ծրագրերի զգալի մասը իրականացվում է նաև ԵՊՀ-ում, հետևաբար կրթական ծրագրերը համահունչ են ԵՊՀ-ի կրթական ծրագրերին: Այլ բուհերի կրթական ծրագրերի հետ իրականացվում են համեմատական վերլուծություն ըստ նրանց կառուցվածքի, կրթամասերի միջև կրեդիտների բաշխվածության ծրագրի նպատակների և խնդիրների, դասավանդման և ուսումնառության մեթոդների, գնահատման մեթոդների, ծրագիրն իրականացնող դասընթացների ցանկի և նրանց կրեդիտների մասնագիտության դասընթացների բովանդակության համադրելիության:

Համեմատական վերլուծության համար դիտարկվում են Երևանի պետական մանկավարժական համալսարանի և Վանաձորի պետական համալսարանի, Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի, Երևանի գեղարվեստի ակադեմիայի, Սանկտ-Պետերբուրգի ինժեներա-տնտեսագիտական համալսարանի, Տուրիզմի և սերվիսի ռուսական պետական համալսարանի և այլ բուհերի համապատասխան կրթական ծրագրերի հետ: